





39/99

Տ - 37 ՊԱՆԴՈՒԽՏ

Վ Ա Ն Յ Ի Ն

ՍՏՈՒԳՎՈՄ Է 1981 թ.

— 8\*3 —

ՆԱՄԱԿՆԵՐ, ԵՐԳԵՐ,  
ԱՌԱԾՆԵՐ, ԱՌԵՂԾՈՒԱԾՆԵՐ

6094  
A 6224

— 8\*3 —

ԳՐԵՑ

ԱՐԻՍԱԿԵՍ ՎԱՐԴԱԳԵՏ ՏԵՐ ՍԱՐԳՍԵՆՑ

— 8\*3 —

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ ԵՒ ՄՐ ՏՆՏԵՍԵԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՏՈՒՆՄԱՆՍՈՒ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԱՎՐԵՍԻԱ

— 1875 —

КНИЖНИКЪ

• Г. А. МАТВЕЕВЪ

Вельяминовъ № 14

ТИФЛИСЪ.



Վարդապետ .

Մտադիւր սիրով կարգացի Ձեր մի քանի սլանդիստի նամակները , որ մեր Հայրենեաց պանդուխտներու և նոցա ընտանեաց կեանքին սրտառուչ նկարագիրն է : Գեղեցիկ , օգտակար , և դովելի է ձեր այդ ձեռնարկութիւնը , որ թէպէտ փոքրիկ , այլ իւր մառարկայով շատ մեծ նշանակութիւն ունի . մանաւանդ երբ դուք գրած էք Վասպուրական ժողովուրդին լեզուով , ժողովուրդին ոճով , ժողովուրդին հասկացողութեամբ : Թէև ուրիշ գաւառաց և առաւել գաղթական Հայոց համար՝ մեր հայրենեաց ժողովուրդին բարբառը , այլ և այլ ոճերու կարճ և սուր դարձուածքները , իբրև անլուր , անձանօթ և օտարաձայն թուին :

Բայց Հայկական լեզուն կրկտող բանասիրաց առաջ շատ յարդի ու պատուական է ձեր գրական նուէրը , շատ ճարակ և նիւթ պիտի մատակարարէ նոցա , որք միշտ ուշադիր և հետամուտ են մեր արմատական լեզուին հնութեան : Երանի՛ թէ լեզուաբանութեան անխոնջ մշակները օր ըստ օրէ շատ-

նային մեր գրական դարաստանին մէջ, ու պարապէին ժողովուրդին լեզուին հարուստ ճոխութիւնը յերևան հանել, շէ թէ միայն վաստուրական գաւառին, այլ և Հայոց աշխարհին բոլոր գաւառներուն, որպէս զի իւրաքանչիւրին բարբառներ, ոճերը 'ի միասին գալով քննական բովին մէջ, Ազգին լեզուաբան կաճառորդներն կարող լինէին տիրապէ՞ ուսումնասիրել, և լեզուին խառնուրդ ժանգն հալելով և համեմատելով զայն՝ զտէին ու քրոշէին Հայուն բնիկն ու հարազատն, խորթն և օտարամուտն, որով առաւել ևս բարգաւաճէր Արամեան լեզուին հարստութիւն :

Թողունք Ձեր աշխատասիրութեան այս բանասիրականին մասն՝ նկատելով միայն բարոյական մասն և ձեր բարի նպատակը, խիստ արժանաւոր նուէր մի է այդ գործը մեր Հայրենեաց պանդուխտ ժողովուրդին համար :

Անշուշտ, նժդեհ վարդապետ, դուք ևս նժդեհ լինելով՝ նժդեհին ցաւերը կ'զգայք, տեսնալով նոցա տառապեալ կեանքն ու վիճակը : Կը շրջիք ի մայրաքաղաքս և կը մտնէք պանդոկներու մէջ, աչքով կը դիտէք, ձեռքով կը շօշափէք նոցա ամենադառն կեանքին բոլոր հանգամանքները : Յիշելով Աւետարանին բանը՝ պանդուխտ հիւանդին 'ի տես դունացէ՛ք : Հովիւ ու հայր էք, մի՛ գարշիք, դունացէ՛ք, մտէ՛ք մի ժահահոտ սենեակի մէջ :

կը տեսնէք հոն կտրիճ ու քաջալանջ նորա-  
հասակ, նորապսակ մի երիտասարդ մահճին  
մէջ հիւանդ ինկած կը հեծէ. ընտանի հոգա-  
ցող մտերիմներէն ոչ զոք ունի իւր շուրջ,  
ոչ գորովասիրտ ծնողք, ոչ անձկալի ամու-  
սին, ոչ քոյր, ոչ եղբայր, ոչ բարեկամ, ոչ  
ազգական: Նա այնպէս 'ի վերջոյ կը մեռնի.  
անխնամ, անդեղ, անգարման: Հոգեվարքի  
պահուն մարած աչերն այսր և անդր կը յա-  
ծէ. երեակայէ դու, թէ զո՞վ տեսնել կ'ու-  
զէ. . . հոն չեն զինքն լացող ընտանիքը, որ  
մի կաթ արտասուք թափեն մեռած պան-  
դըխտին մահճին վերայ:

Ո՛հ, ո՞վ կը լինի պանդխտին յուզարկա-  
ւոր: Գնա՛ տես դու, դադտողին առաջ կ'եր-  
թայ մի պանդուխտ քահանայ, և ետեէն  
քանի մի պանդուխտ եղբայրները. լուռ կ'եր-  
թան, իսկի շի լսուիր ողբ ու կոծ. պան-  
դուխտներն զպանդուխտը կը տանին օտար  
երկրին ու հողին կ'աւանդեն Բերայի գերեզ-  
մանոցը, որ Վանեցի Գարասէֆէրեան տոհ-  
մին անմահ յիշատակն է, իրրև գերեզմանա-  
վայր օտարաց և գաղթական Հայոց:

Եթէ պանդուխտներու գերեզմանաց վե-  
րայ տապանաքար կամ խաչաքարեր լինէին,  
յորս դրոշմուած լինէր նոցա յիշատակարանն  
ու թուականն, պիտի խնդրէի Քեզմէ, որ եր-  
թայիր հանէիր ու համրէիր մեռեալ անուանց

Թիւերը, Թերևս գիտնայինք ստոյգ թէ քանի՞ հազար և քանի՞ բիւր մեր Հայրենեայ դրախտի սնուցած ծաղիկները թօթախեցան ու թաղուեցան օտար հողերուն ծոցը, զրկուելով իրենց հարց ու սպաւերուն և ընտանեկան գերեզմանաթաղէն: Ես գիտեմ ըղձակերտ կը լինէիր ինձ հետը, եթէ հնար լինէր, պանդուխտ մեռելոց յիշատակաց նշմարանքները գտնել, հին ու նոր մեռելոց միմատեան չինել ու տանել աւանդել Հայրենի որդւոց:

Թողլով պանդխտի գերեզմանքը, շուշտեմ կը շրջիս կենդանի պանդուխտ եղբարց մէջ. և ո՞ւր են նոքա, կը տեսնաս աւասիկ Պօլսոյ փողոցներում լի են, ուր որ երթաս՝ հոն կը գտնես զՎանեցին, մեր Հայրենեաց ազատ դաշտի ազատ աշխատաւորներն. աստ բեռնակիր եղած չտրաչար ծառայութեամբ կը տանջուին: Պահ մի կա՛ց, կարեկից աչքով դիտէ այդ հուժկու բազուկ, լանջաբաց, աննման կտրիճները, համակ ծանրատար բեռանց տակ ճնշուած են. բա՛ց ու տե՛ս նոցա քամակներ և ուսերը դիա՞րդ բրտացեր են բեռներէն ու հեծան ձողերէն: Գու թէ կարես հանդուրժել, դիտէ միանգամ նոցա շնչահատ ճնշումն, ճակատին դառնալէժ քրտինք, ՚ի դժուարութենէ պարտասեալ անձն, ո՛հ, կըսէ ու չափէ թէ քանի՞ տաժանելի աշխատութեան դատասպարտուած են մեր Հայ-



րենեաց անբախտ որդիքները :

Գորա գիտես և թերևս կը ճանաչես շատերը , որ մեր Վասպուրական դաշտերու վաստակաւոր մշակներն են , որք սիգարար մանգաղն 'ի ձեռին, դերանդին յուս կ'երթային ուրախութեամբ 'ի հունձ . աւա՛ղ , դոցա փոխանակ կը կրեն 'ի յուս բեռնաբարձ վիթխարի ձողերը , և հարօրի մաճին տեղը՝ գերանափայտեր , կակուղ ու կանաչ մարգագետնին տեղ՝ փողոցի ցեխոտ սալայատակներն : Զը գիտեմ , Գու կը ճանաչես՞ մեր քաջալանջ թորոս Սպարկերտցին , որոյ համար կը պատմեն թէ՛՝ ոտքը սահելով ինկաւ բեռան տակ , ջախջախուեցաւ մի ոտքին սրունքը , վիրաբուժ սղոց դրաւ կտրեց զայն իբրև ծառի ճիող մի . թորոս մնաց միտանի , խեղանդամ : Գիտե՞ս , մեր քաղաքակիրթ տշխարհին վիրաբուժներու շնորհը այսչափ է , որ կտրել միայն սորված են . ո՞ւր մեր վիրակապ ճարտար քիւրտերն , որ կտտրուածները կապելով՝ դիտեն անդրէն քաջապէս առողջացընել : Ո՛հ , թորոս միայն չէ , քանի՛ քանի՛ թորոսի նման առոյգաբարձ հասակները բեռներու տակ ջախջախուեցան և դեռ կը ջախջախուին :

Կը տեսնա՞ս նաև հրապարակաց անկիւնները կոյտ կոյտ նստած են մեր բեռնակիր եղբայրներն , որոց բազմոցներն իրենց հա-

մետներն են , միթէ դոքա Վանայ դաշտերուն այն խոնջեալ մշակներն են , որ բանթողի ժամանակը աղբիւրներու գլուխ , և ցորենի բրգաձև դէզերուն հովանեաց տակ նստած կը հանգչին և մանգաղները կը սրեն , մերթ ևս գլուխ՝ նոցա տակ դնելով՝ անուշ քուն կը քաշեն :

Վահ , հազար վահ , այժմ ո՛վ կը վարէ դոցա տեղ , ո՛վ կը ցանէ , ո՛վ կը հնձէ , մեր Հայրենեաց դաշտերն ամայի մնացած են . նորա հողասէր վաստակաւոր մշակները , ինչպէս կը տեսնաք , օտարութեան մէջ մաշուելով կ'սպառին և կը մեռնին , Հայրենեաց կարօտով , հողին կարօտով , ջրին կարօտով , հացին կարօտով , կը մեռնին ընտանեաց կարօտով , անձկալի ամուսնեաց կարօտով , քաղցր որդեկաց կարօտով , սիրելեաց ու բարեկամաց կարօտով :

Ո՞վ կը պատմէ՝ և կը տանի պանդխտին մահուան լուր , ո՞վ կը գրէ նոցա դուժալից սև գրերը . Դու այդ սև թուղթերուն դրպիրն ես , որ մի կողմէն պանդուխտներու մահ կը պատմես , և միւս կողմէն ընտանեաց ողբն ու կոծ , որդեկաց որբութիւնը , այրի մնացած ամուսնոյն սև բախտ կ'ողբագրես :

Թէ՛ պանդխտին կեանք , թէ՛ նորա ընտանեաց կեանքն երկուքն ևս մի քան զմի դառնադոյն են , երկուքն ևս ողբոց ու ցա-

ւոց տեսարան կը բանան Ձեր աչքին առաջ . մտէ՛ք ու շրջեցէ՛ք այդ վշտալի տեսարանին մէջ , երբ Գուք ևս պանդուխտ էք , և պանդրխտին չարարաստիկ կեանքը տեսնաք իսկ ձեր աչքով , մտաթռիչ և զգայուն երեւակայութեամբ վերանալով 'ի Հայրենիք՝ հոն ևս ընտանեացն ապերջանիկ կեանքն և սրտամաշ կարօտութիւնն կըսեցէ՛ք թէ քանի՞ ծանր , քանի՞ դառն ու դժուարին է : Արչալի ձեռընհասօ՛նք , հանէ՛ք ընտանեկան ցաւոց նկարագիրն և դրէ՛ք պանդխտին դիմաց , թո՛ղ յիշէ ու չմոռանայ ընտանիքը :

Վստահ եմ , որ մեր պանդուխտ եղբայրները բարոյապէս օգուտ քաղեն Ձեր այդ նախախայրիք ընծայէն , որոյ վարձքը կ'ընդունիք դուք թէ՛ յերկնուստ և թէ՛ պանդխտին ընտանեաց օրհնութենէն , որոց համար կը տքնիք յուսով՝ թերևս կարենայք փոքր 'ի շատէ սրբել պանդխտի ճակատէն քիբտն , աչքէն տրտունք , ընտանեաց հառաչանքն ու հեծիւն , զորս Վասպուրականէն 'ի Վասրոր կը բերես և Վասրորէն 'ի Վասպուրական կը տանիս :

Աղօթենք ընդ քեզ , որ Յակովբայ տան ցրուեալ որդիքները ժողովող Աստուած՝ նոյն իւր ամենահաս ձեռօք ժողովէ Հայկայ տան պանդխտեալ որդիքները , երթան հանդիսն Հայրենեաց թղենուոյն և որթին հովանեաց տակը

## Հայրիկ.

Մտադիր սիրով կարգալու շնորհ արած էք Պանդուխտ վանեցւոյն սգապատում նամակներն, և իբրև օգտակար, գեղեցիկ և գովելի ձեռնարկով՝ փութացեր էքնորա տրխուր ճակատն պսակել Ձեր իմաստալիր ու սքանչելի նամակաւ, որ ո՛չ այնքանւոյ գովութեան՝ որքան աստակից կարեկցութեան պէտքն ունի ինքն, և համայն իւր եղերերգական առարկայն, վասն զի ո՛չ աննման ազգասէր Խաչատուր Աբովեանի երգասիրած վէրք Հայաստանի Հայրենաբարբառ վէպի ճօխ գրչին ճաշակն ունի և ո՛չ հայրենասէր հօրդ սրտագրաւ հրաւիրակներու անուշութեան համն ու փայլն, որ սրտեր զեղու նրւիրական զգացմամբ, որ սէր և շունչ տայ իւր արիւնալիր էջերովն, այլ արդ նշդեհին նամակներն զմէնն էլ մըրմուռ ու սուգ, աղէտ և արտասուք կ'պատմեն, սեռուր սրտերու և տարապարտ զոհերու ուրուագիծերն կառնեն կբերեն առ Ձեզ, պանդխտութեան թունաւոր բաժակաւ իլին:

Ա՛հ, նշդեհութեան շարաշուք դառնութիւն իսպառ թունով շաղախեր է մեր վաս-

պուրական աշխարհի պանդուխտ եղբարց սիրտն ու կեանք : Ի մօտոյ դժբաղդաբար դիտած եմք շարունակ նոցա տառապակիր կենցաղոյն հոգէմաշ ու կորստաբեր դրութիւնը , որ դաժանագոյն դահճէմ՝ առաւել կ'սպառնայ նոցա բարոյական կեանք կապտելու : Արչըջիմք միշտ ու կ'տեսնեմք անոնց դժնդակ ու անհանդուրժելի վիճակ , տարապայման ու սոսկալի կեանք , որ յոյժ ծանր է , որ կծու ու լեղի է , որ անտանելի և անդարմանելի . այո՛ կենդանի են և կորովի , բայց կեանքէ զուրկ են ու գերի , իբրև բարւոք քաղաքացի , ո՛հ , չունին նոքա վսեմականն ու բարոյականն և ոչ էլ նիւթականն : Բաղմիցս մտած ու կարեկցութեամբ դիտած եմք ցաւ 'ի սիրտ նոցա պանդուկն ու գետնափոր հանդստավայր տօմիկներն , որք շօշափելի կերպով մութ և խաւար են և գէճ և գարշահոտ և կեղտոտ : Այո՛ տեսանք նոցա երկաթամաշ տառապակրութիւնք և սարսուռ տըվաւ վէրմե , ու սրտմտութեամբ անէժք կարգացիներ այն անագորոյն ձեռաց որ անգթաբար արմատախիլ արաց մեր կանաչ կտրիճ ու աննրման երիտասարդներն իրենց բնիկ Հայրենեաց գրկէն , զրկեց զիրենք մեղրի անուշաւթենէն , կաթին քաղցրութենէն , որդեկարօտ ծնողաց ծոցէն , նախնական փառքէն ու երջանիկ կեանքէն ու բերաւ մատնեց

օտարութեան ու գերութեան և սրա-  
մեռ ճնշումներու ներքև, դժուարընտել ըզ-  
գացումներու տակ կընկճուին հետզհետէ ու  
կսպառին մեր Հայրենեաց կորովի լաճեր,  
ա՛խ, վ՞՞՞՞վ կարնայ սլատմել ինոնց կրած վիշտն  
ու նեղութիւնը, վ՞՞՞՞վ կարնայ նկարել նոցա  
սրտեռանդ ոգւոց անձուկ ու սրտմաշուքն,  
և ինոնց անտէրունջ ընտանեաց կրած զբո-  
կանքն տառապանքն և արիւննազանգ կեանքը՝

Տեսանք բազմիցս մեր Վասպուրական  
աշխարհի նորազարդ ու կարմրափայլ և ա-  
ռոյգ երիտասարդներ՝ որք թալկացեալ կը  
հեծէին հիւանդ պառկած, և նկատելով նոցա  
աղիողորմ ակնարկ և լսելով ինոնց կերկերեալ  
ձայն, արիւն կ'կաթէր իմ սրտէն, որոնք  
վերջի ճգնաժամուն չէին կամենար իրենց  
պարակեած ու ցամաքեալ տկոնողիքն խփել  
սիրելեաց կարօտոյն, անձկալեայց սիրոյն,  
ծնողաց գորովոյն, նաղելեաց, ընտանեաց  
և որդւոց քաղցր տեսոյն անձկայրեաց մը-  
նալով:

«Շուշտեմ, կասէք, կ'չրջիք պանդուխտ  
եղբարց մէջ. և ո՞ւր նոքա», — մի՛ ստիպէք  
դիս որ թսեմ ո՞ւր են նոքա. և չեմ սիրեր  
դարութիւն անել նոցա, որք օտարութեան  
մէջ վարատեալ, ծանրատար աշխատութեամբ  
և վշտակրութեամբ 'պարտասեալ անձկանօք  
կ'մաշին, անկարեկից կ'մեռնին իրենք և ի-

րենց թշուառ ընտանիքն , չեմ ուզեր նոցա  
 ապաժուժ սև գրերու քարտուղարն լինել :  
 Ես էլ պանդուխտ եմ . պանդխտին կենաց  
 հանդամանք , նոցա ընտանեաց կրած զըր-  
 կանաց նախապատճառ առ թիթները մի' ստի-  
 պեր ինձ խոր մտնել ու հրապարակ հանել  
 զանոնք , վասն զի խոր անդունդ մի կայ իմ  
 առաջ , որ արեան ծով է , որ անտակ է . . . .

Առայժմ , նժգեհիս այս խուն վաստակ  
 որ մեր կորից կորուցի եղբարց կամ ազգային  
 ժամանակակից պատմական կենաց մի ամե-  
 նատխուր պատկերն է , և որ կ'ըստանդակէ  
 Գողթան երկրին տրկեց վասպուրական աշ-  
 խարհի աշուղ ժողովրդեան խաղերգերու մի  
 քանի նշխարներն՝ դարաւոր հնութեանց հող  
 մոխրէն [հանելով Ազգային գրականութեան  
 գրասեղանին վերայ դրի . Ձեզ կ'նուիրեմ  
 Հայրիկդ իմ , որպէս սիրատենչ Հայրենեաց  
 հին և նոր աշղներաց քէօլրած ու պէօլրած  
 սրաերաց մրմունջն , թողլով բանասիրաց ա-  
 կըմբին պանդուխտ վանեցւոյն լեզուն , ճը-  
 կուն ու ճոխ դարձուածքներն իմաստասիրա-  
 բար հետազօտել . իսկ ես մնամ կոտրած  
 սրտերաց կոտրտուած շընկիւն :








КНИЖНЫЙ МАГАЗИНЪ  
Г. А. МАРТИУСЯНА

Вельяминовская, № 14

ТИФЛИСЪ.



Պատճառներն առաջին ճամբորդութեան ,  
Տրամադրանքն իւր եղբոր գրած գիր :

## ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Նաղերի Ախպէր .

Չըմեռն էր էրունք , թաշխնքը զմէնն  
էլ տափերին ինննց բոնին մէջ ցրտու-  
ախուն : Մինք էլ ինչ բան ունինք՝ բան-  
թող արիւրինք : Խայթուխ , քիչմ՝ թափ-  
թափայ , քիչմ՝ փայնաքիռչ , քիչմ՝ օղիկ  
ու քիչմ էլ տղմաղիւղ ու պատպածիկ  
թխեր էր՝ որ էսօր աղօթբան բացվի էլ-  
նիմք ճամբախ : Յուրտ , սըլուլ , ձիւն ,  
պիւք , չորս տեսէն կ'կ'ան ու կ'սաան .  
սկուն լալու լալու ձէն կը խանին , որ  
մարդ կ'զախախորի ու լեզուն կ'փէտնայ  
մէջ բերնին : Մեր տանտաղիկ խաթմա-  
մէն խաստ կօռտիլմ խաէիր տանթփե ,  
թօնէր կպուցե , մուխ պալախնցուցե՝  
տան մէջ մըթ կօխե , որ մատ մլես մար-  
դու աչքը չտխնայ , առիքը կպիրի տախ-  
տին , տուն մուն իրար խառների . ու  
թէ որ պակազ ըրած քամին , անձրե ,

ձիւն , կարկուտ լեցուցերի ցանի տան  
մէջ , քիակուռ , փթիւր , ցան , պըտըտուր ,  
խըռընտատ , կիազ , կազալ , ժած , ժիխ  
տղկիրի , ինոր խամար թօրվան շէնքը  
չիպէօլքրե . ակը լցվե ու ակիւկէն կոտրե .  
ինոր ապով պթիւր կ'ծխրկտայ ու կէշ  
կէշ խոտ կ'խանի . փարատիկով պէօր-  
պիոնք կ'զարնի շենե , կիւհնոցով կ'զար-  
նի շենե , մաշկալ կ'կպուցի կ'անի շէնքի  
տակ' կտորմ' կ'վաթայ էլմ' կ'ընցնի ու  
կ'ծխայ . անթրոց կ'առնի թոնէր կ'խառ-  
նի , խառճերկթին կ'տէպնի պուտուկ ,  
ճլօրնիր կ'եռկծան , շուռ կ'առնին կի-  
նեն թոնէր , ծիռք , սաք , քիթ , բե-  
րան իրար աճրզճվերի . ճիթ , պիթ լիցվե .  
վէր դիտուն պրծի' կ'ուզին , էլ դլուխ  
ճակիցին է չիւմ' խաղար ճօրով թոնէր  
էջաւ :

Վաւ'դ վաւ'դ սեղան դրին , մեր դիւր  
դրկեց , բարեկամ' ու ինամիւք մըջման  
պէս աչքիսիոց կեախ էկան , կէօլէօնվան .  
վի'ր խացի մաղտոյ կոյ , մէկ էրկու  
պրաիւճ կեր լրմլրմիցի , էրկու կուռիկ  
էլ էջի դինի կանծիցե . աման խելքս  
վէրէս չի . չեմ' դիտե թէ տի'ւր եմ' : Համ'  
ուրախեմ' համ' մալուլ . ես էլ չիմ' դի-  
տե թէ ինչխեմ' : Ա՛հ , վո'վ կարնայ իմնալ  
իմ' կտրտված սրաի խոցն ու ցաւը , իմ'

անուշ զաւակներաց լացն ու մղկտալ . ա՛խ  
իմ՝ անկալատ զաւակներս , ձեր խէր կ'էր-  
թայ կարիպ էրկիր . ա՛խ անտէր պիտի  
մնայք . անխէր ու անսէր կ'մնայք . ա՛խ ,  
տիւն էլ իմ տան անդիվար , տիւն էլ . . .  
էօֆ սիրտս մրկաւ , էլ չե՛մ կարնայ է . . .

Սիրտս ու թոքս կատղած ծովու պէս  
փրփրա՛ց ու դիզացաւ , խոզիս խուրու-  
վու պէս խալաւ ու մրկաւ , էն աիր որ  
իտին կաց բարոյն կ'ասէլինք : Տղէ յնե-  
կաց քիչմ չամիչ պնտուկ տուինք , ձէ-  
ներք կրիցինք : Ա՛խ , վո՞վ կարնայ էն  
մառնի քիւնճ կայնողի աչիչ թամիած  
մարկրտէ սըռսուռ արտսունք կտրե ,  
ա՛հ , ախու ձէն չխանե , սիրով մաշվե .  
իւր արունի պէս կծու արտսունք վազկան  
զեաի նման կ'թափի վէր իր ճալահիր  
լրիսին , իրիսի վիրվէն սև հողի վէրէն :

Միկ խամար շատեր շէկուած խաւ դար-  
ձիրին . ե՞ս խօ՛ , դմէն կուրիսերի , էրկ-  
նո՞ւց մէջնեմ , թէ դեանուց . խելքս վէ-  
րէս չի . վռազնալէն համան քանիմ կլոր  
օղիկ , մէկ—էրկու կեատայ , պրլիթմ էլ  
փոխինդ վաթիւթիցի որ դնիմ բիւ .  
էրթալս լրիցին չորս տեխէն դարնան է-  
րամի պէս էկան լցվան վէրէս . որք կ'ա-  
սի , էս դիրք տար : Որք կ'ասի , էս պա-  
նիրք տար : Որք կ'ասի , էս ձիւկք տար :

Որք կ'ասի, էս ծիրնի չիրը տար: Որք  
 կ'ասի, էս մուժպանան տար՝ ու որ'ն էլ  
 կ'ասի էս ճուճուղիկը տար մեր թամար-  
 զիւ ու կարօռ տղէ յեկայ: Էլ ընունա  
 բերան մնայ բայ. չեմ կարնայ տէպնե  
 սրտերայ. որն էկաւ բան մը ճխթից  
 ճվալս, սկում լցվաւ սկում լցվաւ որ  
 կիախնէր ճուժվէր. աչք վերեսս անչամ  
 պաքիցին, որ կիախն էր լալլարվէր. որն  
 ճակատս կ'ողաքի, որն աչքերս կ'ողաքի,  
 ես կուղի կէտին սլատուվէր էրթի ինե,  
 էրկէն չանենք, տաւթացինք, ոժիցինք  
 մէջկներէն էլանք. ձին բիրինք, բիւն  
 բարձինք, չորուխ խակիանք լ'ալլա-  
 ցինք տիւրս էլանք. կայէք բարս լ ա-  
 սելն էլ մուշսնք. համան նակիաս ոտն  
 թռանք ձիւ վերէն, մանկեալ ձիւ կօ-  
 լան ու վուկ թիւլէր, վաւան տիւ վու-  
 լանես ման մէնեք սըռջվի ու մի'նք էլ  
 տըրբիայէն իյ'անք դէտին. չորս տեխէն  
 ասին, Աղք թափաւ աղք թափաւ էլսոյ  
 սանտի վերէն էլմը խեժայ, մէրս բերեց  
 ճիոչ կառայիկմ ջիւր՝ թափեց վոշնի  
 դուռ. էլ չկայնանք թօրս ու ընկերնի-  
 բացս խեռ դնացինք Ավանց:

Խասանք վայլայ Բ-Բ-Բ:

Ըստեղ քիչմ խիւկիւ տսունա՛ւ թէ որ  
 կարնաս. ցուցանքի՞ կ'անսնաս, ինչի՞.

ևս կ'ասիմ' տըսնըխինգ. խարիւր, դու  
ասա՛ տըսնըխինգ. խարիւր խաղար, բիւր  
անտար մարդ. ճիտչ ու պատիկ, իրիկ  
կնիկ փէօթակի բէրնի տղէղնիբաց պէս  
կ'կըժ վըժան. հայ վա՛խ ասի մէջ մտացս.  
տաք, պաղ քըրաինք տըւեց վէրէս.  
սկուն ինչ պօպօզան կատալիկմ' եռման  
ջուր լիցուցին վէր ծի, եա չէ՛ կրակցած  
շիշմ' դնին վէր սրտիս սակատս տաղին,  
մէյմ' խորանթը խորանթը մտած իցի ու  
ասի՛, վա՛յ վէր ծի, վա՛յ վէր մեր դըլ-  
խուն, էս կանտար մարդ իկիր կէօլէօն-  
վերեն ստեղ, հմէնքն էլ խայ քըրիստոնայ  
են. խոնց մէջ դեղու խամար ինչի՞ մէկ  
խատ ֆէ-բ, մէկ խատ Տ-ճէկ, եա չէ  
մէկ Նշէ չգտնուեր նմուշ տէյլի. ինչի՞  
խամար էս խայեր բսկնայ բիոնավեր էլեր  
կ'էրթան. Ծի մի՛ մեղդրէք. եռանտ  
օր, մեր խանութ գիողեր լօպկիցին,  
խօրօխպէրս մեռուցին մեր տուն պրիշակ  
էլաւ. խօ՛ խոնց հմէնին էլ միե պէս  
չարին. . . . թալան չտըվին, կողոպուրտ  
չտըվին. . . . ինչի՞ խամար ծի պէս ճղա-  
կըտոր էլեր կարիպ կ'էրթան. Ծիյծի  
բսկնայ կ'ասի ու կ'զարմանի, Չէ՞ խոնք  
Ստամպէօլ չին էրթայ, պալքի իւրիշ  
բանի խամարեն իկե ժողվւփտուերին  
ըստեղ. խոնք հմէնն էլ թիօր կարիպու.

Թան էրթան, իսոնց տուն, սեղ, կնիկ, տղէն վ՞վ պիտի պախի. էրկիր տառ. տիկվաւ: Մեր խայկ ու Արտաչէս Թագաւորին սկնէմ շատ մարդ չկէր, ասիցի ու ձիէն իջայ տակ, ի՞նչ տիսնամ վէրէդ բարի աղէկի, մէր մանուկն ուրացերի, տիւֆ, նաղարայ, տուտուկ, զուռնայ, արաղ, գինի մէկ տեխէն կլիցուցէն, կ'խմեն ու կ'խաղան, գլոխնին էլերի նաղարայ, փորերնին տիւճիկ, իրենք զուռնայ, քիանի նաֆաս կայ վէրէներ կը պօռան. «Մօ՛ շէ՞ որ մինք խայինք, գինի խմենք, քէֆ անենք. սպարտքն մէկն էրկու Թո՛ղ էլնի, ես Աստուածն ապով էրկու տիր գնացի Ոտամպէօլ սպարտքս զմէն էլ տուի խըլսայ. ըստըրիւս կ'էրթամ որ ասարժու իրեքն Թըմըմի. խօճի մունաթ վեր ի՛ւր պոչին էլնի: »

Ախ խայաստան մէկ իրիչկի տեքիոյ լաճերն ի՞նչ կ'անեն. աշխրէ աշխար կ'էրթան, էրկու պլիկ կ'վաստկեն, կուկեան պէօլպէօլ գինիի կուտան կ'խմին, էլմ՞ ծոցեր սպարապ տկլոր ու Թչվառ կ'Թողնեն ինոնց սիրելի խայրինիք, բարիկամ, ու որդիք. ազգ ու ընտանիք անտէր անտիրական, օտար էրկիր կ'էրթան. տիւ տե՛ իսոնց ողորմելի կիանք, ճիւղերն ագէտ, տղէյներ անսլէտ, էրիկն



գինով ինոր անտիվորն պախի վնձով: Եւ  
վի՞ր կ'ասեմ գէլիւ աւէտրանն, վի՞ր կը  
կարդամ . . . . .

Ահա՛նջ կէօ նոր տնտոզն ինկիաւ մէջ  
վայգայ սրտին, տիւ ախանջ արա՛ մկալան  
էօրիւմ կորոմին, շատերայ լաց ու կո-  
ծին, աղաղակին ու արտասուայ հոսան-  
քին: Վանայ ծովն էնկանտար լեզու ջուր  
չունի սր էօ օր կ'թափի. էլ էրկինք կէ-  
տինք մթնաւ, դինին փորվնին մտաւ,  
սրտեր փխրաւ, խոզինին մտղմտացին,  
մղրկտացին, ախպէր ախպօր վիզ փաթ-  
թիւթ վե կուլայ. բնկեր բնկերին, խէրն  
իր որէթին, որդին իր մամիկին, սարեր,  
ձորեր ըմէն էլ խիտ միւ կուլային, մեզ  
կ'մոռմքքին, մեզ խամար ախ մեզ խա-  
մար, որ կ'էրթայինք օտար աչխար,  
անօթի ծարաւ, տկոր ու թշվառ, բէ-  
րաննիս միզրի պէս՝ թիվերնիս թփի պէս  
կ'փաթթվէր մեր սիրելի խօրն ու մօր,  
աղգականց ու ախպօր՝ միզրի պէօ ու  
անուշ իրիսին ու տալար մէջքին. ախ  
ես խաղար տիր մեռնիմ՝ ձեր կարմիր  
խնձոր կարագ իրիսին ու սրտին, կա-  
ցէ՛ք բարի իմ մանուշակ ու վարդ. քիոր  
ախպէր, սրտի կտոր գիւր գրկից, իմ  
անոյշ խէր Մէր, մնաք բարով, մանկեար  
մէկ տիր էլ լոս աչքով պիտի տխնամ

ձեր լսած թի ախ իրիսներ . . . ա՛խ , մարդ-  
չկայ , որ կէօրօյլրի ու մեր սիրան առնի .  
հմէնքս էլ կուլամք , հմէնքս էլ կ'մղկը-  
տամք . ծուխ , մուխ , կրակ ու բոց կ'էլ-  
նի մեր զմէնիս թիէն էլ . խա ֆըրիս-  
տոս , զժէնս էլ վիզ կտրած խաւի պէս  
կ'թրթը Էանք ու կ'դողանք , սարեր ,  
ձորերն էլ կ'կայրեն մե խեա , արեն ամճ-  
կիթ խարօի պէս քէօխք քեաշե ու  
շշկուե կայնե չուղե մեր սե կիանքն ու  
փորձանք տիսնայ , կէօ սկնայ ախպէր .  
սե օր սե սիւղ Էյնէր , կտոր կտոր ա-  
րինք մեր փորն ու աղիք , մեր սիրան  
ու սլօլօճիկ , ճուփիցինք , թալիցինք էն  
Վ.չ Է.չ արախն ու խողին մէջ ու գնա-  
ցինք : Վի՛ր վէրէն ուշկ կայ . հմէնքս էլ  
շիւարած ու մուրձ ենք : Արտասունք  
ձի կ'խեղղի , էլ չեմ կարնայ գրե . կը  
տիսնա՞ս էս պրախ Ե թիցի մէջ ի՞նչ կան-  
տար ծուռ մուռ գրեր կայ , ու ինչխ  
ճաթ լեխ էլամի . գրած կեախ արա-  
սունք թափե վէրէն , ինօր խամար սկուն  
էլերի . աչքերս արա՛նաւար էլաւ , ձիւքս  
ու ծուռնկս թմայրաւ . մարդ էլ չկայ որ  
կեայ ծիկ Էօքը՝ հմէն բան պրիկ պրիկ  
ասեմ էն գրի , պաղրի սիրտս քիչմ  
խամարի , Էն իրիկուն գնացինք Տալա-  
շէն , մէկէլօր Ասպարածին , մէկէլ Առ-

ճէշ, մէկէլ Ախսրրաֆ, ինչխ աիւ դ խտես  
 սրավարաի գնացինք: Ախ, գ իշըրնեց  
 տկուան ոջիլներ ու սատանի լիպոզ լըւեր  
 մեր սիրտ, սակատ, փոր, փսոր արոււն  
 տարուստ արին, քնազըղիզ էլանք, ա-  
 ռավամեց շատ վեր էլանք. ձիու վէրէն  
 քներս տարաւ խարիր տիր արլմփալէն  
 դէտին սլաքիցինք, Մանձկրատւ քրուէն  
 խասանք չխասանք, շինական ու քեազ-  
 քըցիք լուսին դրիրին ծոցերնին էկան  
 միե գընտան. հմէնքս էլանք մէկ խամ-  
 բուռ ու լեղապատառ լեղապատառ իւ-  
 շիկ իւշիկ աչքըներս սլինտ խփիցինք խա-  
 զար ճիօրով Մուրատ գեան ընցանք.  
 րնցանք սլալէ սրտերնխա էլաւ կորեկիմ  
 խատ: Մեյնէ խտե իկողներաց ճամպախ  
 ֆրբլմեր թալըներեն: Միե բանմ՝ չէլաւ.  
 ծծղալով Արզրուամ մտանք, էրկօր խան-  
 դ խտ արինք. տավէրկու օրէն Տրապի-  
 ղոն խասանք սաղ սալամալթ, մէկ ամիս  
 ինն օր ճամպախ էկանք, էլ վէր միե  
 մաֆսր չմնաց կէօ սլնէմ օրի որ անէն  
 էլերեմք. տնով տեղով հմէնն էլ քիե  
 շատ շատ բարե կ'անեն, զմէնն էլ ոսղ  
 սէլիմեն, միայն ձեր տեսուէն յուժ կա-  
 բօտեն, Ասածով մէկէլ փաֆօռին խտ  
 կուկեամ:

Ֆոյ կարօս:

Գասըմ. Տրա պիզոն:

Աիդէ:

## Խօրօտ Ախպէր :

Ախր գիւ գիտես որ կաց բարով ա-  
սած կեախ՝ էրկսիս սիրտն էլ արունտա-  
րուստ էլաւ , գիւ զատվար դնացիր՝ աշ-  
խար մթնաւ վէր ծի . սավայ տղի պէս  
նստայ Սև զետի ավը կուշամ՝ լացի-  
լացի ու ծխրկտացի , խեռլայ ու մնացի :  
Խաւքմ որ թռնէր թէ չէ՛ , միտքս ու  
սիրտս ժուռմուռ կ'էլնէր . կ'ուզի թռնել  
էրթալ ինոր խետ : Գեղի կանտկլիւզ  
ճժեր կ'թռվաին , խոգիս կ'էլնէր փո-  
րէս կ'էրթէր ինոնց խետ . մէջ խելացս  
խարաման թօփիկ կ'խաղի , լաքօ կ'խա-  
ղի , շարզայ կ'խաղի , պըռ կ'խաղի , կըտ-  
րոցիկ , աուշփէտ , կրակտարոց , պաղնիս  
էշ , իւշ թախլայ , պիր էօյուն վար , էր-  
կէն էշ , հէօլ , թօփաշմալի , սատանի  
փոս , իւշ ասըմ , աջը ճախը , կըրոցիկ ,  
մտտնիկ պախոց , թուռփ պիր , պալա  
պաթտի , էլ ես ինչ գիտեմ , տղէկութ  
արած բաներս կուկին կ'լեցվին մէջ ը-  
զեղիս ծիկ կ'ճանկրկին , փրփուշ սիրտս

կ' ճքմութիւնն , կ' պրօրենն ու կ' պորենն :

Այս կ' ասեմ խաղար էրանիկ էն օր  
որ ես էլ էս տղէկներաց պէսնի . ոչ  
տարտ ունի , ոչ խօսիս . ա' խ ոտնակոխ  
էլաւ մեր ու մար , տափաղաղ էլաւ մեր  
ծաղիկ օրեր :

Իրիկունի խաց պիտի ուտեմ , կիրիչկեմ  
չորս պիւլորս ինկէր չունեմ , ախպէր չու-  
նեմ , խէր չունեմ , մէր չունեմ , տղայ  
խակի չկայ : Սև գետ աչիչս կրօղի պէս  
կ' էրէվայ . սարեր , ձորեր բէրան բացեր  
պի՛օ կ' պօռան վէրէս . վա'յ մէրիկ , կա-  
րիպ ինկերեմ ես . վի՛րն ասեմ իմ ցուն  
ու կսկիծներս . անտէր մնացի ես , կու-  
լամ իմ կանաչ ու կտրիճ արևս : Հմէն  
մարդ խաց կ' ուտի , ես լերդ ու լեղի .  
ձեր սէր կ' յիշի , սիրտս կ' իրիցի . կարիպ  
մնացի . ա'՛հ , կարօտ մնացի . խրուակի  
պէս փորս կ' խալի եք միտս կ' իյնի մեր  
կերն ու ինոնց խամ խոտն . վո՛վ պիտի  
բստիւց ետք մե կեր իփի . ծի ջան ա-  
սի . էլ ե՛ք պիտի տիսնամ իմ խամար  
որ մէրս որ կեայ ծիյ կէօրէօլրի , Պալաս  
ասի . արե՛ք անուշ չանուշ կերերեմ  
իփե , ձիւկ , ձվաղիղ , սիրկիվիլով կիմայ  
թան , փլաւ , ճաշ , քեալակէօշ , ծափրէ  
փլաւ , կուրկատէ խարիսայ , ափրաղ ,  
կեայլայ :

Օղածուս մեռնեմ, խօրօտ ու անկա-  
լատ տղիս մատաղ էլնեմ. քե անուշ բա-  
ներեմ պախե. սեղան զարդրե, քիոյ  
սիրան ինչ վինչ որ կ'ուզի, հմէնն էլ  
կայ. կարօս, ըռքհան, նանօյ, տրխուն,  
ձէթրէն, պատրասէօ, սոխ, պեոխկ,  
մանտկով ժածիկ, սուխուկով պանիր,  
պինթան. քե մածունեմ պախե, քեա-  
պապ, խուրովու, պոնած կլօր կու-  
տամ քե խումար զավակս. կե'ր որ զօ-  
րանաս. Էս մեռնեմ դիւ մնաս, իմ խէր,  
իմ սրտի տէր, մատաղ էլնեմ էդ քիոյ  
թուխ թուխ աչքերուդ, ու անզանլար  
ընքզնրուդ. մեռնեմ էդ սօնայ պածիդ  
իմ պալշասան ծաղիկ որդիս: Խա', խոնք  
կուղէր միտքս կ'նվաղկաէր սիրաս. սի-  
րու ու կսկծու, քէօքախան կ'էլնէր խո-  
ղիս. սիրտ տվօղ չկէր ծի. հմէնքն էլ  
ծի պէսեն, սէրերնին մեռած սէաւոր-  
վէրեն ու թօռմած:

Արախչիս դրի գէտին լախ լախ չըն-  
կիւռս առի ձիւս: Թեւեր կքիցի ու էս  
խաղն Սև գետի պուռկ նստայ լացի ու  
ասեցի:

Ա'խ տիւ Ս'և գետ սև սուղ էլնես  
Լիւճնակ, Արև, Ամպ ու Ասողեր  
Խոռ իրիշկեն քե՛ շոտ ցամքես:

Էս քանի՞ տիւր մե լմկեցիր ,  
Մե լմկեցիր ու բիճնաւեր  
Օտար երկիր անխէշ անմէր  
Արունժ ըժա՛նս մեր սիրտն արիւր  
Անաղդ , անսէր կ'էր թամբ անտէր :  
Տիւ թապառիւք սևաուոր ջիւր  
Ֆեանի՞ խոյեր վէր քե ընցին  
Թողին զաւակ , տիւր տրացին ,  
Գիրի գնացին , վո՛վ գիտի ո՞ւր :  
Կայ բարով , քեարասիրտ Սև գեա  
Կծու արասունքս իմ առ քիոյ ծոց ,  
Պէօրած սրտերս պղտոր ջրիդ խեա  
Լի՛ց վանայ ծով ինչիս կրակ ու բոց :  
Ասա՛ ինոր տկոշ ու պէօպիկ  
Ճւփոված ձողեր քիոյ որէժներ  
Ժուռմուռ էլած , մեր խի՛ն մամիկ  
Բարև կ'անեն քե քիոյ լածեր :  
Էր տաք արև եռման ծամեր  
Թալի վէր քե , ծըծի ջրերը .  
Ինոնց խեան էլ մեր կայ բարին  
Տանի ճրճնի վէր քիոյ սարին :  
Կարմիր , կանանչ , ալ նարնճի  
Սփախաւար մեր տրասունքով  
Խօրօտ խօրօտ թո՛ղ Ղարդարփի

Վանայ սարեր, վանայ ծով,  
 Ծովն թո՛ղ սարին, սար ծորերաց  
 Սրտեր բանան մեղր ու կաթ տան  
 Ակները կլկլան ծաղկըներաց  
 Իմ նազելեաց խամ տան, խոտ տան,  
 Ինոնց մէնէն առնեն կարօտ  
 Խօտա՛ղ, լծվար, մշակ, մանճկալ,  
 Գառն ու մաքին, խովիւն, վարօտ,  
 Մնա՛ք բարի տիւք, ձեր տավարն,  
 Մեր ծաղկներ հարսն ու փէսէն  
 Հայրն ու մայրեր, թոռն ու տղէն  
 Կեան խօտոտան մայլեն մնան  
 Կարիպին սէր մաշվին մղկտան,  
 Մնա՛ք բարով իմ կուղլան խէր,  
 Էւ տիւ թոռմած իմ անուշ մէր,  
 Էտ ծաղիկները մեր արուն լլաց  
 Չեր խլէկիւնեմ, ծեր աչքերաց,  
 Արունտարուստ աչքիս արտասունք,  
 Անփիլած սրտիս լեխլած փշրունք  
 Վաղեղ լցվալ մէջ Սև դէտին,  
 Սև դեան խոու վանայ ծովին  
 Ծով պիտի տայ սար ու ձորին,  
 Չոր պիտի տայ մեր ախպիւրին,  
 Ախպիւրն չուայ սէր ու ծաղկունք  
 Լվայ, սրբի՛ ձեր լացն ու սուգ,



էլ ճմբեած սիրտս չկարցայ բռնել,  
 լախ ու շօտէ չնկիւռս անթուկեցի Սե-  
 գեա մօռմա քեալէն գնացի քարմնի խեա-  
 չիւմ առճշու մօտ : Ախ, էս էն ֆաջրե-  
 բունեաց քաղաքնի՞ որ մեր պապիկ մե-  
 կսայ կ'անէր . զինք տեսնող մարդու ա-  
 բուն կ'ցամքի : վանայ ծովն իկե չորս  
 պիւլորն բուն կ'խեխտի . խեղճ քեա-  
 ղաք կ'նմանի վիղ ու թեվեր կտրված  
 մարդմ, որ ծովու պռուկ կ'պառկի,  
 խասնօղն մօտէն բանմ տարե մնացերի  
 չոր ու սպլուխ, ա՛հ, սրիշակ էլերի .  
 պարիսպներ կէօ սկուն ողջ ողջ մնացեր  
 են, ինչխ ոչ խինութն էր, ու կ'մնէր,  
 մաթ մաթ կիրիշկեն ճամխորդներաց :  
 Ժամաուններ էլմ սկուն ստաց վերէն կայ-  
 ներ մե խամար խսկում կ'անեն ու կու-  
 բան, տվերակ ու անղավակ կէնալուն  
 խամար :

Ախ, վո՛վ պիտի շինի, վո՛վ պիտի  
 դարդարի մեր էն խին ու աննման քա-  
 ղաք . էն տեղի խայ ա՞ղգ . ինոնք չանց  
 ան ալեկի շիվար ու շախարղայ են : Գաշ-  
 տեր ու արօտներն էլմ սկուն տեղնիտեղ  
 կ'մնան անտէր անտիրական : Գեղերաց  
 մէջէն ընցնելիւ կեախ մարդու սռսունք  
 կ'դողայ սրիշակներաց զարղանդէն,  
 դէլի կեաղանի բիոն դարձերի : Ալամ

աշխարհի մէջ խայոց պէս, մեպէս աւիրակ ու դանսիակ մարդ կա՞յ :

Էն տեղէն սրտաժաժ սրտաժաժ գընացի՛նք Մանձկերտ, եանէ մեր խայոց տաշվան քեաղաք, որ սոխեց առաջ շատ անուն ունէր, շատ մարդ ու տէր ունէր, շատ կարիճ ունէր, աչխար կ'դողէր իւր մէնէն. ա՛խ, իմ խողին էլնէր խետ ինոր. ոչ քաղաքնի մնացե, ոչ պատն ու պառիկոն, ոչ զարդարանքն, ոչ խիմն ու տուն. իւրիշ բան մը չես տիսնար, մինակ կէօլէօն կէօլէօն խող ու քեարք. սկուն ինչ բիւր խաղար մարդ մէմէկու խետ կռվեն ու խշրալին, վէր մէմէկու պառկին ու պալաժորին մնան. երկնուց խաւքեր ու գէտնուց դէլեր կեան լէշերն ուտեն ու լօպկեն մնան չոր ուսկոռ. արդի օրանի պէս խունձված ու ձրքնձուած ըստեխ ընտեխ մարդու սիրտ կ'քաղեն ու Մուրատ գետի խետ կ'պլխ տորեն, ընյնօղ դարցնօղի խոկին կ'դաղեն ու կ'մրկեն : Ա՛խ, չնկիւռս մօտս չի, որ նստի էս Մանձկրտու մեռած քեաղքի խամար կէօվք առի, ու լի ըսկնոյ խաղմ խանի ինոր վերէն .

Հա՛յ հօ՛, Մանձկերտ խայոց պսակ,  
 Ուրե՞ կարիճ քիոյ Մանաւաղ.

Ուրե՞ սժուլ քիոյ խոռն ու Հայկ ,  
 Ո՛ւր և անուշ ախպէր քիոյ Բաղ :  
 Վի՞ր զիւպարէն են գնացեր  
 Խամփէն կղերն և իր լաճեր .  
 Մեր Հայրենեա՞ց փուշեր քաղել .  
 Թէ Հարթկողին մտուր լցել :  
 Տիօր են գնացեր նէ՛ծի՞ր անել .  
 Թէ նեա , սրուլ աշխար ճռփել ,  
 Աշխար չափել հարք սէրսփել ,  
 Եւ Հայաստանն նո՞ր շինել :  
 Վո՞վ էս քաղաք արաց աւեր ,  
 Սկնայ իթօղ միւ տնաւեր ,  
 Գող Լանկէ՞նն , նախանձն ու խե՞ռ .  
 Գող Շահա՞նն , թէ մեր խայեր :  
 Խայոց լիւսնակ ես քե հէյրան ,  
 Բէրնիդ լաշին առ դի՛ր գէտին  
 Ասա՛ տիւ խում էն հրմէն բան .  
 Վուրո՞նք մեր գլխ մախ թափեցին .  
 Քեաղաքս մեռե կէօ շի՞տա ձէն  
 Տիւ ձիկ ասա՛ իմ խին ընկեր .  
 Իրեստ աիւրս խան ամպի տկէն  
 Ասա՛ լիւսին , ո՛ւրեն խայեր :  
 Դաշտն անբնակ գեղն ավերակ  
 Մեր Հայկաշէն քաղաք անչէն .

6094.  
 A 6224



Հայկ, իր լաճեր աննպատակ  
Ա՛խ, ե՞ք վախսան էս լէն երկրէն :  
Լիւսին դ. ո՞ւն էլ Մանձկրառւ պէս  
Խեղտ չես զբրուցե սև կապերես .  
Չէ թէ զաթի դիւ սկուն ես  
Հըմէն բանին պաշ կ'իրիշկես :  
Խա՞, ես գիտեմ՝ քե պաղ ախպէր ,  
Կիչրարածի ախ ու վախին  
Պառաւ կնկան լացին կոծին  
Մէօրած ուլու մկմկալուն  
Դանկի բէրան պառկած գառուն  
Ճիկ վիկ արիւր, ու մունջ կացիր :  
Եւ կարիպիս կոտրած սրտին  
Խիւկիւ կտոր, ո՛հ, իմ զաւկին ,  
Շատ խօր ու մօր դառն արտասունքին ,  
Եւ նոր խարսի կծու լացին  
Վէրէն պաղ պաղ իրիշկեցիր  
Ո՛չ սիրտ տուիր, ո՛չ սէր տուիր :  
Լուսին քիոյ սիրտն էն կեախ չպատուա՞ւ  
Եք Հայք հըմէնք գերի էլան  
Ծըծի աղէք գետեր խեխտվան .  
Եք մեր կարիճք արուն խրված  
Կռվու դաշտի մէջնին ինկեած ,  
Աչքդ տէսա՛ւ, խոզիդ չէլաւ :

Որ ըսկունի քիոյ պաղ ծամեր  
Գնա՛ տիւ թալ գէրէզմըներ ,  
Սև խողերաց վէրէն ժըժնի  
Դիւն էլ ինոնց խեւ մրտխի :

Մանձկրտէն էլայ խիփնոցայ չիւմ  
Տրապիզոն ճօրով աչքս բացի : Ըստեղաց  
բաներ սիրտս վէրէս չի որ գրեմ քե :  
Քե ասե՞մ , ո՛չ քեաղաք Միհրդատին մէջ  
ավելի ու ոչ էլ Միհրդատն քաղքին  
մէջ փնտռի . . . իսկի զա՛տ չկայ . ինոր  
խին յիշատակներու նմուշ չէրէվայ : Ըս-  
տեղի մարդոց ներքնակոռծութենն  
խօրս գրի մէջ քիչմ գրեցի կարդա՛ կէօ  
էն տեղէն կ'խասկնաս :

Է՞հ , Ստամպէօլայ կալատ չկայ , դը-  
րախտ որ կ'ասեն կէօ էսի , ծոփս մեր  
Մուրատի պէս կ'նցնի քեաղքի մէջէն .  
աղորթ որ ջուրն դառնի ու խմէլու չի  
գար . աման հըմէն արարածոց աշխրի  
վանգակ ու թածիրնի , որ չորս աշխրքի  
եզրէն կ'բիրի ու կ'լցի ինե : ինոր պակնե-  
րաց վէրէն , ու զմէն դարերաց վէրէն  
սկուն խօրօտ ու անկալատ տներ շինե-  
րեն որ մարդ ախկլաղղեղ կ'էլնի , հմէնն  
էլ արծթի ու վուսկու մէջ կ'ծփան ու  
ատամվուրդու աչքի մէջ կ'խլվան , ա՛խ ,  
խիկիու մէջ կ'եռան : Կեամեներն խօ՛ ,

խրեղէն խրիշտկի պէս կայներեն ծովու վէրէն մարդ կ'ըարզնդի . էլ ի՞նչ գիտեմ . Առջակու ծովն թանաք էլնի ասես հմէն զարդարանք դրեմ տէլ շի խլսնե :

Ստամպէօլ քեաղաք , բովանտար աշխրի քեաղաքներաց գլխու ճավահիր ակունքներով զարդրված թագ ու սըսակնի . ծի սկուն կուկեայ որ Աստուած էրկնուց էջե էս խրուխատ քեաղաք շիների . շատ աննմանի շատ : Մէծապատիվ մեծարու սիրելի և նազելի բարեկամաց սիրով ու շատ կարօտով բարև կ'անեմ մեծին ու պղտկին խաւսարական : դարձեալ կրկին բարև կ'անեմ կաթնատու մօր ու ազնիւ խօրս , ծէթին ու ճոշին և ամենայն խարցանողաց . ողջ լեր :

1875 Ստամպէօլ  
Գրեցաւ գիրս  
Եօթ շաբթներաց :

Քիոյ կարիպ  
Աւուեր .

Պանդխտին Պօլտէն իւր հօր գրած նամակ :

Իմ անուշ խէր .

Մաշտէնք խաց ուտած ու ջուր խրմած Ժիւմզ քեանի՞ տիր ակռկաւ ձեր ճիտ , թռաւ ձեր կմունկ , մաշտէնք քէանի՞ տիր ձեր աչք խաղաց ու ականջ կրժաց . շիւշտեմ քեանի՞ խաղար տիր անձեղներն խացի ծառի վէրէն նստան ու ճվռնեկ ճվռնեկ կրկչացին , ու կռկներն լաքէօշ լաքէօշ բէրան բացին կըկղացին . քիոյ միտք պխտորեցին , ու տիւն էլ խաց ուտելիւ , ջիւր խմելիւ , աչք խաղալիւ , ականջ կժալիւ կեախ , քեանի՞ տիր ծիյ յիշիցիր , ու կեաղտիկ կեաղտիկ մօռմռ քացիր . մտքամիւլոր բանի մէջ ինկեար ու խրվար խոգով մարմնով տէղէլք գնացիր , էկար , քե քե ծխրկտացիր ու պալան պալան մուխ դեակլթէդ էլաւ :

Խա՛ , գիտեմ խիւկիոց խանիր ու ասիր , վո՞վ գիտի մեր կարիպ տղէն սրին կուր թէ ջրին կուլ գնաց , գէօլիւ տըր-

պին ինկեաւ, թէ գիող տուալի ւրպն  
ընցաւ: Եռսուն տարւան քեաշած ա-  
մակդ քեանի՞ եռսուն տիր քիոյ վըմ-  
փուխ սիրա լմկիցին ու տրոր տրոր ա-  
րին. ա՛խ, արունլվայ էլաւ քիոյ վոր:  
Ա՛հ, ես մատաղ էլնեմ էն քիոյ վուխը  
սրտին, իմ անուշ խէր, քիոյ կակուղ  
լերդին: Տիւ շատ տիր էրաղ տէսար,  
քնազզեղ էլ էլար. էրազախան իրիշկե-  
ցիր ինոր ասածներ հմէնն էլ սուտ է-  
լան, էրազներն քե խարեցին, հալպաթ  
էրազախանն էլ պէտք էր քե խարէր:  
Էլմ քիոյ խաւատ պինդ էր. տիւ կէս  
գիշիրին ժամ գնացիր, ու լալով աղօթք  
արիր, վէր տաճարի պաղ քեարերաց ու  
քիոյ դառն արտսունք քիոյ ծնկեր վաց  
ու չիւմ Աստծու տիվանն գնաց քիոյ կա-  
րիպ որդիւ խամար: Չէ՛ իմ ազիղ խէր,  
դիու մի՛ լա ծիկ խամար, Աստծու պա-  
խած դառ գէլ չուտե. չէ՞ տիւ ծիկ  
ճամխու տրած վախտ Սեխչան տարի  
պառիկոն ծի պաքեցիր օխնեցիր ու ա-  
սիր մեր խայկ ու Տօթին խրեշտակ քե  
խետ էլնի, Աստծու խացն ուտես, ֆը-  
րխատս քե պախի. քիոյ աղօթքի զօրու-  
թենով ձիւն, բիւք մեր ձեռք չքցմե-  
ցուց, պարկ արեւ մեր ճակատն ու իրես  
չկծեց, սև ու կապուտ խողեր մեր չա-



բուխչմաշցուց , արուն գետեր մեր ծընկ-  
ներ չթիւլցիւց , մենք Առ ծովու ճեաթի պէս  
վանէն չիւմ Սե ծովու պռուկ , կեախ  
էլանք չիւմ ամպեր , ու իջանք խորեր  
ու ջրեր , ու էլմ էլանք մեր քիթ չա-  
բունաւ : Մեր էս ճամխաւ բաներ զմէնն  
էլ գրիցի եռանա օր էօրէխկեցի Ստամ-  
պէօլայ ախպօրս :

Կարմ Տրապիզոն սրտերնիս ճըմբցուց :

Էրկու սուտասան մարդ էկան ճա-  
վիւղիւկ մե խաբեցին , որ թէ որ էսօր  
Տրապիզոն խասնեմք կէս նալլունով մե  
պիաի տաննն , մենք էլ ձիեր տաճըկ-  
ցուցինք , սանքի թէ կրակն ինկերի պը-  
րակի պէս . էլ կաւ , կօշտ , կիօխտ .  
փռօշտ , սար , քեար , ծով ու ցամաք  
չեմք տեսնար էս ակնճկլի վէրէն , թե  
առեր կ'թռնիմք ու կ'էրթամք մէջ էր-  
կինք մէջ գեախնք . ո՛չ ինկեր կ'երբէշ-  
կեմք , ո՛չ կօրն ու անկեալ , ո՛չ կինար-  
մատն , ու ո՛չ հիվանդ , ո՛չ պարխանայ .  
ո՛չ աղայ . ո՛ր վուրոնց . սրտերնիս կը  
թրթփայ . էլ սկուն նեղացանք որ խա-  
ներու գէշ խոտ , գողերաց զարզարդն  
մոռցանք . հմէնի փռմոխթն մեր քթէն  
խանեց . ամարն էլ մե խաբեց ուղեց  
մենէ ակաաթաթիկ ուտել , էն օր մե  
ճամխել ենք փարայ վաստկել . մենք էլ

իրիսնիս լուծեցինք կայնանք, ու ինոր  
կեամիով չգնացինք. վաշայլն արդ ա-  
րինք, ու մեր ուզած օր և ուզած նա-  
ւով գնացինք :

Տաշին որ մտանք կեամին շատ անուշ  
էր . սկուն ինչ տաք թորովան պուռկ կա-  
կուղ թախթրավանի մէջ նստես, մէկ օր  
սկուն խանկիստ խայլիկի պէս. ծովն ու  
սարերաց կանաչ ծառերն տիսնալով մայ-  
լանք ու գնացինք . մէկէլօր սուջիւնք  
որ չէ՞ էլ մի՛ խարցուցե, հմէն բան կու-  
րիսաւ վէր մե . մըժ կոխեց, էրկինք,  
գէտինք կպան իրար, էլ ո՛չ էրկինք  
կ'էրէվայ, ո՛չ գետին, ո՛չ լուսին, ո՛չ  
աստղ և ո՛չ արև, ծովու տնտողներ սա-  
րի պէս կ'բարձրնայ ու կ'եռայ, կեամին  
կ'էլնի շում էրկինք, ու էլմ կ'իջնի կ'իջ-  
նի շում խոր անտիւնա . էլմ կ'կժկժայ  
ու կ'էլնի վէր ոտայ, ու գինով մարգու  
պէս շուռ մուռ կ'առնի . մէկ տեխէն  
անձրև կուկեայ, մէկ տեխէն էլ քեա-  
մին ծովու ջիւր կանթոյկի կեամուց ի-  
ներս . սարի պէս տնտողներն սարի արջու  
պէս իկեր լցվերեն կեամին խում լիւմ  
կուլ տալ կ'ուզեն . եա չէ՛, ինչխ քեառ-  
սուն անօթի ու կատղած շուն թավի  
վէր մէկ լապղտրկի ու խեխտալիոխ ա-  
նեն, կեօ ինոր պէս էլ կ'ուզեն մեր նաւն


բռնեն սև կապուս բերեն վերէն : Ուժ-  
կալով խողիներս էկաւ խասաւ մեր ճիտ .  
էլ ուշկ մաքար չմնաց չմնաց վեր մե ,  
մեր փուռն ու փութիկ , լխէֆն ու տըմ-  
փիկ էլան խունճկուլուի պէս տուղ մուղ .  
մեր վերէն ու գլօխ էլ մի խարցուցե ,  
անձրևէն ու ծովու ջրերէն թռչլավ զը-  
մէնն էլ , լխկվավ ամանլլի պէս ու սեւվ-  
ցաւ ջնճոցի պէս : Յրտու կ'մնկ'մնկանք ,  
ախու կ'դողանք . էօթն օր էօթ գիշեր  
կեռակապուանք մնացինք . ո՛չ խաց կէ-  
րանք , ո՛չ ջիւր խմիցինք : Աստուած իմ  
միս ուտողին նշանց չիտայ , կեախն էր  
էրկինք , գէտինք փլէր , էօթ միլիոն  
տիր , ահանչ , բարօռ սկաւ ասիցինք ու  
ձեռքէ էլանք , կեամու իրես ինչկանտար  
որ բան կէր զժէնն էլ միլիցին ծով ու մե  
կալի խայանի պէս կոխեցին էկան ու  
գնացին էն պէմուրատ կեամու մշկներ :  
Ճամխորդներս մեր զէօնարներով ու մէջ-  
կի փոկերով մե մե կապիցինք կեամու  
զնճլին , զցին , ու ճօպաններաց ու սկուն  
փէտացած մնացինք քերացած : Մենք  
աշխարք վաղսւց մուսանք , խեռլած  
տղի պէս կպանք կեամու շիլակ մնա-  
ցինք , էլ բան չտէսանք . վի՞ր վերէն  
ուշկ կայ : Անչանք տիլաք արինք , ան-  
չանք սարի Սըփկիտրդ կանչիցինք , խունկ

ու մում խոստ էկանք . ու ինչկանտար  
որ սուրբ կար մէյ մէկ բան ասեցինք ,  
ինոր խամար , որ դատաստանին օր պի-  
լայ սկուն զարզանդ չի քեաշե մարդ ,  
որ մենք քեաշիցինք : մեր մախն ու միու-  
նել մեր աչքով տէսանք : Համ գիտե՞ս  
էն նեղ աեղ , էն Սոտոմ կորում տրուն  
ինչ խին ու պէօրպոնած մեղքեր որ կան  
կուգան պարակեած գէլու պէս կ'շար-  
վեն մարդու պիւլոր . էլ մարդու կեռիկ  
կ'շարմխուի . խելք գլխէն կ'թռնի , բայց  
ասպա , թէ որ Աստված մարդ վրկի՞ չը  
խարցուցե թէ դիւ ի՞ւստես : Մէկ էլ  
տէսանք քեամին կտրաւ , արև տէպաւ ,  
ծով նստաւ , անուշցաւ , դառու բէրան  
դարձաւ . մենք էլ Ստամպէօլայ սլօղաղ  
մտանք , ու թէպուանք մնացինք , բէ-  
րանս մնաց բաց , կեամին ծանտր ծանտր  
նոր խարսի պէս շէնիկ մէնիկ գնաց կայնաւ  
կէօմրիւկի առէջ . աչք կպոց կեախ խա-  
ղար խատ կայեղջի ավլիլի կէր էկան  
լցվան կեամին , որ թաղիսս կ'քեաշի .  
որ թեռս կ'քեաշի կ'տանի , տիւ հա՛ ա-  
սա՛ տի՞ր կ'տանէք , ես չեմ իգայ , ա-  
կանջ արօղն վո՞վի . էլ ի՞նչ ասեմ , կա-  
րիպ էրկիր մե առին տարին կէօմրիւկ ,  
խելքս կ'մաղի , մեր զատեր բացին ցը-  
ցըռտեցին կէօմրիւկի տաղմաշիք բուն

չասին . ծոյս ճէօսս մտխոզիցին , ամօթի  
ասել , չիւմ ճէլօյի շվարս էլ խանին ու  
բան իրիշկեցին շեմ գիտե ինչին կու-  
րիսե կ'փնտռին . տէսան որ բանմ չկայ  
մէկ էրկու կուտ առին մե թող տվին .  
էն տեխէն էլ խլսանք : Կեամու փօլօ-  
սածին մե առաւ տարաւ իտիր կահվէմ .  
որ նաւուն տամք սօրայ էլնեմք տիւս  
էն տեղէն . մեր ընկերներաց աղաչանք  
ինկեայ որ օխպէրս կեայ ծիկ էն տեղէն  
խլսցուցի . Աստված իւր կարմիր արև  
պախչի էկաւ մեր նավուն տվալ մե ա-  
ղատեց էն պունատունէն . է՛հ , էն փոր-  
ծանացն էլ աղատվանք ու քիչմ խոգի  
էկաւ վերէս : Մաղ սելիմեմ . ձեր ծեռք  
կ'պաքեմ . մօրս բարև կ'անեմ . զմէն  
բարեկմներաց սէր իսրտէ ունեմ . ախ-  
պէրս էլ ձեր և զմէնին խաթր կ'խար-  
ցուցի յուժ յուժ կարօտով :

Գրիս գրիցի Պօլիս  
Ճոչ պայրմին օր .

Քիոյ կարիպ  
Ուրէն :



Վանէն ի Պօլիս իւր եղբօր գրած առաջին նամակ .

### Իմ անկալատ Ախպէր .

Մեր քեալորանց պսալղուն Նշանին խեղ գրած մարկրտէ գիրդ առի և ուրախացայ , աշխար տուին ծի , կէօ նոր սիրաս կտորմ խմպրաւ : Սպա՛ միռնեմ քե . կէօ ըտկնայ շոտ շոտ բարեադիր գրի՛ ու թէ որ քիչմ էլ էրկէն գրես քիոյ վուսկուխատ խապրներ իմ խոգին էնտիր քե կուրպան կ'անեմ , իմ վարդ ախպէր : Չէ՞ տիւ դիտես որ քիոյ կարօտն կ'քաշեմք , քե խամար մենք կը մաշենք : Խաւքմ որ թռնի մտքիս մէջ կ'ասեմ . ա՛խ էրանեկ թէ ես էլ խաւք էլնի , թռնի ու էրթի մօտ իմ ախպէր , ինոր կարիպ սիրտն խովցուցի ու դառնի : Դիւ դիտես որ մենք կսկօ էս տեղ կոր բուի պէս մէնակ նստեր ու մնացերեմք աննկեր անախպէր . ա՛խ , մնացինք տախտի պուճախ :

Եէսիր էլնեմ քիոյ կճատ մուրուսին պալասան ծաղիկ ախքէրս . դիւ մէկ տիր խելքդ գլօխդ ժողվի , կալամ բուռդ

բաճառ կերտող մի՞ վախճանար, ինոր մէջ  
գէլ չկայ քեր կ'ուտի . մանկեար խարիզ-  
նէն, քեռու էշտէն, մանկղէն, կէրնտիէն,  
սէլին խուրց տալէն ու բառնալէն, սէլի  
սունիին կանաչ տալէն, կալ անելէն,  
էրան անելէն, ցորէն մաղելէն, կալա-  
տեղ ավիլելէն, էշ բառնալէն, կարար  
արթ ճխթելէն, իշուն չո՛ւ չո՛ւ ասելէն,  
շօրերէն չու՛մ տուն բիրելէն, արթի կա-  
րար շլիելէն, չու՛մ մարաք տանելէն,  
ցորնի կէկաճ ճվալ շլիելէն քեռասուն  
մատ էրկէն թարածէն էլնելէն ու թա-  
ճիր շուռ տալէն էլ ծանտրի մէկ պըր-  
տիւճ փիտուրն, որ դիւ ինորմէ սկու՛մ  
չատ կ'վախէնաս, ու գիրերդ սկու՛ն ինչ  
քրթիւ օլամ խառնավու՛ծի կ'չպլկես  
վէր մէյմէկու :

Ախբօրս տսեմ՝ աղորթ որ տիւց բանմ  
չեմ խասկնայ, դիւ կ'ասես որ « ֆիոյ  
թիթխօտած ու պակեազրած գիրն կար-  
դացի ու էլա վաղեցի ճիոչ խօր մօտ  
զմէն բան ասի պրիկ պրիկ(1) » . ա՛խ, ինչ  
ասեմ ես էն խօր բարի սրտին, <sup>5</sup> բիւր

---

(1) Կարի ցաւ է մեզ պանդխտի մէկ գիրն  
կորսուելուն համար, որուն մէջ Ա՛անայ քաղաքի  
արդի յուզմանց նկատմամբ ո՛չ սակաւ կէտեր  
լուսաբանուած են եղեր ըստ երեւոյթին :

զրոյց ինոր ականջ չխմանե , ինոր սիրտ  
լէնի լէն , ինոր փոր ծովի ծով . մենք  
ինոր խեղ քիւշտիկ չեմք կարնար կըս-  
նել . թէ որ փչի մե մէկ տիր չոր խապ-  
րապերի պէս աշխրէ աշխար կ' թռնեմք .  
Դիւ խոնք գիտես , ես ինչ ասեմ քեզ .  
Դիւ կ'ասես թէ որ՝ կարնաս Ստամպէօլ  
գալ՝ մէկ տիր գա'ս աղէկ կ'էլնի , ու  
ինոր խեղ կ'ասես թիոր բոնդ չի ակո-  
լե , ու կ'դառնաս կ'ասես մեր գեղավ-  
բայ մարդ տի'ր տեղդ թիոր կ'վախնաս ,  
զաթի տուն խախուտ մհանայ կարկուտ ,  
բիոնկալն աւեր , տրկցներ սնաւեր . լա-  
ճերս արախողած խաղար ճօրով պառք-  
ցուցի , օրօր ասի , խապլպեցի , առչապլօ  
կայ ծե կ'ուտի , ը՛հ մրափցուցի . էլ  
ծէնդ կտրի :

Գիտե՞ս մե մէրմ կէր կ'ասէր աղէն  
օրօրի , թօնէր ցան թալի , մենք էլ նազ  
տուղ կ'անինք ու կ'ասինք . մենք տիւ-  
քեան կ'էրթամք . էն էլ մե կ'ասէր Սև  
ծովն էրթաք էլ չիգայք . ինոր խապրի  
խամար ես էլ Սև ծովու եզր տալեր  
նստերեմ , էլ տեղէս չեմ լպտար , չիւմ  
մեր ճիոչ աղէն էդ տեղէն պէզրի ու  
թեվեր թափ տայ վաղի էրթայ իւր տօ-  
միկ ես էլ էս տեղէն չեմ խախտե : Համ  
իմ աչք մէկ տիր շատ վախցաւ էդ քեաղ-



քի տախտակի ոճիչներէն : Խէրու չէ՛ խէրզ-  
նամ ձի էն կանտար կծեցին , էնկանտար  
լմկեցին , որ կէժուած որթիկ դառցայ :  
Ես մանկեար ծո՞ւռեմ , խէրիքի փուռ-  
թիկս խանեցին էն շան ճժեր : խա՛ ֆը-  
րիատոս քե էրդու՞մ որ ինոնց խամարի  
իմ վախ , ինոնց ապով չեմ իրար :

Կ՛ասես պանրի լաճ , շէրվնցոց լաճ  
մլերեն ծակ . ինչի՞ խամարի եարա՛յ :  
Չէլնի՞ պանիր աղվսու ըտեր մրկըցուցե-  
րի , որ էն էլ ինոնց բռնե , տմիիկ  
շինե վարատիկի պէս ակը խթերի , որ  
քեամի չիգայ գրսիւց ու կրակն ընցնի ,  
ձի սկնայ կու՛եայ , տիւ ի՞նչխ կ՛ասես ,  
ինոնց տեղնի եղն էլ վէրէնի , թո՛ղ դա-  
տար կէնան ու տփոց չուտեն , ախպէր  
քե ասեմ՝ աղվսու պոչն էլ կ՛կտրեն , ի-  
նոր կթոցն էլ կ՛կտրեն , քեանի որ էն  
ֆրթիւ կոռօն տայի , վանայ ծովէն  
տնտող պիտի պակաս չէլնի , չէլնի :

Եռանտ որ մէկ գիր էօրէօխկիցի է-  
կաւ կարօին խետ , ի՞նչ անեմ որ , էն  
պոչ կտրած տղան ինչխ արաց , ինչխ  
չարաց մեր թուխթ կուրիսեց , ինորմիով  
Աստվածն ապով քե շատ բան գրերի ,  
մեր խիվանդ խէն տի՞որի , ի՞նչ կ՛անի :  
Էնայ կրօղի տարած մեր շուշտակն ի՞նչ-  
խի : Էն մեր խելք թեվթր , բեռ ծանտը

շփոթի տօպրակն ինչ կ'անի, ընքնտի՞:

Էն չէ աման, դիւ քիոյ նանաչ ու կտրիճ արևն որ կ'սիրես ակարէր մարդ, աղէոթ սաս', դիւ ծիկ ինչի՞ կ'կանչես կէօ քիոյ մօտ. ու կ'ասես ծի թէ որ գաս էս տեղ քե խամար շատ աղէկ կ'էլնի. տպա էս տեղն էլ որ իմ լպէն էլնի՞. կէօ Աստըված աղատի էլաւ էլաւ, մեր աչքի տեղն քերօ՞ղն ուտի մեր եփված փլաւն. կիրակոս դատի Մարկոսն ուտի, էս ս'ը գրքի կողը գրվերի:

Էս օր անչամ գրեր գրեցի, անչանք գրեցի՞ որ կարդալով պիտի պէղրես, ես էլ ստիւս չիւմ ամիսմ քեանիմ բաներ կայ շիտկեմ, թէ որ ողջ մնացի պիտի գամ. Քրիստոս միմեանց տեսուն արժան անէ. ակարէր դիւ սաս' ամէն: Խառնավաճիկ գրիս խամար ծի չմեղդրես. կալամն էնկանտար մլեր խաներեմ, էնկանտար թաթխեր լկոթերեմ՝ որ էլ տաղաթ չմնացե վերէս. ես կուզեմ որ տիւղ գրեմ, թուխթն ու կալամ հա՛ ոռազատիկ կ'էրթան: Համ գիտե՞ս ճիկրիս կտօր ակարէր, տակիս տակիկ տեղ պաւ ու սղիկ սղիկ էլաւ. անչամ նստայ էս քանի տարի գրեցի որ թևս փէտացաւ ու թմպրաւ, աչքերս ասես շավկոր էլաւ. ես էլ կ'ուզեմ մէկ տիր գամ,

քիչմ կանկեամ, պտտովեմ պալքի սիրաս  
կտորմ խովնայ, բարեկամներս տխնամ  
խողիս խովնայ, բայց վուլթկին քե էր-  
դում, որ էս տաք ու եռման օրեր չեմ  
կարնար գալ. պրտիւճմը կայնի էս ճեռ-  
ճրռտան օրերն ընցնի որ սկուն գամ.  
աղէկ չեմ ասեր. ապա մեռնեմ քե ա-  
ղէկ կ'ասեմ:

Շատ բարե կ'անեմ մեր էօլանէս  
աղին, լաճերաց զմէնին, խորամ կօտ  
Արամին. ասս' ինոր, սկուն տաճկցար  
որ սուրբ Ասարլա՞ճն էլ մոռցար. ինոր  
կէրած խայն աղուկի իր պէօկ հա'հա'նչ,  
էլ բան չեմ ասե լալօ'. խոր ես սկուն  
կ'սիրի սկուն կ'սիրի որ ասարլորիս մէջ  
սկուն սէր սկուն ախբէր չէր էլներ.  
աման էն հմէնն էլ մտաց խաննց, էն  
սե քիթմուռթ ծի մէկ տէր էլ բարեա-  
գիրմ չգրեց, ու մէկ տիր իմ հալ չք  
խարցուց. հալպաթ կուկեամ ու ինոր  
խետ կ'տեսնովիմ, ինոր գլխս գիւ տե  
թէ ինչեր կ'խանեմ: Ե՛ խէրիքի, ճիտչ  
պսարկին շատ շատ սիրով բարե կ'ա-  
նեմ. մեզ խարցանողաց ու սիրելի բա-  
րեկամներաց խիւկիւնեմ. ողջ լեր իմ  
ծաղիկ ախբէր:

1875 Վան,

Չմռան:

Քիոյ պատիկ ախբէր

...

չփոթի տօպրա՞կն ի՞նչ կ'անի , ըռընտի՞ :

Էն չէ աման , դիւ քիոյ նանաչ ու կտրիճ արևն որ կ'սիրես ախրէր մարդ , աղէոթ ասա՛ , դիւ ծիկ ինչի՞ կ'կանչես կէօ քիոյ մօտ . ու կ'ասես ծի թէ որ գաս էս տեղ քե խամար շատ աղէկ կ'էլնի : ասա էս տեղն էլ որ իմ լպէն էլնի՞ . կէօ Աստըված աղատի էլաւ էլաւ , մեր աչքի տեղն քերօ՞ղն ուտի մեր եփված փլաւն . կիրակոս դատի Մարկո՞սն ուտի՞ , էս ո՞ր գրքի կողը գրվերի :

Էս օր անչամ գրեր գրեցի , անչանք գրեցի՝ որ կարդալով սիտի սէղրես , ես էլ ստիւս չիւմ ամիսմ քեանիմ բաներ կայ շիտկեմ , թէ որ ողջ մնացի սիտի գամ . Քրիստոս միմեանց տեսուն արժան անէ . ախրէր դիւ ասա՛ ամէն : Խառնավո՞ծիկ գրիս խամար ծի չմեղդրես . կալամն էնկանտար մլեր խաներեմ , էնկանտար թաթխեր լկոթերեմ՝ որ էլ տաղաթ չմնացե վերէս . ես կուզեմ որ տիւղ գրեմ , թուխթն ու կալամ հա՛ ոռազատիկ կ'էրթան : Համ գիտե՞ս ճիկրիս կտօր ախրէր , տակիս տուիիկ տեղ պաւ ու սղիկ սղիկ էլաւ . անչամ նստայ էս քանի տարի գրեցի որ թես փէտայաւ ու թմպրաւ , աչքերս ասես շավկոր էլաւ . ես էլ կ'ուզեմ մէկ տիր գամ ,

քիչմ կանկեամ՝ պտտովեմ սպալքի սիրաս  
կտորմ խոյնայ , բարեկամներս տխնամ  
խոգիս խոյնայ , բայց փութ կին քե էր-  
դուամ , որ էս տաք ու եռման օրեր չեմ  
կարնար դալ . պրտխճմը կայնի էս ճեն-  
ճրուտան օրերն ընցնի որ սկուն դամ .  
աղէկ չեմ տներ . ապա մեռնեմ քե ա-  
ղէկ կ'ատեմ :

Շատ բարե կ'անեմ մեր էօյանէս  
աղին , լաճերաց զմէնին , խորած կօտ  
Արամին . սաս ինոր , սկուն տաճկցար  
որ օուրը Աստրվածն էլ մոռցար . ինոր  
կէրած խացն աղուկի իր պէօկ հա՛հա՛նչ ,  
էլ բան չեմ տես լալօ՛ . իտոր ես սկուն  
կ'սիրի սկուն կ'սիրի որ աստրվորիս մէջ  
սկուն սէր սկուն ախրէր չէր էլներ .  
աման էն հմէնն էլ մտաց խաննց , էն  
սե քիթմուութ ծի մէկ տէր էլ բարեա-  
գիրմ շղբեց , ու մէկ տիր իմ հալ չը  
խարցուց . հալպաթ կուկեամ ու ինոր  
խեա կ'տեսնվիմ , ինոր գլխս դիւ տե  
թէ ինչեր կ'խանեմ : Է՛ խէրիքի , ճիտչ  
պատրկին շատ շատ սիրով բարե կ'ա-  
նեմ . մեզ խարցանօղաց ու սիրելի բա-  
րեկամներաց խիւկիւնեմ . ողջ լեր իմ  
ծաղիկ ախրէր :

1875 Վան ,

Քիոյ պատիկ ախրէր

Չման :

...

Հօրմէն ի Պօլիս իւր պանդուխտ որդւոյն  
գրած նամակ.

Իմ էրկու աչքի լոս որդի .

Դիւ գնացիր իմ սիրտն ու սէր տա-  
րար խեղ քե . կուլամ արասունք էլ  
չիգար ցամքած աչիչս որ պարէ սիրտս  
կտորմ խովնայ . էլ միկայ , մնծրայ ,  
կատամն կոտրերի , ծեռքերս կ'դողայ ,  
աչքս էլ բան չտեսնայ . խալիլորցայ , էլ  
ի՛նչ անեմ լոս , ասողունք ու արեգակ  
ու լիւննակ . դիւ ես իմ արեւն ու խը-  
րիչտակ : Շոտ արա՛ թո՛ղ արե , արե՛  
սիրելի որդիս արե՛ իմ ծանծողած գը-  
լոխս դէ՛ր խող . իմ խաւար աչիչս դիւ  
էլի՛ր զվարթնոյն քաղցր ցօղ : Տարտն ու  
հոգս ծի մաշցուց ու խիլ դարձուց , էլ  
չեմ կարնար ապրել , էլ չեմ կարնար  
խամբիրել . իմայ ու վառվայ կսկիծէս  
ու ցաւէս : Հմէն առաւտուն իրիկուն  
տղէ յներդ կ'խարցուցեն ու կ'ասեն ուրե՛  
խէրս :

Մեր նորատուկն ու իգին մնացե առանց փորել, խոտն ու սէղ, կօլուճայտեկն ու խապպուկ, կառն ու իշնուկաթուկ, շօր խոտն ու մատուկ, փուշն ու ամանկոտրուկ, շան կիողն ու ամիրաչխամն, պառվու մէղարն ու սարի սխտորն, աղջկուտակն ու պառեղ, ո՛չ խէշտրանն մնաց ոչ պառեկ հմէնն էլան շապկիցին, քետխանքն խեխդեց մեր իգին. ոչ խամն մնաց ոչ խոտ : Ալվան ծաղկներն հմէն չորցան : Ա՛խ, մեր դըրախտ իգին անտէր մնաց, վարդն էլ չորցաւ, մանուշակն էլ, լէլաղ, նարկիզն ու կրնէրպիւկն էլ : Այդի տէրն քսաեղ չի. վո՛վ պիտի շախի, վո՛վ պիտի պախի, ո՛չ սոխ կայ, ո՛չ սխտոր, ո՛չ պատինճան, ո՛չ քալամ, ո՛չ ճուռ կայ, ոչ կլմպէօղ, ո՛չ տապղին, ո՛չ շախկեամ, ո՛չ կանճրակ, ո՛չ կանախատ, ո՛չ պայլայ, ո՛չ կտաւատ, ո՛չ կըլիւլ, ո՛չ ոսպ, ո՛չ սիսեռ, ո՛չ տէրաղօթիկ ու ոչ սպանախ : Էլ չեմ կարնար հայ վախ : Հայ վախ խաղար վախ իմ կանաչ ու նոր խարսի պէս զարդարված դըրախտ իգին թօռմաւ դնաց : Էլ զատ չմնաց, ո՛չ շոտ խասնօղ տանձ ու ո՛չ թթիւ, ո՛չ լաքէշօն, ո՛չ մեշրուկ, ո՛չ ապասին, ո՛չ նռնեկ, ո՛չ մարտիրոսն ու ո՛չ պուկօշն, ո՛չ տղտը-

ղեկ, ո՛չ մալաղի, ո՛չ մալաչեկ, ո՛չ թըս-  
սուկ և ո՛չ վաչեկ: Ո՛չ արուչի ծառն  
մնաց, ո՛չ ծիրնի, ո՛չ դառկողինձ, ո՛չ  
քեազցրակողինձ, ո՛չ տամսնի, ո՛չ նշի, ո՛չ  
կիլաղի, ո՛չ ֆշնի. հմէնն էլ մնծրաւ գը-  
նաց. շատ խասնօղ խնձորն էլ, խրխիւր  
խնձորն էլ, մարխօշ խնձորն էլ, թթու  
խնձորն էլ, ուռի խնձորն էլ, կարմրա-  
թուշ խնձորն էլ, ապիկ ու կլաթայ  
խնձորն էլ: Սիպիկ/սիկ ու շարտաղուկն էլ,  
փշատ ու նուշն էլ, հմէնն էլ, ա՛խ զմէնն  
էլ, ես էլ, ես էլ: Կէլուկ խոտ խեխաեց  
մեր թփնիք ու ամինիք. պէօտ կէրաւ  
մեր խաղողի կսճերն, լարեկ խաղող,  
քիշմիշ խաղող, խիղնայ խաղող, սև խա-  
ղող, սիվտակ խաղողն էլ, էծուպտուկն  
էլ տափսաղաղ էլան իմ՝ ումպրս աստ-  
վարս էլ տարան. թո՛ւ ես ամերակ մնա-  
ցի, ես անդաւակ մնացի:

Մեր կոռթ արտեր եփուց է որ խօ-  
ղան կ'մնան. ժիւմմ էլ շատեր վարիցին  
մե բան շափին. խեղճ աղքատ մնացինք,  
մարդ չունեմ՝ որ էրթայ ինոնց վէրա-  
դիրն առնի ու տայ մեր պարտքին,  
պարտքեր ու վէրիկիներն վէր մէյմէկու  
սեխչուան մնացին. անճար մնացի, ու  
փարայ չունելուս խամար մեր կթան կովն  
ու սրթիկ ամիէս քեաչին առին, տարան



ծախիցին առին պարտքի տեղ: Մկայ ո՛չ կաթեղ ունենք, ո՛չ եղ. մեր ումուտ, ապավէնն էլ ծեռքներացս խլեցին, մեղրիկիցին, մեր ճիծ պիծ պարակեած թողին:

Խիւղիւս զվանիցն ինկերեմ կախ. պարտքնտէրներն մեր դռան ճկիկն առեր կայներեն խիւղիւ խրիչակի պէս, ցցվե վէր սրախս վարայ կ'ուզեն, չունեմ որ տամ. նաչարս կտրիցին խարիր կտրի շիրի փարայ սալաֆ արի, առուն թռածին տվի, կիտր խարիր փարից, որ արաց էրկու խարիր խուն կուռուշ. մեր մեղայ էն տարվան տարին նորատունկ խաղողի տընըչանք չէլաւ. դուն էլ մե մնացար փարայ չէօրէօխիկիցիր, ու էն պարտք շան լակտու պէս ցինաւ ու շատցաւ. չէ՞ դիւ դիտես ըստեղի անողորմ ատաթն, որ սալաֆն թէ որ օրվան չիտան կ'չաճեն փարայի. մենք խարիր կտրի շիրի սալաֆ արինք վէրադիրով էրկու խարիր խուն կուռուշի, ու շիրայ չէլաւ մենք էլ շիրայ չկարցանք տալ. ու չասե՞ս որ մեր սև սթարից շիրի կիտրն էլաւ չիւմ քսան կուռուշի ու փարի տէր, խօճան, սալաֆն դարձուց փարի, կիտրն քսան կուռուշէն խարիր կիտրն արաց չորս քիսայ, ու մեյնէ էր-

կու խաղարի թէմէսիւկ տուց . տէ՛ դիւ  
խէսապ արա՛, չիւմ էսօր խաղարին իրեք  
խարիր կուռուչ մամալայ՝ բանի, քանի՞  
կուռուչ կ՛անի հմէն պարտքն . իմ  
խելքս շատ չխասնե սկնայ բաներաց :

Էն դռնփակ մարդ ծկյ իտուր կա-  
վազին տալան դրին ադամայ մութ բըռ-  
նատուն, անօթի անսվաղ, մարդ չին  
թողներ որ՝ դար մօտս, դուռ փակիցին  
վէրէս, պալիկ ծակէմ օր մէկ կուտ խաց  
կ՛բիրին մեր տունէն ու կ՛էրթին : Իրեք  
ամիս պոնատուն մնացի . սկուն խալայ  
ու մաշայ որ մարդ չէր ճանչնար ծիկ .  
Աստված՝ սապապքեարի տունն ավիրի  
բան չեմ ասե, արեն ճռփի :

Մեր նորատունին առին ըռէհին ու  
թամասուկ գրիցին կտորմ սև թանք  
դրին վէր թղթին ճկոթս կպուցի վէ-  
րէն, ետք ծիկ խանին պոնատունէն :  
Էն թամասիւկին մէջ գրերեն որ չիւմ  
տարիմ էն պարտքն չկարնամ տալ խայ,  
նորատունին պարտքնտիրոջ թարկեմ .  
կէօ էս ոչեան էկաւ վէր մե, վէր քե  
ի՛նչ խապար կայ : Ախր դիւ գիտե՞ս էս  
մամալաճի խօճաներ, խոգինին գրերեն  
անձղան պատխան . իրեք տարվան մէջ  
էրկու խարիր իտուն կուռուչ արին ութն  
քիսայ պարտք . տէ՛ արե՛ էսկանտար

պարտքի տկէն էլի՛ տխնամ ի՞նչխ կ'էլ-  
նես . մեր տուն տեղ ծախենք , չօլուխ  
չօճոնխն էլ ծախենք շենք կարնար խըլ-  
նելէն անխոգի ու անօրէններաց կեղտոտ  
լպէն : Էլ կարողութեն չմնաց վէրէս .  
մեր յոյսն ու ապաւէն դու ես , աման  
կ'զլեմ խաղար տիր քիոյ տքն պաքեմ ,  
ահա փօլօս արինք ճամխիցինք էկաւ ,  
չէլնի՛ , չէլնի՛ որ ետ դարձուցես . Աստը-  
ծու բէրանն օխնի քե , պալաս , ինկերեմ  
քիոյ արենն ու քիոյ պախտ , քիոյ թուխ  
աչքերացդ խամար էլնի , քիոյ ճամուկ  
ու փնփուս ձեադերացդ սատաղէն էլ-  
նի , ես արի դիւ մանե . պէտք չէր  
պարտք անի , փոլօս անի , աման ի՞նչ ա-  
նի , նեղնի : Ախր դիւ գիտես մկալան  
վէրկիներ , մեր բեռներ , ինոնք տալով  
կ'էլնի . պարտք տալով մեզք լալովնն ասե :

Տնով տեղով հմէնքս էլ սաղ ու սէ-  
լիմենք , միայն ձեր աննման տեսուն կա-  
րօտեմք . մէրդ ու ինոր քիոր , պամամէդ  
ու ամէն թաղիի բարեկմեերդ մախսուս  
սիրով բարե կ'անեն . մե չմոռնաս . . . :

1875 վան .

Քիոյ խալիոր  
Խէր .

Վանէն Վարդի ընկերոջ գրած նամակ .

Իմ Վարդ ընկեր .

Նստերի մեր քեահրէղի ական վերէն ,  
անուշ գինին գրերի ջուր որ ընկերներս  
գայլն խորաց խմինք . զմայլերի գար-  
նան կանանչ ու ծաղկանց փրայ . սիրտս  
փորէս էլեր գնացեր էր խաւքերաց է-  
րամի խեա . անկիւմանք դաշտեր , ձո-  
րեր ու սարեր , ու վանքեր պլտտուեր  
զղզղուն ախրիւրներաց ամեներէն ծաղիկ-  
ներ քեաղեր մէջքս ու գլուխս շարեր  
իկեր նստերեմ , սիրաս կ'էլնի կ'իջնի ու  
աղէկմ թլֆերեմ . գիտես թէ շատ տեղ  
գնացերեմ ու հոգնած իկեր նստերեմ ,  
ու աէսած բաներս իկեր լցվերեն մէջ  
սրտիս ելվէջ կ'անեն , կ'իբրիշկեմ ինանց  
ու կ'թէսպաիմ : Կ'մտածեմ ճնկղկներ ,  
սարեկներ , ծրծռկներ , արօրներ , եղու-  
նիկներ , կօտկօտ առակէլներ , պլտլու-  
ներ , լիորեր , խէծխէծներ , պատեր ,  
կաղեր , առծիմներ , բաղէներ , անծեղ-

ներ, կռիկներ ու կռուներ հմէնն էլ  
ինոնց ընկերներաց խեղ թե թեխի, կը-  
տուց կացի տվեր մարկրաի պէս շարան  
շարան կ'էրթան ու կ'խաղան, ու դար-  
նան վարդի պէս սրտերնին ուրախ ու  
ծ'ծ դկտուն են. խոնց վէրէն տալմիչ կ'էլ-  
նամ ու կ'ասեմ մէջ մտայս, թէ՞ մենք  
էլ ըստիւց տըովէրկու տարի առաջ ի-  
սոնց պէս սիրատենջ ընկերներ ունէինք,  
որ իրարու հոգի կուտայինք. մենք ի-  
նոնց խեղ ինչ ուրախութիւններ արե-  
րենք, ինչ քաղցր օրեր տեսերենք,  
մեր զխարթութիւնք երբ կարնան ա-  
նել թեմաւոր խաւքեր. մեր սիրտ լու-  
սաւոր էր ու մեր սէրն պայծառ և կեան-  
քերնիս հրեշտակաց հաւոար. մեր ըն-  
կերներաց խեղ ս'ը բարձր սար մնաց՝  
որ չկոխիցինք չէլանք, ս'ը ըխթատեղ  
մնաց՝ որ չթռանք ու դնացինք ուխտի.  
վճի կարնայ ճառել մեր թռվրսան ըն-  
կերներաց խաղն ու խնդում, երգն ու  
խէքեթ:

Միքդ կուգաս, երբ Ախթամար կ'էր-  
թայինք Ռատանայ բերդի առկողն նըս-  
տանք ու լացինք, էն տեղաց մօտ, ուր  
տեղէն անօրէն ճառակէր մեր Յակոբ Հայ-  
րապետի Սարկըլըդներն խեխտել էր  
տըվեր, մեր Արժրունեաց թագաւորի

տան պատի տակ . Էլ մենք չինք կար-  
նար մեր աչիչ վազկան արտունք բռնե ,  
մեր Հայրենի Թագավորի տան պրով պը-  
րիչակ էլնելուն խամար խոնք դիւ ծիզ-  
նից աղէկ գիտես :

Էն տեղէն թու թու ոտքերով գնա-  
ցինք Ալսթամար , կէօ տա՞ կտորմ՝ սըր-  
տերնիս բացվաւ , տէսանք ինոր էրկնա-  
խըլունձ գումակէթն , աղորթ որ թա-  
գաւորի շէնքի , զարմացանք , ու լէզվիս  
կծիցինք , պուկնիս կեախնէր պատուվէր ,  
ուրախութենից սրտերնս կ'ուզէր դիւրս  
թռնել էն աննման Տաճարն տէսնելնուս  
խամար . . . : Էն տեղ պըպիււ Ս . կա-  
թուղիկոսն մեզ օրհնեց :

Նարեկայ վանք գնացինք , Գրիգոր  
Նարեկեցու ու Խօսրոֆու դերեզմանի  
խաչաքարեր խամբուրիցինք :

Էն տեղէն Խիւզիւոյ վանք գնացինք  
էն ուխտն էլ արինք . Ս . Գրտատ Թա-  
գաւորի գէրեզմնի կաւչա ինչէ՞ր արինք ,  
ինչէ՞ր արինք , քիչ էր մնացե որ կ'ըսկ-  
ծու մեռնինք . մեր էն Պատվական ու  
կարիճ Թագաւորի սիրուն խամար , ի-  
նոր՝ որ տարտով ու դեղով մեռցուցե-  
րեն զինք : Ալս , խաղար ախր անիծած  
էլնին ինոնք հահա՞նչ , որ էս սև օրն չը  
բիրին վէր մե :

Ըստիւց էլանք էկանք Խաւուճոր մեր  
 Խին չօր դեղն , Ասպածաշէն , էլանք էն  
 պօպօզան դարի վէրէն , ուր տեղ մեր  
 Հայկ Նահապետն իր տունն շիներ էր ,  
 ամպրնոց շիներ էր , ուր տեղ սաստիկ  
 կտրճութեամբ Բէլին սպաննեց ու խոռճ-  
 կեց , Ադամայ ու Նոյայ խաւատքով ապ-  
 րեցաւ , Հայաստանն աղատեց ու մեռաւ ,  
 Ըսի մէջ պառկաւ : Ա՛խ , մենք դառն  
 լացինք ինոր սուրբ գերէզմանն , մեր  
 արտսունք Շամիրամայ առվէն , ու Անգ-  
 ղայ գեաէն շատ ու պըրօր վաղեց էն օրը  
 ինոր սուրբ ուսկոճներու վէրէն : Իսկի  
 մտացս շէլնե մեր էն օրվան էն տեղի ը-  
 րած ուխտն ու զրոց . Արտօս , Տորոս ,  
 Կըռգուռ , Սեփանայ ու Վարազայ սա-  
 րերն հմէնք լսիցին մեր սրտէ բոլած  
 խապրներն , ու աչքից վազած արտսունք-  
 ներն , մեր Հայկի կիսխտ ու ինոչտ տա-  
 պանաքեարին նուիրած ծաղիկները :  
 Մեր սիրտ կ'եռար ու կ'փրփրար մեր  
 Հայրենեայց երկնային յիշատակներով :

Վ՞ով կարնայ մոռնալ մեր Անգղայ  
 վանից մօտ արած ուրախութեննիս , Կը-  
 ռքնկվանից մօտ կիօնտ խաղալնիս , սուրբ  
 Թաթէոս առաքելի վանքի մէջ ընցու-  
 ցած օրերնիս , Անապատներաց ուխտեր-  
 նիս : Տէրսկանվորդ ու վաճնք կ'ասես ,

Տիրամէ՞ր կ'ասես, Ալբրու վանք ու Չա-  
ղար սուրբ Նշանի վանքն տարին մէկ  
տիր չէրթայինք շատտէինք, խուրուվա-  
չուտէինք, գինի չի մէինք, բիւրաւոր  
ծաղկներով մեր սեղանն չղարդւէինք,  
խաղեր չասէինք, քարող չիտայինք, էն  
վանք ու մեր կեանքն չգոյլայինք, մեր  
էշկլու ընկերներաց լետ մեր սրտեր կը  
խանկէ՞ր: Իսոնք քիոյ միտք կուկեա՞յ  
իմ' կանաչ կտրի՞ճ ընկեր, կ'յիշե՞ս, կ'սի-  
րես քիոյ խօր խէրանն, ազգն ու սիրա-  
կան, ընկերն ու բարեկամ, մեր ումայրն  
աստուր միտքդ կուկեա՞յ թէ չէ՛ էդ  
թագաւորի քեաղաք քե հմէն բան մու-  
ցուց. տէօրմ' էլ չե՞ս խալե ու մաշե ծի  
պէս ինննց կարօտով, խտնն խողն ու ջուր  
մերոննց կ'նմանի՞. էդ տեղ վանքեր կան-  
խտնք իդի ունի՞ն. մեր Քեանտուչու  
պէս, Սօֆու տահնի պէս, կարայ Մահ-  
մուտի պէս, խին նարի պէս, սխալի քեահ-  
րէղի պէս պէօլ պէօլ զուլալ ջրեր ու-  
նի՞ն, որ իդիներն ջրեն, որ ամինիք ջը-  
րեն: Իտոնք մեր թուխա գետի պէս,  
Բէլուվայ, Նարեկայ ու Ռուտանայ առ-  
վըներ ունի՞ն: Ունի՞ն մեր Շամիրամայ  
ական, Անդղայ գետի նման, Փշի, Ան-  
կիւսներաց, Մարմուռ, Պանտիմահվայ ու  
Արջըչու գետերու նման գետեր. ինոնց



մէջ մեր ձկներու պէս ձկներ կուգան :  
Մեր սուրբ խաչայ , վարադայ , սուրբ  
Գրիգորայ ու Կարմիրայ սարերու ու  
դաշտերու պէս ջրարբի դար ու դաշտ  
ունին : Էդ տեղ մեր Էկէստարոյ պէս  
անտար խաղար պատւոյներով իլին այդի  
ունին : Ինտնք հմէնն էլ պէտք է որ ծի  
գրես : Էդ տեղ մեր ընկերներն ինչ կ'ա-  
նեն : Դու ինչ կ'անես , չե՞ս ասե կցեմ  
կցմցեմ էրթամ իմ ինկերներացս խաս-  
նեմ : Խէրիք չէլա՞ւ կարիպ մնաս իմ ըն-  
կեր : Կարիպ վարդ , մե խարցանողաց  
բարե արա՛ ու դուն է կաց բարի :

1875 Դեկտեմբեր  
ի վան .

Քիոյ խին  
Ընկեր .



Վանայ ընկերոջ նամակի պատասխան .

Ուրախ ընկեր .

Քիոյ շարմղած ձեռաց գիր , քիոյ  
եռման սիրոյ թուխթ , քիոյ սրտի կրակ  
ու բորբոք տրվող բարեւագիրն եռանտ  
օրն առի ու կարգացի , վիշամղայ ու մը-  
նացի , արուն լցվաւ պրինտար սիրտս ,  
էլ ուշկ չմնաց վէր ծի , աչքերս մթնտաց  
ու մաշված խողիս պղտորվալ ու տրոր-  
վալ . . . : Ուշկ արի ու ախ ասի . ախ  
իմ Հայրենի տուն ու ինոր դարուն ,  
սրտի կտոր ընկերներ , սէր , ուրախու-  
թիւն , ինանց սիրուն կարօտով սիրտս  
ցամքաւ կսլաւ կողս : Է՛հ , իմ նաղելի խէ-  
րանակն տուն , ախ , իմ սիրելի ընկեր-  
ներ , ախ , ես կուրսան էլնեմ ձեր նա-  
ղելի սիրոյն :

Քեաֆուր վարդի կօկոնի սէս բաց-  
ված իմ անուշ ընկեր , աղօթքան որ  
բացվի շոտ խորանթը քնուցդ վեր էլի ,  
պաղ ու զուլալ ջրերով զըվարթ իրեսդ

վա՛, լէ՛ն լէ՛ն փէշերով սրբի՛, ընկերնե-  
րացդ ծէն տո՛ւ, խացն ու բարիք կա-  
պէ՛ք վէր ձեր կօթ ըխքիով մէջաց, դը-  
նացէ՛ք խաղալով վարագ այ սար, կեապ  
ժողվէ՛ք, խավրժիլ ժողվէ՛ք, սունկ ժող-  
վէ՛ք կօռքարին տակ, վիրին վարագ,  
Ոպարանջան ախրիւրի վէրէն կեր խիէ՛ք,  
խաղ ասէ՛ք, գինու կթխայ չկայ խայ,  
մալադի տանձ պորէ՛ք կուռիկ շինէ՛ք  
տանձով գինի անուշ արէ՛ք, հաց կե-  
րէ՛ք, սէր կանչեցէ՛ք, Հայրենիք երգե-  
ցէ՛ք . թո՛ղ զըզըզուն խովերն ծե տամ՝  
բռնեն, ու թո՛ղ կանաչ ծառերու տե-  
րեներ ծե ծընծղայ էլնեն . դուք ասէ՛ք  
Հայաստան, քարերն էլ ասե՛ն Հայաս-  
տան . դուք ծէնէ՛ք, դուք կանչեցէ՛ք,  
Հայրենեայց երգն ու սէր, մեր խին խա-  
ղերն, խին վառքեր, Ազդ, Հայրենիք,  
բարեկամ, ընկեր, ընտանիք, Հա՛ ի-  
նոնք սուրբ են ու սիրուն, օ՛խ, ես մա-  
տաղ էլնեմ ինոնց խիւղիւն :

Իմ սրտի ընկեր, կարօան ու սէր ծի  
մրկուց, ես մնձրած եմ ու վառված,  
իմ կեանք օտարութեան մէջ փճաւ դը-  
նաց . սիրտս ազու, թոքս լեզու դար-  
ձերի, ես ճղլեր ու կամփի ցօղի պէս բա-  
բաղցերեմ, տարտն ու հոգ, նեղութիւնն  
ու մորմոգ խոզիս նօսրացուցին, փորէս

խիցին , հոգի չմնաց վերէս . ա՛խ , կը մեռնիմ ես կսկիծէս ու ցաւէս : Թէ դիւ գիտես իմ զգացմունքս ու մտածմունքս . խաղված եմ ես , ծե ապիով : Ա՛նվաղկըտեմ իմ Հայրենի . տան բարկ սիրով , սիրով ու կարօտով : Պէր , կարօտ , ազգ , եղբայր , կեանք սիրականք , սիրտ զգացմունք . ա՛հ , իսնք խողի են , խանք լոտեն ու Ստոված սրտերու , ինոր խամար ես շատ կ'սիրեմ . ես ինոնց հէյրաններմ :

Ախրէր , Հայրենիք , սիրելիք ձերնիկեանք ու գեղն ձեր մօտնի . բնութիւն ձեզ օժտերի , սանով գլխով դուք սէր էք : Հայրենեաց շողն ու անձրե , լուսինն ու արե , ծառք ու ծաղկունք , զուլալ ջրեր ու պրիպրխկուն ակունք , դար ու դաշտ , սարն ու արտ , իգին ու գինին , գառն ու մաքին , կաթն ու կարագ , եղն ու մեղրն ծե կ'սիրեն , ձեր սիրտ սիրով շողզած են . դուք իսկի տարա չունիք , բաղդվոր էք ու երջանիկ , խաղար էրանիկ ծե էլնի . ձեր կեանք ձե անուշ էլնի : Դուք սիրտ սրտի տուէք , հոգի խիւղիւ օր ու աստվոր վայելէք . խամբուս խամբուս բնկերով ու խտի դնացէք ու իմ ծարձրված սիրտս էլ դրէք ձեր ծոց տարէք խեա ծե :

Խալուճորէն ընցած տիր մեր պասլիկ  
Խայկին կսայ արէ՛ք մեր ցաւեր , ու ա-  
սէք . Ա՛խ , պապօ՛ , մէկ տիր գլխդ վեր  
վէրու ու տե՛քիոյ երկիրն , ինորնէ՛ծիրն  
ու ոճիրն , մեր կերած լերդն ու լեզուն .  
ա՛խ , փլաւ ու ավիրաւ քիոյ տունն ու  
մեր բոյն . մէր մտաւ մեր արև , կուլ  
դնաց մեր կեանքն ու բարև :

Չաղար Ս . Նշանի վանքի ծոց մրա-  
փօղ եղիշէ Հայր սուրբին ասէ՛ք մեր  
դանգաա թէ՛ խէրիք չէլա՞ւ իմ խօր  
քունն քնանաս , էլի՛ վեր , կալամ բռնի՛  
ստղունցդ . քիոյ կողեր թմոյրաւ , մեր  
մէջքը կոտրաւ : էլի՛ դու տե՛քիոյ խեռ  
լաճերաց օանդուդութիւնն ու չարիք ,  
հմէնքն էլ սըռճիոնք շիտակ , հմէնքն էլ  
աննպատակ , մեր խէրանական տունն է-  
լաւ քեարով քեարատակ , ո՛չ փառք մը-  
նաց , ո՛չ պարծանք , ո՛չ վարդն մնաց ,  
ո՛չ մանուշակ , զմէնքն էլ տխմար ու  
արտում՝ ճէօկիցին օտար գեղն և ու-  
սում՝ , ծըվիկ ծըվիկ էլաւ սէրն ու խաղա-  
ղութիւն :

Ընտիւց դնացէ՛ք Խիւկիւոց վանք ,  
Տիգրիս գետի ափան մօտ սաատաշան խո-  
տերու վէրէն , բուռ բուռ ծաղկանց վէ-  
րէն խէշտրան նստէ՛ք , խմէ՛ք անուշ գի-

նին ի սէր ազգին, ծե քաղցր էլնի ձեր  
կեանք աղնիւ եղբայր անմեկին . կէօվք  
ասէք էն տեղ պառկօղ Դրտաաին անոր  
եարալու ու թուամծ սրտին . ձեր սիրոյ  
յօղն թսղ ինոր ժանտեռք սրբի, պալ-  
քի ոտք էլնի էն էլ մեր քրտինք սրբի :

Իմ աչիչս արգար եղ ու մեղր ընկեր,  
դիւ ծիկ կ'խարցուցես, թէ քիւյ խօր  
խէրանն, ազգն ու բարեկամ, ընկե-  
րական կեանքն ու դորովանքն միաքդ  
կ'բերե՞ս, ինոնք կ'յիշե՞ս, կ'սիրե՞ս, թէ  
չէ էդ Ստամպէօլ քեաղաք քե հմէն բան  
իղկուրուս արաց : Էդ էլ խապարի՞,  
ես կրակի ու կնխենի մէջն եմ, ինոնց  
կարօտ իմ սիրտս խալըցուց ու թափեց  
էս փայնոտ երկրի վէրէն, դիշերը ցերեկ  
ինոնք կ'վնտուեմ, ես ինոնց սիրուն տար-  
տածար էլերեմ . ա՛հ, ես ինոնց արե-  
նեմ, ես ինոնք ի՞նչխ մտքէս կ'խանեմ,  
ես ինոնց դերինեմ, չէ՞ որ ես ինոնց մա-  
տաղնեմ :

Ես էս քաղաքն խկի շեմ սիրե . կու-  
ղի թագաւորի էլնի կուղի Ասաբժուն .  
էս տեղի կեանքն դառնի ու կծու, հայն  
աղի շուրն լեղու, կերերն իրիցած մը-  
սերնին էծու խանձրահամ ու անխամ,  
գինին ասես շախիքմախամ :


Խոսնք խող ունեն, ջուր չունեն .  
ծով ունեն, ցանք չունեն . դաշտեր հմէնն  
էլ քեաչալեն . ո՛չ ախրիւր ունեն ու ո՛չ  
ճաղիկ . խօտերաց մէջ աժնամական ծա-  
ղիկ տնկերեն՝ խոտ չունեն . մարդերն էլ  
սկուն են, հմէնն էլ սուտ ու փուտ են .  
Ո՛չ մեղր ունեն, ո՛չ փէօթակ . տղէզ  
ունեն քաղցր չունեն . մարդ կ'խէթեն  
սիրտ չունեն . իգի ունեն խաղող չու-  
նեն, խաղող ունեն շիրայ չունեն . ոչ-  
խար ունեն կաթ չունեն, էծու կաթն  
ջրով կ'խմեն . շատերն էլ իշու կաթ կը  
խմեն :

Էս երկրի առաթն ու կանահաթ ,  
կեանքն ու մարդ, բարին ու վատ, սիրտն  
ու խողին, կինարմատն ու խաւատ շատ  
աղէկն մեր ընկերներաց դրէն պիտի  
խասկնաս . մեր ախրէրներն ի՞նչ կ'անեն,  
ու ի՞նչ բանի վրայ են պիտի խասկնաս .  
աներու ծռծակ, խաներաց պուճախ,  
քիրէճխաներաց քիւնճ, մախսէններու  
մութ մաղարէք, ծովու և կրակի մէջ .  
էլ ես ի՞նչ գիտեմ դժխոց մէջ իփեր  
մրկերեն : Իմ հալս խօ՛ քեանց զմէնին  
վալէլէրի . էն էլ իմ Հայրենեայց կա-  
րօտ գրած գրիս մէջ կ'իմնաս : Բարով  
մնաս իմ սրտի իշխան ու թագաւոր  
ընկեր . ուրեմն ա՛ռ իմ կթխայ աշիշ .

արտսունք ու կարօտած սրտիս կոտորտ-  
ված վշրունք. բարև արա՛ մեր սիրելեաց  
և բարեկամաց ու Հայրենեայց, որուն  
համար մնամ :

1875 Դեկտեմբեր 4  
կ. Պօլիս :

Քիոյ պանդուխտ  
Ընկեր .



Պանդխտի կնոջ նամակ .

Սիրելի թագ ու պսակ էրիկ .

Էս քանի՞ տարի է որ կուգայ ու  
կ'ընցնի, էս քանի՞ տարի է որ մեր աչք  
քիոյ ճամխի վրէն կ'սալի, էս քանի՞  
տարի է մեր սիրտ քեզ համար կ'մաշվի.  
էս քանի՞ տարի է որ սիրոյդ մէնէն կը  
մնամք կարօտ . է՛հ, վո՛վ իմ վիրաւոր  
սիրտ բիրէր չիւմ քիոյ մօտ որ բանիր  
տիանիր ինոր ցաւերն ու վէրքեր : Ա՛հ,  
չանց հմէն կսկսծաւոր ես եմ վիրաւոր,  
չանց հմէն թռոված ես եմ տրորված, ի-  
րիցած ու մրկած :



Թո՛ղ դարուն գայ, երկիր՝ սարերն ու  
դաշտեր կանաչ, կարմիր ու նարնճի զար-  
դրի . ա՛խ, ես ի՞նչ անեմ ինոնք, ես  
մնացի անտէր ու գերի, ես մնացի որք  
և այրի :

Թո՛ղ ամռվան պտուղներ խասնեն ,  
միլաղներաց պէս շարվին ու կաթիւ կա-  
նեն վէր կանաչ խոտին , լըզմոր լըզմոր  
լըպորվին , ես ի՞նչ անեմ ինոնք, կարօտ  
մնացինք , դու պէտք ես խամ տաս ի-  
նոնց ու խոտ տաս , համ ինոնց համ ծիկ :

Թո՛ղ խօճան ժողվէ արծաթն ու ոս-  
կին , ալին պատվական միւճաֆարներ ան-  
դին , շանց Վանայ ծովն լիցուցի , շանց  
աշխրիս սարերն բարթի , թեղի ու սեխ-  
չի , ինոնք զմէն առանց սէրի առանց  
որտի ինչի՞ս խամարի . ա՛հ , առանց քե  
աստըվորիս մալն ես ի՞նչ անեմ : Ա՛խ ,  
թէ ես քեզ խամար մեռած եմ , էլմ  
կ'ասեմ , աշխրիս մալն ես ի՞նչ անեմ :

Մենք ձեռք տըվինք ձեռաց , ուխտ  
արինք խտրաց , որ խտրաց ապրելինք ,  
խտրաց մեռնէինք . քիոյ սէր տուիր իմ  
սիրան առիր ու մեր սիրոյ բան լսեց էր-  
կին լսեց էրկիր . մենք ուխտ արինք ,  
ու իրարու վրայ խոզի կուտայէնք . ա՛հ ,  
ճղակտոր էլաւ մեր եղունիկ սէր . ու  
քէօքեախան էլաւ մեր սիրտ , դու կա-

ըրիպ գացիր ու ինկեար օտար երկիր ու հեռու մնացիր . դու քրտինք կ'իծափես , ես արտասունք . դու մոյրած ես , իսկ ես պէզորած , օրս աստըվորս գնաց էլ զատ չմնաց : Անշանք կանչեմ սարեր լացուցեմ , ես առանց քե սէրն ի՞նչ անեմ , սիրան ի՞նչ անեմ , ուխտն ի՞նչ անեմ , կեանքն ի՞նչ անեմ :

Քիոյ ճուխտակ այլքնիկ ձագեր կուց կուց արտասունք կ'իծափեն , կուլան ու կ'ասեն . « Մեր խէրն ինչի՞ չիրե , տէտէ մարէ ապա ե՞րբ պիտի գայ » . ծի կ'խարցուցեն սիրտս կ'դադեն . էլ ինոնց խաբելու մաֆար չմնաց , ազգն ու բարեկամ տիւր դրացին , ծի խարցմունք կ'անեն ձեր մարդէն ի՞նչ խապարկայ , ե՞րբ պիտի գայ , էլ խէրիք չէլա՞ւ կարիպութեան մէջ մնայ . էլ խոզիս էլաւ շատերաց սուտ խաբէլուց . ես ձեռքէ գընացի : Տիւր դրացին , ազգն ու խնամին ես ի՞նչ անեմ առանց իմ ծէթ կիկ ձագերու աղին , ես ի՞նչ անեմ որդին , առանց իմ նազելի կարիպին . աշխարհ ծի մութ է . վո՞վ կ'իրիշկի վէր լաճերաց . կարիպիս մեռնեմ իր ճամխներաց :

Մեր տուն տեղ մեր ձեռքէն էլաւ , օտար խավքի պէս մնացինք վէր շոր

խըլի . վո՞վ պիտի մեր նեղութիւն տիս .  
նայ մեզ ողորմի . խեղճ ու անտէր մը .  
նացինք , քեզնից աւելի մարդ չունեմք .  
ի՞նչ կ'ասես սաղ սաղ մեռնե՞մք :

Խէրդ ու մէրդ . խաչիորցերեն . ես ի-  
նոնց տարտն չեմ կարնայ քեաշե . ես քե  
քիչ գրեցի , գու շատ իմացի . շոտ թո՞ղ  
տարե՛ էլ խէրիքի , խէրիքի դառն տա-  
տե՛ք դառտակ նստէք . իսկի չէ տարին  
քանիմ՝ կուռուչ վարայ ճամիսէք , մենք  
էրթանք մուրանք բերենք թիոյ տղէյ .  
նե՛ր պախենք . էլ չեմք կարնար անեւ ,  
ի՞նչ որ տրինք էն էլ խէրիքի :

Վան

1875 :

Թիոյ անբաղդ կողակից

...



Իմ արմաղան որդի .

Էս քանի՞ տարիի որ մե մոռցերես .  
քիոյ ճամպախն աչքելով աչքելով մեր  
սիրտ քռ.քեաչ էլաւ , մեր կարիպ տղէն  
էսօր կուգայ վաղ կուգայ . մեր խոզին  
խալաւ վէր քիոյ ճամխներաց . կարիպ  
դնացիր մե մտքէ խանիր, ու մեր կեանքն  
ավիրիցիր , մե սպանիցիր . մեր հմէն բա-  
րութեն մեզնէ խանին , ա՛հ , և իմ ա-  
նուշ որդիդ մեզնէ խլիցին , իմ կեանքն  
արուն արին :

Դու չե՞ս գիտեր , իմ խիւզիւ կտոր  
որ քե շատ կարօտած եմք . քիոյ սիրով  
մենք մաշված եմք . սիրուն որդի ե՞րբ  
պիտի գաս , գաս մեր գերեզման տես-  
նա՞ս . դուն էլ մեր իրիսին կարօտ մնաս  
մաշվիս ու մղկտաս :

Իմ թափած խըղեղի պէս տրտսունք  
միտքդ չի՞ գար , որ գիշեր ու ցէրեկ քեզ  
խամար գերի էյի ու պրինտար . կ'ուզի  
որ դու զվարթ էլնես իմ վարդ , ծլե՛ս .

ծաղկես . քիոյ խոտն առնի ես , քիոյ  
պարն ուտի ես , ու ետք մեռնի . խա՛,  
էս էր իմ սրտի բան , արևուդ միռնեմ  
որդի աննման :

Ես կ'նստի քիոյ պառկած ուրուրոցին  
մօտ աստըվորիս սէրն մոռցած , քե մեղ-  
րէն անուշ կաթ կ'ուտի , որ դու ուտիր  
քաղցր քուն քաշիր , զօրանիր , որ իմ  
լաց սրբիր : Ես քե կէօ սկնայ ուրուր ,  
տա՛ր տա՛ր օրօրներ կ'ասի իմ անմահա-  
կան որդի :

Քե դնեմ ոսկի ուրուրոց  
վէրէդ քաշեմ մարկրտէ ծածկոց .  
Շուտով քնես , բարով զարթնես  
իմ վարդ որդի խիւղիւտ եմ ես :  
Տա՛ր տա՛ր որդի իմ տա՛ր տա՛ր  
Քիոյ մէրիկն էր պրինտար :  
Երկնուց անանակ քիոյ պնտին թեւ  
վէրու ոչխար քե կաթ տէր ,  
վարդիս իրես շուշան ծաղկէր  
Քամին ուրուրոցդ շատ օրօրէր :  
Օրօր որդի իմ տա՛ր տա՛ր  
Քիոյ մէրիկն էր պրինտար :  
Չեռացս խինի վէրէն պառկի  
Մեր Հայրենեայց սիւդ ծըծի ,


Աստըլած քեզի գրկէր շախէր  
Չիւմ քիոյ մէրիկդ խանք առնէր :  
Ուրո՛ւր որդի իմ տա՛ր տա՛ր  
Քիոյ մէրիկդ էր պրինտար :  
Քե շատ օրօր տար տար սսեմ  
Քաղուխ իմ վարդ քե մեռնեմ :  
Քախն ու փէտատ առնես տանես  
Ափնիք այգին փորես ցանես :  
Օրօ՛ր իմ վարդ ու տա՛ր տա՛ր  
Քիոյ մէրիկն էր պրինտար :  
Տար տար իմ վարդս ու օրօր  
Աստըլած քե տայ զվարժ օր  
Առնես կիւթանն ու խարօր  
Խոց վաստրկես քիոյ խօր մօր :  
Ուրո՛ւր սսեմ քե տա՛ր տա՛ր  
Քիոյ մէրիկն էր պրինտար :  
Սուր , գէրջնտին ու մանկեաղ  
Դի՛ր վէր թիվիդ դնա՛ դաշտ  
Կտրիճ հէճնած ցորէնքաղ  
Պէքօլ արա՛ դու իմ վարդ :  
Օրօ՛ր որդի իմ նանիկ  
Պրինտար է քիոյ մէրիկ :  
Օրանը կըրի սէլերով  
Խաղ ասելով բեր լից կալ

Յորէն ծէթի խով տանով  
Խայան արա՛, ի՛շ արա՛ր :  
Օրօ՛ր իմ վարդ ու նանի՛կ  
Պրինտար է քիոյ մէրիկ :  
Ա՛խ , ե՞րբ կ'էլնի պրինտար  
Քիոյ մէրդ ուտի վարդիդ պար :  
Օրօ՛ր իմ վարդ ի՛շ նանի՛կ  
Պրինտար է քիոյ մէրիկ :  
Ա՛խ , ե՞րբ կ'էլնի կ'տքրճնաս  
Ծիւլ ծալե՛ծալ փառք ծփաս ,  
Եւ ինճնցից թէօլդ առն՛ես  
Որ մեր իգին ավիրեց  
Որ նորատուկն մեր խլեց  
Որ գինիից մեղ զրկեց  
Որ բարութնից մեղ լօպկեց  
Որ սէլ , սոնին կոտորեց  
Որ մեր դութանն լեխուտեց  
Որ խարօրն մեր առեց  
Որ մեր դաշտերն օղօղեց  
Որ մեր տուն , տեղ կործանեց  
Որ խօրօխպէրդ բսպաննեց  
Որ մեր երկիրն էլ ճռփեց :  
Կ՛հ , իսոնք երբ որ ես տխնամ  
Մեղրէն անուշ քե կաթ տամ

Հայոց հրեշտակ սիրուն վարդ-  
Օրօ՛ր կ'ասեմք քեզ վարթ :  
Քեզ շատ օրօ՛ր ու նանիկ  
Երջանիկ է քիոյ մէրիկ :

Տէսա՞ր պալաս, տէսա՞ր քեզ ինչ ա-  
նուշ խաղերեմ ասեր, որ դու անուշ  
քուն էլնիր, քեզ կաթն ու մեղրեմ տը-  
վեր, որ դու ուտիր զօրանիր, իմ ցաւիս  
դեղ ու դարման էլնիր: Քիոյ մէկ ժմտալ  
ծի սիրտ կուտար, քիոյ մէկ ծըծ դալ ծի  
կեանք կուտար: Ա՛խ, իսոնք հմէն ինչխ  
մոռցար: Չեռքդ թողնեմ, խաղար տիր  
ոտքդ կ'պաքեմ, թո՛ղ արե՛ ել հէրիքի,  
դու կարիպութեան, մենք կարօտու-  
թեան մէջ խորովիմք. դու իւրիշին աչ-  
քը մի՛ տար, իւրիշի աչքը մեզ լոյս չի  
տար: Քեզ շատ շատ կարօտով բարե  
կ'անեն. հմէնքս էլ սաղ սէլիմենք. մի-  
այն քիոյ նաղելի տեսուն յոյժ կարօտիմք:

Կաղընտի էրկչբաթ      Քիոյ պառաւ մէր  
վան.                                      Դունն .





Քեայ կնիկ .

Քիոյ գիրն առի կարգացի . կրակ  
թափաւ վէր ծի . խէրս մէկ տեխէն թե-  
խըս կուտայ , դիւ մէկ . էն կ'ասի խա-  
լիվորցայ , կարողութեն չմնաց վէրէս ,  
դիւ կ'ասես , սեւաւոր եմ ես , կսկծա-  
ւոր եմ ես : Ապա ե՞ս , ապա ե՞ս : Էն  
կ'ասի արե՛ գլխս դի՛ր գերեզմանն ու  
ցամքած աչքիս վէրէն դու խողը ցանի :  
Գու կ'ասես անսէր մնացի , անտէր մը-  
նացի , իփայ մրկայ , ձեռաց դնացի . էն  
կ'ասի էլ չեմ կարնար ապրել , խողիս  
խասաւ ճիտս , կ'մեռնեմ ես տարտէս ,  
կսկիծէս ու ցաւէս : Գու կ'ասես ճէօլտը-  
վաւ մեր սիրտ , ձըվիկ ձըվիկ էլաւ մեր  
սէր , ձեռաց դնացի ես : Գու կ'ասես  
խօճի կէօլէօնած սսկի ու արծաթ և պըս-  
պըղուն ակներ առանց սէրի , ու առանց  
սրտի ինչի՞ս խամարի : Խէրս կ'ասի պարտ-  
քընտէրներ ծիջ տարան դրին բռնա-

տուն կեանքն էր խելքս գլխուս թռուցի,  
կեանքն էր որ մեռնի, Գու կ'անես մենք  
ձեռք տուինք ձեռաց, ուխտ արինք որ  
խտրաց ապրէինք, խտրաց մեռնէինք :  
Խէրս կ'ասի, հայ վախ, խաղա՛ր վախ  
մեր խրու խարսի պէս հասած ու զարդ-  
րուած իգին թօռօմաւ, մեծբաւ դնաց :

Քեայ խօրօտ զրոյ կնիկ, արե՛ խե՛մ.  
արե՛ ըստօյ մէյմ՝ խեմ՝ ինչխ խտրաց  
պիտի ապրես . քիոյ ոժըդ կ'ախտի Ա-  
կըռփու քեարի խարս Փէսի պէս էրկէն  
փէտէ կողով շըլիել մէջն իլին քէօռ տիլ  
ու խորանթը հէրից դիւրս խանել ու  
խոր ինոր ծախել . է՛ աղէկ, թէ որ կար-  
նա՞ս նա արե՛ ըստօյ խտրաց ապրենք,  
կալ շաղաղի, հընթի ինանք Չըմգըմի  
մաղարի պէս մաղարից աիւրս խան, տար  
ծախի վտրայ վաստի խտրաց ապրենք .  
վ՛՛վ կ'ուղի ուր աչըր կոր էլնի, կիւթնի  
առատամի պէս էրկէն ու ծանար լիւծ  
դի՛ր վէր թիվիդ Արտամտու ախբրի  
վիրվի Շամիրամայ Ծամքեարի կանտար  
ճիոչ պալբեն դընենք վէր թեվըներացս  
էրթանք չիւմ՝ էրկու խաղար մըզըզա-  
պէօյ տեղ ապրենք մէկ տեղ, Գու դի-  
տե՞ս որ մեր տավըրներն տմառ կ'քանեն  
ձմեռ կ'կայնեն, մենք էլ ինոնց կ'խաչ-  
խենք, ըստայ մենք տալրի շափի էլ պա-

տիւ շունեմք, հանգիստ շունեմք, ա-  
մառ, ձմեռ, դիշեր, ցէրեկ կ'տատենք  
կ'բանենք. մեր ձեռքերն ու մէջքերը  
կպրէկտորսս դարձերի, մեր սիրտ ցամ-  
քերի, մեր թեւի գլուխ կէօմչու վրդէն  
էլ շատ թանձրացե, տրմպրզեր ու խաս-  
տացերի, տառթ կապերի մեր լրժառն  
դիւ խապարե՞ս թէ չէ. աէ՛ արե՛ ասլ-  
րենք խեռ քե : Մանկեար ալիւր մաղել,  
խմոր շաղղել, թէօնէր վառել, խաց թը-  
խել, բիւրթ կըզել, առչկան մանել, թաթ  
կխաճել, լլաց անել, չախրակ մանել,  
պամուկ կըզել, կով կիժել, մածուն մէ-  
րել, փակեախն ալիլել, կու թալել,  
տախտ ալիլել, ծըծիւմ՝ զարնել, տեղ  
վէրցունելուն ու փռելուն կ'նմանի մեր  
գործ : Գա.ք մեր վալէլեր քեար ու քըս-  
փը սեսնայք, քիթէճաններաց մէջ մեր  
ձեռք ու ոտք վառվերի, խաներաց մէջ  
մեր կեանք ջնջոց դարձերի . մեր մէջքն  
ու միջունք, թե՛ն ու թիկունք բեռնե-  
րու աակ խուրթ խաշ էլեր ու փտորվերի .  
մեր ճայտի քրտինք ծովն ու ցամաք շա-  
ղաղեց ու լլաց, մեր կեանք շոտունց  
կուրխաւ շոտունց խալաւ դնաց : փա-  
ֆօռներաց մէջ շատ տիր փափաացինք,  
դերեզմնի մօտ դնացինք, շատ տիր խնխ-  
տալիս էլանք աշխար թողիցինք . աէ՛

արե՛ խտրաց ապրի ու խտրաց մեռի :  
Մէջ կիռուծըլուն սև կուտ դարձանք ,  
Թարսխանի մէջ կրակ բոցի մէջ մրկանք  
մեռանք , սլարութխանի մէջ ումպրն էլ  
աստըվորն էլ , կեանքն էլ օրն էլ ու հը-  
մէնն էլ մոռցանք . մեր կուտ վաստկելն  
ու մեռնելն մէկի , մեր կեանքն դըժու-  
խոց մէջնի . տէ՛ արե՛ խտրաց ապրի ,  
սէր ունիցի , սիրտ ունիցիր , ուխտ պա-  
խիր : Ո՛ր քեարասիրտ մարդ չիսիրեր իր  
Հայրենիք , հայր , մայր , քոյր , եղբայր ,  
տիւր դրացիք , բնկեր , խնամիք . վո՞վ  
կարնայ ա՛հ մոռնալ իր սիրտն , կամ որ-  
դիք կամ ընտանիք : Ախտեց առ ինք ,  
մէկ տիր մեր իլիկն ծռվալ , տըղնենք  
ասինք կստրաւ , ցաւ վէր ցաւի , պարտք  
վէր պարտքի վէր մե դիպվալ , չիւմ մեր  
վիզ խասաւ . կէ՛օ էն մուխնի որ չիւր  
մկայ տէլ կէօ կ՛մխանք , պէմուրատ է-  
լանք ու կարիպ ինկեանք , շապկիցին  
մեր պարտքն ու տէօկեանք , էլ ո՞՞ր չք  
մնաց վէր մե , վուջ էլաւ մեր կեանք ,  
մնձրաւ մեր օրն ու արև էրութան մէջ ,  
գէրիութեան մէջ :

Ես քիչ գրիցի դիւն շատ խասկցիր  
կ՛ասես . դու չե՞ս գիտեր որ ես դասըմ  
խառով ու խուճար մարդոց պէս ծիք գի-  
նիի ու սավառայի չեմ տուեր , որ դիւ

վէր ծի նազ կուկեաս . համ ես սկուն  
առակ շառակ նազ ու տուղն շատ չեմ  
վերուցե , ու իսկի գէշ ու կեղտոտ բա-  
ներ չեմ սիրե : Միտքդ չէ՞ որ յերախա-  
նէն մե պառկած տրուն ասաց . « Որդի՛ք  
դուք մինչև ի մահ միմեանց օգնութիւն  
պիտի անէ՛ք » . էս մէնակ ծիկ խամա՞ր  
ասաց , թէ քե էլ մէկ տեղ ասաց . ես  
պարտք կուտամ , դուն էլ տուն պա-  
խի , չիւմ տիսնամք ինչխ կ'էլնի մեր  
հալ : Խա՛ պիտի ասես , սև սուգ էլնի  
կնիկն ինչխ տուն պախի , ի՞նչխ պիտի  
պախի կոր չես անկեալ չես թեւ մանի ,  
խաց թխի , քեախանք արա , առջկան  
մանի , թաթ կիռուծի ինոնցմով ապրի ,  
ապա ի՞նչխ կ'էլնի , զմէն բան ու բեռ  
վէր մե՛յի : Անկիտաթ կութեն պէտք չի .  
ի՞նչ լալկան աղի պէս ինկեր իտիվէս կը  
թըյթընկեաս . պարտքն զմէն էլ տուի ,  
մէկ ճամխու փարայ իյնի ձեռքս կու-  
գամ :


Տղէյներ կարդալու կ'երթան թէ  
չէ . սլանկիազներաց պէս ըստեխ ընտեխ  
լիպող լիպող կան կուգան , աչքերդ ա-  
ղէկ խան ինոնց վէրէն , վերջ փէօյման  
կ'էլնես փարա չանե . մեր ունեցած չու-  
նեցած ինոնք են : Մեր քեռաղոնց քը-  
րոջ տալոջ տէկէրկնկան լաճու անիրոջ

խեա, էրկու կտոր սապոն, իրեք հաս  
սանար մէկ հատ էլ խայլի էօրէօխկիցի  
առնէ՛ք, քէնիիս ու ինոր մօր բարև ա-  
րէ՛ք, մեր թաղըցոց հմէնին էլ բարև :

Ստամպէօլ 1875

Վ. ԴԴ .

Որթ կաթողին :



Իմ խալիոր խէր .

Իսկի շես խարցուցե մեր նըք ու տը-  
քը, ու սև կապոս կեանք : Մեր ան-  
կին ինկեած քրտինք, ու ժուռկուճօխ  
էլած միտք : Մեր լեխըռաված սէրն ու  
խոգին, կքտրաված սիրտն ու ինոր միջին :  
Մեր ցաւն ու ցուցանք, նեղութենն ու  
տօկեանք, ու արնոտ տառապանք :

Կալտընանք տաշին խօծիմ՝ տան մը-  
շակ էլանք, լերդ ու լեղու կէրանք,  
իրիսնին ժուռ ու թըթիւ, զրոցնին  
քեանց նեխած ժաթիկ կծու, շանց ա-  
կընճի կեղտ դառն, ու շանց օձու լե-  
ղուն ճըռմառն : Ինոնց կեր իփիցինք,  
տախան ավիլիցինք, կուեն թալիցինք :

չեռն թափիցինք, ամաշակոսին : Շատ  
տիր վէր ծիկ ակլակ դրին, ծի խըմպը  
ես ասին, սարի առջ ասին, վանից  
մոխրաթավալ սին : Ավոր չէ, ծիր դիւրս  
մըլիցին, իմ արգար հախն գնաց ինոնց  
գինն, իմ սօլն ինկեաւ տանիս, վառի-  
ցին իմ սիրան ու խոզիս :

Իսանք տուն ունեն, տեղ ունեն, խէր  
խաւատ չունեն : Պէօլ պէօլ արծաթ ու  
սակի ունեն, սէր ու սիրտ չունեն :  
Թուղթ, թամասիւկ, ալմաս գինտ, ոս-  
կի պլաղիւկով կէօլէօն կէօլէօն լըցվերի  
ինոնց սընաքլիներն չում պուռկ . աման  
ծիկրի կտոր չկայ ինոնց փոր, մեր վէ-  
րէն այվընի պէս կիրիչկեն, արունին  
ցամքե ու սրտերնին մեռերի :

Ըսաքրիւս գնացի սաֆուաճիութեն  
անելու, մամլաներով ավաղ կրելու . էն  
տեղ թողրզվաստակ կեախն էր էլնիք  
ծօլատակ, մեր մամլան շուռ տէպաւ,  
վարսետս խեխոք վաւ, արսվերկու սը-  
հաթ անսրվաղ մնացի կուծրված մամլի  
սրկի վերէն, չիւմ Տալեան լիողվորներն  
ծիր տէսան ու էկան խեխոք վաւ խըլ-  
ցուցին : Ախ խէրիկ համ լիւսովեն համ  
սիրով . ես կուրսան էլնեմ ինոնց ար-  
փրչմի պէս կակուղ ու ճավահիրի պէս  
պըսպըղուն իրիսին ու սրտին : Կամուանմ

կէր որ պըլլն՝ թրկով զարնիր իրիսէն ա-  
րուն կ'կաթէր . էն իմ' խիւզիւ խրիչ-  
տակն էր , էն ծիը ազատօղ Աստըվածն  
էր :

Էն զուլումաթ փորձանաց խըլըսայ  
որ չէ՞ , գնացի վարժատանմ' անտես է-  
լայ , մնացած խելքս էլ էն տեղ կուրի-  
սիցի . սուրուսով , կապոտ աչք վէրակա-  
ցում' կար էն գայրոցին , տամուն տասը  
տիր ծիը կ'տըփէր . տէ' տախտ լվա' ,  
տղէկտեկաց իտիվէն գնա' , թապախ բե ,  
թապախ տար , Պէկօղլուէն չիւմ' Նէնի  
ճամիի բակն գնա սարսաղմիւնք ա'ռ ,  
ծիը բանցուց ինչիս անատուն տավար ,  
իտին վերջ իմ' սիրտ ծակծկեց ու ծիը  
տիւս խանեց , ու իմ' կրած աչկրանեկաց  
թապախներաց փարէք կէրաւ գնաց .  
բան չեմ' ասե , Գիրիստոս միայն Տէլն  
ինոր արև լօպկէր , որ իմ' արուն քըր-  
տինք չուտէր , ծի չգրկէր :

Էս բանն էլ եփ սկնայ էլաւ , գնա-  
ցի պախըլի խանութ բռնիցի , շէնիկ  
մէնիկ զմէն բան շիտկիցի ու կտորմ' նա-  
ֆաս էկաւ վէրէս որ չէ՞ , էլմը սէլի ա-  
ռատամն կտորաւ , մեր բարեկըմի մէկուն  
քեաֆիլ էլայ , ծիը խկեց պարտքնտէրոջ  
ձեռք , ինքն վիլկեց , փախաւ , կրօղ  
մեր ճիտ կպաւ , ինոր խամար անչամ'



տարին ու բերին մե , որ մեր զարն ու  
 զաւլատէն որն մկներ կէրան, որն էլ չէ  
 նեխան ու փտան . իաին խօսքն ասեմ ,  
 մէկ դտայ ծի պէս մերկ մէկ տեղ թօ-  
 ղինք փախանք դնացինք կարայ Հիսար ,  
 էն տեղ լօկանթայ բացինք , գլուխդ  
 չցաւցնեմ , ինորմէ վնաս քեաշիցինք էլմ  
 էկանք Ստամպէօլ , ջուր ծախիցի , համ-  
 լուծ են արիցի , քանիմ կուտ ժողվիցի . . .  
 խանի օտապաշուծեան կետտիւկն դը-  
 նիցի , նա պըխէր էլնէր նա պը սալա-  
 մաթ , քեանիմ օր քեաշեց ու շքաշեց  
 մեր խանի էօտի մէկն զիշրանց գիողեր  
 լօպկիցին . տէ տե , քեար քռէն վէր  
 քեարավանից , Առաւտուն է էօտի տէր  
 խօճէն էկաւ , իրիշկեց տէսաւ որ գիող  
 էր մտե ինե ու չըլտե , աչքեր խփեց ,  
 բէրանն իբաց , ապըռկաւ իմ եախան ,  
 էլ բան չմնաց որ շասաց , խէր , խատած ,  
 խոգի , փտած հմէն խառնեց վէր իրա-  
 բու , պակազրաւ ու ասաց . փոփուռ  
 արվաւ վէր պռկներաց , իրեսն ախնիր  
 սըռ ջվեր դարձերէր բարկ քեացախ . քի-  
 թէն մաթէն որ լիւմ իյնէր գէտին խա-  
 զար պրախւճ կ'էլնէր , իմ լեզիս պատ-  
 ուեր էր մէջ փորիս , կեռիկս կապլաով ,  
 մունջ մեռել դարձերի ես . վրձ էր տի-  
 սե սկուն բան , տունս ու տեղս էլաւ

վէրան : Կ'ուզեմ որ փախնեմ հիւ հիւ  
ոժը շմնացե վէրէս , կատամս կոտորե չեմ  
կարնայ տեղէս լէլայ եւ լըսլրտայ , ծուխ  
քքթէս կ'էլնի , փորս կ'կայլըրի , կըծկը-  
վայ , քիայշմըշկվայ էկայ իրար . ուշկ դը-  
նաց գլխուցս , հա'ասի , վաղուց ես մե-  
ռայ . հող , մոխիր էլայ գնացի խըլտայ :

Էս մտածմանցս վէրէն , աշխփոց կեախ  
քեանիմ նիզամներ ծի կոր էծու պէս  
տըվին առջևնին տըմըշկլիլով առան տա-  
րան , ախոր կ'տանեն , չեմ գիտեր .  
Եա'րապ , պիտի մորթըվեմ , զաթի ինչխ  
ասի ես վաղուց մեռերեմ : Ծիը դրին  
մութն ու Ադամայ խավար պոնատունմ ,  
բնկերներս ուրիշ խոր վիրապմ . էրկթէ  
խաստ ու կոպոնատ զընծիլով կայըրխ-  
նիցին պըլակներս ու ոտքերս . կըլըրվայ  
մազրակիմ պէս կզուայ ու էկայ իրար .  
տաք ու պաղ քրտինքի մէջ լիող կու-  
տամ , մահվան տիողն տըվե վէրէս : Ահ  
Ադամայ խաւարին մէջ մէնակ կ'պըլըչամ  
եւ , մէնակ ու լեղապատառ . ինչկան-  
տար որ այլաճէպ բաներ որ կան իկեր  
չորս պիւլորս առեր կ'խըրվան ու կ'ու-  
ղեն ծիը խէրնըհաղ տեղ ուտեն , կուլ  
տան , լեղիս պատուեր , սիրտս պաղե մէջ  
փորիս :

Էրկու ամիս ըսկուն մնացի անտէր

անտիրական, մէջ խող ու մոխրին, մէջ  
կեղտ ու կույին. նեխախոտոյ ևս. . . .  
Որթեր կ'եռին մէջ իմ անձին, ձիւթ ու  
ղին փախան իմ տիւր դրացին, չէլնի որ  
իմ լէշս տիսնան, իմ գէշս տիսնան, իմ  
սրտակից բարեկմներ պնչերնին բռնիցին  
փախան ու զատվան ծիզնից, լացին ու  
գնացին վազէվազ որ իմ գերեզմանն չք  
տիսնին, իմ գժոխք չտիսնին, սրտերնին  
չցամքէր, արենին չմեռնէր, գէշ խու-  
տու ու կսկծու, կսկծու ու ախու:

Իրիկվնէ իրիկուն մէկ կտոր խաց կը-  
րիրին բանտի ծակէն կ'թալին ներս ու  
ատրմներ կըրճտելով կ'էրթին: Ա՛հ,  
անասուն գառցայ ևս, մոռցայ արևու  
պոծառ գոյն, յոյսն ու յարութիւն,  
կեանք, բաղդ, փառք, երկինք, աստ-  
ղունք, լիւսնակ, բարեկամ, ազգ, ա-  
նուշն ու խնամք, հայր ու մայր, խո-  
րատն ու հոտն, սիրելիք, մտերիմք, ըն-  
տանիք, որդիք, կարճեմ ինոնք էլ ծիկ,  
ինոնք էլ ծիկ: Ա՛խ, վրձ էր անիծե  
ծի, որ անտէր պիտի մեռնէի, օտար  
տեղ, անմեղ տեղ, կեղաի մէջ, մաղարի  
մէջ, նիխի մէջ, որթերու մէջ:

Էրկու ամսէն խու ծիւր խանին էն  
հոտած գէրեզմնից, տարան դրին բօլիս.  
մէկ ծռտոտ խաւնոցիմ պէս նեղ տեղմ,

զքնճիլներն ձեռքս, ոտքս կտրտեր մներուս մէջնին մտե. եռկծալու տեղ չկայ, պիտի կայնի ոտաց վրայ. ցո՛ւրտ ցո՛ւրտ որ մարդ կչորնայ ծիբ նսարցուցին տա, տամուն տաս տիր տարին ու խարցուցին շանունդ ինչի. քանի՞ տարեկանես խօրդ անունն ինչի. ի՛նչ զանահաթ կըբանես. Ֆիլան օրն տի՞որ իր. էօտին դուռն դո՛ւ բացիր. ոսկիք տի՞որ դրրիր. թէ չէ՛ քիոյ ընկերներդ գողցան, մե ճշմարիտն ասա՛, որ քե աղատենք. թէ որ իրաւ չասե՞ս, կ'մնաս բօլիս կըմեռնես. Անթիւ տիր ծիբ տարան կէօսկնայ խարցուցին :

Անչամ էրդ վայ, անչամ պատըռտ վայ, էրէցայ գէրեցայ, արուն արտսունք թափիցի, ես խապար չունեմ ասեցի, ես էօտին դուռ չբացի, գողութեն չարի, էլմ չունեմ, լաղայ չունեմ, խեղճ եմ, աղքատ եմ, ձեր որդու ձեր խիւղիւ բաղդն ինկերեմ, մանէ՛ք, մ'էլնէ՛ք, ես թախըմ որբ ու որէթի տէր եմ, ձեր գլխուն մեռնեմ, ձեր արեուն կուրպան էլնեմ, իմ կեանք նեխաւ ու փտաւ, ես փարան ի՛նչ անեմ, ոսկին ի՛նչ անեմ, ձեր խօրօտ ու աննման թագաւորի սատաղէն ծիբ խանէ՛ք էն քեամպախ դժոխոց բօլիցէն :

Վո՞վ ականջ կ'անի մեր արասունքին  
մեր մղկտան սրտի լացին ու խապրին ,  
մեր աղաճանքին : Գու՞թերնին ցամքեր  
էր , սրտերնին կոռ՞ծացեր , էս վո՞վի  
մա՞րդ , թէ անասուն արունին մեռերի,  
խոնք չեն խասկնար ողորմութիւն :

Ինչխ որ ասի դաշին , էրկու տարի  
սիւլոր էրկօր մէկ տիւր հմէն կեախ ծիւր  
տարան բերին , էլմ սկուն խարցուցին ,  
չիւմ մեր ընկեր խայեր մեռան բօլիցին  
մէջ , անմասն ու անհազորդ . օձերն ու  
կարիճներն էլան ինոնց հմէն օրվան ,  
գիշեր ու ցերեկվան բարեկամներ . որ-  
թերն , ահ , պոչով որթերն էլան ինոնց  
պատանք ու գերեզմանք . սիրտ չկար  
որ լար , ձեռք չկար որ լվար ինոնց պէօր-  
պանած ու պէյպիկուած ուսկռտանք :  
Ա՛խ , անմեղ տեղ մեռան ինանք , էր-  
կինքն էլ պաղ պաղ իրիշկեց տէսաւ ի-  
նոնց ահն ու մահն : Վա՛հ , դժոխքն ու-  
տէր պատճառ էլնօղի սիրան ու խողին ,  
սատանէն իր քիարվլսովն էլնէր ինոր կե-  
նաց բաժին , որ էս սև ու կապուտ օրն  
չբերէր վէր մե :

Լէզվնիս վրայիս թիցիկ պէս թանձ-  
րացեր , չորցեր ու կպեր էր մեր բէրնի  
առիք , աչքերացս խաթիւնիկ ցամքեր  
էր կարօտուց , սրտերնիս դառնացեր ու

խաղեր էր կսկծու, խղճու, ա՛հ, և նա-  
 ղելեայց և սիրելեաց սիրու ու կարօտու:  
 Խոզինիս ճբմաթուեր պըղիկ պըղիկ է-  
 լեր ու ճաթլեխ մեր սրտի ու ճիկրի պը-  
 լընկ շիվար տղէկնեկաց կարմիր խնձոր  
 իրիաներաց, շուշանածալ պուկներաց,  
 ճոռ ու թուխ խօրօտ աչքներաց սիրովն  
 ու կարօտով: Ա՛հ, հայրենեայց սէր, ըն-  
 տանեայց սէր մէկ տեսէն, վտանգ կե-  
 նաց, արհաւիրք թշնամեաց մէկ տեսէն  
 մեր սիրտն ու թոք լըմկիցին, ու ժըժը-  
 նեցին մէջ մեր փորին: Ա՛խ, իմ սրտի  
 սիրական մեղք ու կարագ ընկերներացս  
 կայնել մաթ մաթ իրիշկել, ծի օգնու-  
 թենն անելու խամօր ըտեսխ ընտեսխ  
 վաղել, ամօթու և ախու կրակ քրտնելն  
 սիրտս զմէն զմէն կ'խաշին: Ընտանիքս  
 ու սրդիքս իսկի մտացս չին էլներ: Պըռ-  
 նատան մէջ չարչարանաց սարվոյ, ոճլին  
 ու որթին կ'համբերի, էրէկվան չարչա-  
 րանքն էս օր կ'մոռնի, էսօրվան նեղու-  
 թենն վաղ, աման տան անտիորիս ան-  
 տէր մնալ, լալն ու կսկծալ, զավակացս  
 անխէր մնալ միտքս կուգար, խելքս կ'էր-  
 թար, խոզիս կ'ծխրկըտար, անձս կը-  
 րովիէր, սկնայ խոկսով աչքս կպեր ա-  
 նուշ քներեմ, ու էրազն ինե տէսա որ,  
 Էվանայ առաջնորդարանին մէջն եմ:

Գարրէլ Եպիսկոպոս Սրբազան փառաւոր  
կերպով նստե իւր մէկ տեխ Շարանա-  
ղէն, մէկէլ տեխ Խէրապետ աղէն, Էրկ-  
նամուրուս ու Խաճանենց Մ. Խաճան  
աղէն, Այազենց Աւիտիս աղէն, Թաճ-  
մբնով կալճոնց մէնէն, Փարճիւլենց մէ-  
նէն, Պստիկ Մինաս, Շախպանտար, Պա-  
նիր ու մէկ քանի խատ իւրիշներ կին,  
նստեր շիւռայ կ'անեն, իբրև թէ, թա-  
գաւորական հրաման էլերի, որ իւր նի-  
զամեկաց խամար կչլայ շինվի, էն էլ  
մէնակ մեր ազգ պիտի շինի լօռլօռընայ,  
ու ազգն բիրեր ժողվերեն սուրբ նշան  
փարայ ու փէտ կ'ուզեն զօւով: Իսոր վէ-  
րէն թարգի պաշի Մ. Ասպատուր ու քա-  
նիս իւր պէս սըսլախ մարդեր իկեր տա-  
նաֆներաց գլխաւորներու խետ կ'ասեն .  
«մենք ազքատ ենք, կչլայ շինք կարնար  
շինել. թագաւոր մեզմէ շատ զանկինի .  
Սրբազան, էս կչլայ շինել տալու սասպապ  
գուենես ու քիոյ մօտ նստող ճիոչագլօխ  
աղաներենն . ժողովուրդն պիտոր լօպ-  
կէք ու տկլոզէք զմէն զմէն, ինչի՛ թա-  
գաւորին կչլայ պիտի շինէք տէյի, որ  
ձե իֆթ իխարի նշան դայ ու դուք փառք  
վաստըկէք, ու ժողովրդոց արունով ձեր  
իրես կարմրնայ, ժողովուրդը զրկուի ու  
կուրիսի դուք մեծնայք ու փառաւոր»

վի.ք՝ : Իսոր վէրէն շատմ' ասքեար բերել  
տուին առաջնորդին հրամանքով. խեղճ  
Գարրէլ Եպիսկոպոս, վիրի ասած ճոշա-  
ղէքտեկաց խապրից ախւրս չէր կարնար  
էլներ. ինոնց ձեռք տամի քեար դար-  
ձեր էր, ո՛ր կողմն ուզին էն կողմը կը-  
դարձուցին : Մէկ էլ տէսանք ասքեար-  
ներն էկան Մ. Աստուրն էլ Մաստուրն  
էլ, Ալխասն էլ Մալխասն էլ, աչքխփոց  
կեախ բռնիցին ու մէմէկ սամարուն ձիե-  
րաց վէրէն խէժուցին հայտէպրէ սիւր-  
կիւն արիցին. խեղճ մարդոց ո՛չ թող  
տուին իրենց սիրելեաց կաց բարով ա-  
սել, ո՛չ խաց առնել և ո՛չ ալ շապիկ  
ու փոխնորդ առնել : Ոտքերնին կապի-  
ցին զքնճլով ձիերաց փորի տակ, թեվեր  
կապիցին քեամակնին անմեղ տեղ հայտէ  
պապօ՛ թարվղիւ տարկխէն մեռլի պէս  
առան տարան Ստամպէօլ. բռանկան,  
իփլիկխանան, թէ թարսխանան՝ մարդ  
չդիտեր, մեացածներս էլ նախրի տավրի  
պէս իսկեցին առջևնին տարան էգէս-  
տար ու նորատնկներ որ ինչքան որ պար-  
տի ծառ կայ կարեն կշլի շինութեան  
խամոր :

էլ մեր աշխար Սոտովի աշխրէն ա-  
վիլի նեղութեն կար, աչքելնին որ ծառ  
որ տէսաւ կարիցին, մարդու լացին ու



կոծին ականջ չարին, մեր մաղրակայ գլօխ  
իշխաններաց խաթրի խամար : Տէօրն է-  
կաւ որ մեր ծառերն էլ կտրեն , քեա-  
նիմ խիւկիւ փարայ տուի , մեր տէօրն  
ընցուցի , ծառերն խըլսցուցի . էն սա-  
տաղին ուրիշ աղուլի մէկն էլ էկաւ վէ-  
րէն , ապուկաւ ծառն կտրէլիւ , ճէօպս  
էլ հիւ հիւ փարայ չկար , անօրէն ա-  
ռեր պալթէն իկեր ծառի գլօխ , ինչխ  
անեմ ինչխ չանեմ , կավաղն վէրցուց որ  
զարնէր ծառին , ես էլ համան փաթիւթ-  
վայ ծառին . չասես որ էն իմանսըզ մարդ-  
պալթի սուր բէրնով ոժով կպուց մէջ-  
քիս , տըռեայ խոտէ , ես մեռայ մէրիկ պօ-  
ռացի , պօռալուս պէս զարթնայ տէսայ  
որ էրազ էր : Այս էրազս ես Պօլիս կը-  
տիսնայի , բայց դէպքն վանայ մէջ վա-  
ղուց կատարուած էր : Ու տէսայ որ  
մարդմ կայներ էր գլխուս մօտ ծի ա-  
կրիճկլայ կուտար , որ էս օր պռնատու-  
նէն կ'խըլանեմ . ու ծիբ առեց տարաւ  
Մեծաւորի մօտ . ես տէլ էրազի տրպուն  
չում էն կեախ կ'տողի զարպնդից : Էն  
Մեծ մարդն ծի ասաց ըմի վախնայ ծըծ-  
ղալով , քե բան չենք աներ , գնա՛ քիոյ  
բանիդ . քե մեղ չկայ , բստիւս ետք գու-  
ազատված ես : կզվայ էօթ խազար տիր  
ինոր ձեան պէս սէրսուփ փէշեր պըռչ-

պըռչալէն պաքիցի, և ուրախութենէս  
ճըժու պէս ընքիւռ ընգիւռ լացի. վո՞վ  
կարնայ իմ ծով ալիչս արտունքն կըտ-  
րել, իմ էլած սիրտն առնել, ըսկուն որ  
էն ճիող աղէն էլ լացեց ծիխետ. ա՛խ,  
ևս ինոր խիւղիւն կուրպան էլնեմ:

Է՛հ, կէօ էսայ մեր դատաստան ըսկ-  
նայ կ'մնայ, տեսնամ վո՞վ պիտի ար-  
դարութեամբ տիսնայ ու դատի. էր-  
կի՞նք, գէտի՞նք, ծո՞վ, ցամա՞ք, դը-  
ժո՞խք թէ խրիչտակ, թէ չէ մեր ձիւն,  
ձմեռն, մեր իրիցելն մրկել, մեր ընկեր-  
ներաց մեռնելն մոռցըլի ու էրթայ դաս  
մը նաֆիլայ մատաղներաց պէս . . . .  
Ուրիշ բան գըէլու սիրտ չունեմ իմ ա-  
նուշ խէր, ձեռքդ կ'պաքեմ:

Պօլիս 1875

Վ. Լ. Է

Որթ կաթող :

Չարդին / ր ընկերոջ գրած սև գերջ .

Բաղդադ ր ընկեր .

Էրանն'կ ըրոյ սէրին ու սրտին որ կը-  
խարցուցես մեր խին ընկերներաց տեղն  
ու գուռ , մերն ու ինոնց վաստակն ու  
ապուռ :

Իմուն խօրս գրէն իմացի :

Կռտան Կաժողենց Աւօն , չէօփչի էր ,  
ափիւլիւցկներաց խեա կուրխաւ դնաց ,  
տխոր էլնելն մարդ չի գիտեր :

Պայլիթրենց Պօղօն , սուրջ ծախեց  
ծուռ քէլեց , շխտակ քէլեց , չիւմ' խո-  
կին էլաւ նա հալ քաշեց :

Չուր կրեց , ջիւր ծախեց Պէօտպիսխ-  
կենց նմուշն , մէռաւ մկայ ո՛չ փառչ  
կայ ոչ կուժը :

Պազտօրկենց Կէօրէօն այլաղ էր կա-  
վաղ էր , աստղի պէս ցոլաց ու գնաց :

Շրէշտաջրենց կոր Պիւպիւն ժիւմմ'  
կեր խիեց , կեր ծախեց , ափորչէ կ'իսց  
կուարեց ու փախեց :

Խոտիմկանց խնամին ասկի կախեց ,  
Ջուր ծախեց , իաին վերջ կարաս կոտ-  
րեց :

Թուռչոնց Մնօն պախալի տիւքեան  
բռնեց , մեռաւ օր չվայելեց :

Շարանի Շարօն սօլ կ'կարի , էս  
քեռառսուն տարիի որ ըստայի , չէլաւ  
չէլաւ խեղճ մարդ , որ ծէրն բիրէր ծէրի :

Սէֆիլեանն էլաւ լիւստրաճի , չիւմ  
իրիկուն խօսպան խօսպան կէօլրվի :

Պանրենց կալօն էլաւ լոմայափոխ ,  
թօփն իթալ ձէն գնաց չիւմ հինտիեա-  
ման , հալա կէօ կ'էրթայ , հալա կէօ  
կ'էրթայ

Բազմաքրիստոս Անկիւսներցին

Ուսկոռ կռծօղ Արարքբցին

Պիիկ ժօղվօղ Խտխկավանցին

Մածակ խօրտօղ քեաղբցին

Կէօլի կազ Ավանցին , սաթ ճիութ են ա-  
րիցին , կարկտան կարիցին , տարպնու-  
թեն արիցին , կուռուղչի էլան , շան բան  
գտան . շատ էլ կուրիսին , էն վերջ կծիգ  
դրին ,

Պէօրանենց Մօղ'կն ոսկրիչի , օրն կք-  
տադի օր կ'ուտի :

Ճօլօլենց Խամպօն , կռխի Պարկենց  
Փօռօն , Չորթնենց Պոնճոն տէօրէտէօր  
էլան ժամխար , տնտես ու լիւսրար , խելմ

տարիի որ չեմ ախտե . քստայ են , թէ  
իւրիչ աշխար :

Թընթողլիզողենց կոր էծն , թաղա-  
կան ժողովքի անդամի . դրսէն աղէկ  
կ'էրէվայ , ներսէն Աստուած գիտի :

Սուժուժկանց Սրկօն՝ էկաւ էդ տեխա :  
Աղքտիկօւենց շիլ տատրակ մաղէ  
չախրակն՝ կայեղչութեան մտաւ , ինկեաւ  
ծով խեխտըվաւ , տէլ կէօ կ'էրթայ ,  
տէլ կէօ կ'էրթայ :

Աստօն խեւք ծայրեց , թայլիցին փըր-  
կիչ :

Լվենց Մ'նօն՝ սաֆրածիութեն արեց  
խեխտալիոխ էլաւ ու մեռաւ :

Լըլիժուտենց օտք կարճ , Շակլը-  
ճոնց ծուռ լաճ , մուճուղէղէ անուշ ծա-  
խիցին , թէ , ծախիցին , տէսան որ նու-  
կին տըովէրկու կեաղ չխանե տուեցին  
դաշտ :

Պասենց կարապօն՝ կահվայ կ'տփի :

Թուխօյենց Պըկլօրն չարխով կար  
կ'անի :

Պաշօյենց կեաղօն՝ վաճառականութեն  
կ'անէր , մկայ պարապի :

Թէրճակ Պալտըվորն՝ է՛հ , կտորմ խաց  
գտե նսաե կ'ուտի իւր քրտինքով :

Կէլխեխդենց Զօպուտային՝ քիրէճ-

խանան կ'բանի, ո՛չ տիր լա՛ց, ո՛չ առ  
փախի :

Տպղենց խաչօն, ներկարարութեան  
մտաւ . ըստեղ գօնսօլիտ, թղթէ փարայ  
կ'ասեն տարէն ինկեաւ տակ . էս խեղճ  
մարդու վիզն էլ մնաց իւր տակ :

Պէօտենց կազօն՝ փինաչիի երկիրն աղ-  
քքտցաւ, հմէն մարդ խին սօլ կ'խայնի  
տէյի, խոր ճանն ճկուաւ :

Խողշաշենց Պիտօն՝ ըստեղ ծէթ կը  
ծախի :

Ճենճոտենց տղան՝ գինէպանի, քե  
խաբեմ, Աստըծուն ի՞նչխ խաբեմ, խոր  
բան զարմանքի մարդ չգիտե :

Իլիկ շիտկօղն՝ սարաֆութեն կ'անի .  
պարտքն իտու մկայ աղէկի :

Կաթիկ զարնօղենց կոթխ.քեով Մըռ-  
տօն՝ խսնութեն կ'անի . շատ ամսական  
ունի, չեմ գիտե թէ փարայ կ'առնի :

Կուկաղենց Ավօն՝ խողով մարմնով  
կուրխաւ :

Կոր էճն՝ ծուխ ծախեց, տիւքեան  
վառվաւ, բէբան սրբեց նստաւ :

Փըլօշենց Եղօն՝ սհաթ կ'չինի . վս՛վ  
կարնայ ինոր առջև սօլ խանել :

Էջօյենց Շայէն, Գէշօյենց Եղօփն՝ ի-  
րիկվան ծէթը պակաս ճրագի պէս ըն-  
ցան :

Սանտա.քինց տղան՝ ջուր կ'ծախի ,  
է՛հ , իր եղով ինքք կ'տապկուի :

Կուսփ ուտողենց Մառտիկ ամսխո-  
վանի կ'շինի . իւր կարպետ իւր ջրէն կը  
խանի :

Ճաշ փորթողենց ճուխա ֆըռթն՝ սըմ-  
սարութեն կ'անի . խոր էլ բան մարդ-  
չգիտե , չիւնքի սուտ ու փուտի :

Լօչենց Զէօղէօն , գօմէսիոնճիութեն  
արաց , չատերաց փարէք խըլեց փա-  
խաւ :

Զբղքիկ զարնօղենց տղան՝ թուլում-  
պաճիի . եփ իւրիչի տունն վառվի , ինք  
խաղ կ'ասի , չում իրիկուն կ'փըչի :

Պըճկանց Մուքօն չարչիի . . . :

Մռճկանց Մխօն՝ թօքմաճիի . էն  
էլ ծալի : Թելմ՝ քեաչես հաղար կար-  
կըտան կ'թալի վիրվից :

Եղնիկ վարդապետին Մշոյ Առաքե-  
լոց վանից վանահայրն աղու իտու մե-  
ռուց : Ծի իշու տղայ Յովհաննէս վար-  
դապետն ասաց :

Լօրէղենց Դանօն՝ մեռաւ :

Առչքիկ ծներթք շինօղն՝ մեռաւ :

Թամաղոնց պստիկ տղէն՝ մեռաւ :

Փօխքեատարենց Կէօրկէօն՝ մեռաւ :

Սարաղունճենց խորդ լաճն՝ խան-  
կեաւ :

Մէրվէրիկն՝ խանկեալ :

Մխմէլ պատռօղն՝ էլ մեռաւ :

Սեկանց Մարգարն էլ մեռաւ՝ Եա-  
ֆայի մէջ :

Մեսրոպ Վարժապետենց Ոստանիկ  
Մարգարն էլ իր արև կըծկեց Փարիզու-  
պունատան մէջ՝ ու մեռաւ :

Իմ Պետրոսախրէրն էլ մեռաւ ,

Ա՛խ , ես կուրպան էլնի ինոր ,  
ես խիմնդութնից էլայ վեր էն պառկաւ ,  
ու սկուն ինչ ճրագ փչես սկուն խան-  
կեալ : Աման Աստըծու սիրուն մարգու-  
շա՞սես , մէրս լսածին պէս կսկծու կ'մեռ-  
նի , վերջ մեղաց տէր կ'էլնենք : Ա՛հ ,  
մեռնէր էն սև օր սև սհաթն որ իմ ան-  
կալատ ախպօր կանանչ արև շմարէր ,  
ծիը բսկնայ սև շիվար շանէր : Ա՛խ , իմ  
խողին էլնէր խետ քե՛ եղբայր Պիտրոս ,  
իմ արև չորնէր քե խամար՝ Պետրոս ախրէր :

1875 Դեկտեմբեր

Վ. Ի. Բ.

Պօլիս :





## ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### ԵՐԳ ՊԱՆԳԻՆՏԻ

Ինկեայ թաղէ թաղ աղչէմ ճարիցի,  
Տըվի թապաղէմ թըղթիկ առիցի,  
Աչքիս արտըսունք թանաք արիցի,  
Շողշողուն մատկերս կալամ արիցի,  
Սրտիս տարտեր տավթար արիցի,  
Ստամպէօլ քաղաք էօրէօխկիցի:  
Կարիպնի նստեր վէր օտար վուղցին  
Կարիպն, ա՛խ, կ'անի իւր խօր խէրանին:  
    Կանչեմ ջան արե՛  
    Սարեր լացուցեմ.  
    Շատ կարիպ, կուրպաթ  
    Ճամխէն դարձուցեմ:  
Ինչի՞ կուլաս կուց կուց արուն,  
Թէ՞ կէօ իրե բարի դարուն.

Քե կ'առնեմ վէր իմ թեւերուն ,  
կ'թռնեմ վէր պանցրիկ սարերուն ,  
Պիօնը կ'դնեմ մէջ քեարերուն ,  
Էրդիս կ'բանամ դէմ խով քեամուն ,  
Դուռ կ'բանամ կարիպներուն  
կարիպիս մեռնեմ իւր ճամխներուն

կանչեմ ջան արե՛  
Սարեր լացուցեմ ,  
Շատ կարիպ , կուրպաթ  
ճամխէն դարձուցեմ :

Ծովուն խաւքմ կէր , անուն էր Արոր ,  
Վզիկն էր էրկէն , սրտիկն սեւլաւոր ,  
կապեմ պէչարէն էրթամ խետ ինոր ,  
էն իմ տարտ գիտէր ես էլ կէօ ինոր :  
Պօստանեմ դրեր վէր էնա դարին  
Չէլաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին ,  
Ասոված չէն պախէր էս տարվան տարին  
Չէլաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին ,  
Շամամ թօռօմաւ , իմ եար խռովաւ :

Արե՛ եար արե՛  
խռով մի մնայ ,  
Ասարվորիս մալ  
Ծի քե չի մնայ :

Պախչէմ եմ տնկեր թիւրէն իւր մէնէն ?  
Աստված ծի շիտուր, շիւքրեմ իւր մէնէն  
Պախչէմ եմ ցաներ սատա պիււպարի,  
Իմ եարոջս մեռնեմ թաժա նուպարի .  
Ածուճ եմ ցաներ սատա ասմայի  
Իմ եարոջս մեռնեմ գլօխ եազմայի :  
Խէրիկս էր խովիւ, ախրէրս դառնարած,  
Կարիպիս մեռնեմ իւր ճամխներայ :

Կանչեմ եար արե

Խուով մի՛ կէնայ

Աստըվորիս մալ

Մի, քե շմնայ :

Պաղչէմ եմ տնկեր վարդ խաղար թավուր  
Մէջ հմէն վարդին իմ վարդն էր քիաֆուր,  
Շահ պըլպիւլն իջաւ վէր իմ վարդին խուր  
Լէզուս քե գինի, սիրտս քե խուրուվու :  
Աչքերդի թուխ թուխ ընքվերդ փէրիշան  
Իմ մատի մասնիկ կուտամ քե նշան .  
Որ շես ավատար կէօհան սուրբ նշան,  
Թարթըփներտի կըռընկու ճիվան :

Արե՛ եար արե՛

Խուով մի՛ կէնայ,

Աստըվորիս մալ

Մի, քե շի մնայ :

Էլանք ավզընոց, ավզէն ջուր կուկէր,  
Քեաճուր վարդ բացվե անուշ խոտ կուկէր:  
Արե՛ եար արե՛ մեր պակի մօտէն  
Մեր պակնի լըցվե քիոյ անուշ խոտէն,  
Ես նռան գինի, դու անուշ քեասայ  
Դու լից, դու խըմի՛ քիոյ տարտ ծի ասայ  
Անչանք կանչեմ սարեր լացուցեմ  
Շատ կարիպ, կուրպաթ ճամխէն դար-  
ձուցեմ:

Արե՛ եար արե՛  
Խռով մի՛ մնայ,  
Աստըվորիս մալ  
Մի, քե չմնայ:

Էրեկ էվարին վէր կեմայ դարին,  
Թըվան քիով զարկին պրինտար արին,  
Խապրիկմ տարէք իմ նազըու եարին  
Առնի տեղ դարման կեայ վէր իւր եարին:  
Էրեկ էվարին ոչխար վէր պէրին  
Կթեմ թուխ մաքին լցեմ սուրահին  
Էօրէօխկեմ եարին:

Կանչեմ եար արե՛  
Խռով մի կէնայ,  
Աստըվորիս մալ  
Մի, քե չմնայ:

էրկինքնի ամպեր կուգայ մարմար ձիւն  
կ'խալի, կ'աթի վէր մալուլ մարդուն,  
Մեկ ե՞ս եմ մալուլ, թէ աշխարհս պիթուն,  
էսօրնի ամպեր կուգայ անձրև ու ձիւն  
Ախ, ե՞րբ կէլնի որ, իմ եարգայ մեր տուն:  
էսօր ի՞նչ օրի — ուրբաթ ու պախսի  
ճուխամ եար ունեմ տէլ նորախարսի,  
Խորած վարդապետ կ'ասի չխասի:

Կանչեմ եար արե՛

Խռով մի մնայ,

Ասալվորիս մալ

Մի, քե չմնայ:



### ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

Կանաչ կէնին աղջրկներ

Մէջկակուտոր աղպրներ

Չէկան տարան վիճկներ:

Խարս խան վիճակնի բարի:

Տուն էրկու ձիւ կ'ժողվենք

վիճակ դերութենէն կ'խանենք.

Ձան ծաղիկ ջան:

Վիճկի անուն լհանայ  
Լաճերն արին մհանայ,  
Ջան ծաղիկ ջան,  
Խարս խան վիճակնի բարի :

Վիճկի անուն վարդիկ էր  
Ոտքով ոչխար խօրօտ էր,  
Վիճկի անուն ասլիկ էր  
Ոտքով ոչխար մուսլիկ էր .  
Խարս խան վիճակնի բարի :  
Վիճկի անուն աղա սէր  
Ճէօպերն սըռսուռ ոսկի էր .  
Էս մեր վիճակն ի՞նչ կ'ուզէր :  
Ատըծու բարին կ'ուզէր :  
Ջան ծաղիկ ջան  
Խարս խան վիճակնի բարի :

Վիճակնի կիւլայ կիւլայ  
Ազապ լաճեր վիճին քէօլայ :  
Մէր կերաւ կեապի տակ  
Տղէն բերաւ պատի տակ :  
Խարս խան վիճակնի բարի :

Վիճակ նստե վէր իշուն  
Ազապ լաճեր վիճկի շուն :  
Մամէն կիրե խավրծիլ

Տղէն բիրե ոսկի ծիւ :

Խարս խան վիճակնի բարի :

Վիճակ նստե վէր պատին

Ազապ լաճեր վէր լակին .

Մամէն կիրե թանխուս

Տղէն բիրե փրմվուս :

Խարս խան վիճակնի բարի :

Շըղէ մարդ պըտարէ գըլուխ :

Մէրդ կիրե ծըվազեղ

Քե բիրե կոր անձեղ :

Խարս խան վիճակնի բարի :

Օվան աղի ձին փրթերի

Ոսկի չըմպիւլ սար թողերի

Աննայ վանք խոտ կիրերի

Կաթնով ախրիւր ջուր խմերի ,

Խարս խան վիճակնի բարի :

Ծով քե գինի , կեամին քե կթխայ ,

Կեամին քե տօլու պաչին ,

Արծաթ քե քեամար

Ոսկին քե կօճակ

Աստըված քե քեամակ :

Խարս խան վիճակնի բարի :

## Մ Ո Ն Ք

Մե պըստըկեկ մարդիկմ կէր  
 Անապատայ վանք կը մնէր .  
 Օր կորեկէ կուտ մը կ'ուտէր ,  
 կէսն աղքըտաց բաժին կ'խանէր .  
 Տրկլող քեամկով կեազ կը կրէր ,  
 Պէօպիկ ոտնով փուշը կ'քեաղէր .  
 Ինք կ'գրէր ինքը կ'կարդէր ,  
 Չիւմ իրիկուն աղօթք կ'անէր :  
 Օրն էր շաբաթ լոս կիրակին ,  
 Բաժկին պակսաւ պատարագին .  
 Չում վան քեաղաք մէկ գնացի  
 Գլխիկս դրի կընքիմք առի .  
 Ոտնակուտոր ճամխիցն իկի ,  
 կիւլ ախբրիմ ըռաստ իկի :  
 Երեք խատ գող իմ դէմն էլան ,  
 — Մէկն ասաց , զարնենք կորցուցենք ,  
 Մէկն ասաց , զարնենք թիւլցուցենք ,  
 Մէկն ասաց , ո՛չ զարնենք կուրցուցենք ,  
 Ո՛չ զարնենք , թիւլցիւցենք ,  
 Սալչուն փաշի սէրն իսկենք վէրէն  
 Քեառսուն տարի թօղ տպայ վէրէն  
 Կտորմը տեղ ես գնացի ,



Մաղմոսարանս կըլորիցի .  
Կտորմը տեղ ես գնացի ,  
Ավէտարանս խորիցի .  
Կտորմը տեղ ես գնացի ,  
Ժամագիրքըս թաղիցի .  
Կտորմը տեղ ես գնացի ,

Չու՛մ խարմեղէնս մոռացի .

Քեարվանձիքե անթայ դաշտէն  
Մէջ էն քեարվընին ջորիմը կէր ,  
Վէր էն ջորուն սընտուկմը կէր ,  
Մէջ էն սընտըկին կութիմը կէր ,  
Մէջ էն կութուն աղջիկմը կէր :  
Աղջի՛կ , աղջի՛կ անունդ ինչի՞ .  
Կրօղի տարած տավէդ ինչի՞ .  
Իմ խէր չիտար պատուելդ ինչի՞ :  
Իմ անունս սալչուն փաշայ ,  
Մալչուն փաշայ ես քե գերի  
Կրակդ ինկե սիրտս կ'սյրի  
Պալանաբոց բէրնէս կ'էլնի :  
— Ծօ Օվանէս կեավուր օղլի ,  
Պան Մուսուրման , սան էրմանի ,  
Քիոյ սէրն մօտ ծի ի՞նչ բան ունի ,  
Որ իմ խէրն իմնայ քե կ'ըսպաննի ,  
Արունդ խետ պէօջ գինուն կ'խմի :

— Մէրիկ մէրիկ մօրմօրեայ ,  
Կթխէն ձեռք կը շողշողայ ,  
Աղուն վէրէն կ'Ֆըռֆռայ  
Կէօ ես խըմայ , կէօ ես մեռայ :  
Վաղ Ավանէս էօրախից գայ ,  
Ինոր ճուվապ վճով կուտայ :  
— Քեայ սեւաւոր ծուռ մասկարայ  
Որ Ավանէս էօրախից գայ ,  
Կ'տաճկըցընեմ կ'անեմ մէօլայ ,  
Ուրբաթն օրեր կ'ճամխեմ կարգայ :  
— Էն լայեղչի որ էլնի մէօլայ ,  
Էն լայեղի , էլնի ճիօշկիկ քախանայ ,  
Բուռվառն 'ի ձեռն խունկն 'ի վրայ :  
Ախ , Օվանէս մօր մէկ որդի ,  
Կրօղի մախն քե չըխորդի ,  
Ժամու շապիք կարիցի ,  
Փիլոնն 'ի մէջ փաթիւթիցի :  
— Մարէ սօլերդ խակի որ ճուվայ  
Լաչիդ իսկի որ վռվռայ  
Էլի՛ դնա՛ դէմ շուկային  
Տե սիրու բան ինչխ կ'էլնի :

Ա Ղ Ձ Կ Ա Ն Ե Ր Գ

Դիւ կ'քէլես խեղ ծովու հափան  
էն քիոյ սիրուն խավերն թափան,  
Խոկիս խասաւ դէմ կլաթան,  
Նուռ կէօրէօխկես, նուռն ի՞նչ անեմ,  
Ես պիլայ քե ումպըրն ի՞նչ անեմ,  
Ասաքվորիս մալն ի՞նչ անեմ:  
Դիւ նստերես ոսկի կեամին,  
Կ'զզզըղայ սիրոյդ քամին,  
Էրանե՛կ քիոյ կուշտ նստողին  
Էրկու խասպար զըրուցողին:  
Ջատու եմ էլեր իկերեմ՝ քե տես  
Կուգամ կ'տեսնամ անուշ քըներես:  
Շէկ վարդ իրիսիդ խանկեալ արերես  
Արի թէ պաքեմ, վախցայ թէ զարթնես  
Ջուրնի փըրթե կուգայ սարէն  
Կուգայ կ'թափի մարմար քարէն:  
Թաժացաւ սրտիս եարէն,  
Եարնի դարձե իւր խասպրէն:  
Առավտրման ճրագնի վառ,  
Դու նմանես զօղանի գառ,  
Ասաքված սիրես արե՛ ծիկ առ:

Քիոյ դրկանոցն ոսկի սենեակ  
 Ա՛խ, մի թող տար դու ծի մէնակ,  
 Որ ծի ասի որբէվերցի  
 Էրթայ իյնի աճմու գէրի:  
 Առաւտուն խեղ բարի լուսուն  
 Քիոյ կօճակներն խարիր իսուն:  
 Ակռփու դաշտ տար ու փոսի  
 Չեռացդ մատնիկ լոս արմասի,  
 Քեզի թողնելն շատ ամսոսի:  
 Արե՛ էրթանք էն պէրն էն պէր  
 Ո՛չ պէրն էլնէր ո՛չ պէրին տէր.  
 Ես ալ տղայեմ՝ սիրոյ տէր:  
 Տնէն էլար կայնար ՚ի դուռ  
 Պաժդ նմանի խանչալի բուռ.  
 Քամին կ՛ուտէր քե շուռ ու մուռ:  
 Տնէն էլար կայնար տանիս,  
 Պաժդ նման էր դարնան կամիշ,  
 Արի կ՛տրեմ չէլայ կիմիշ:  
 Տնէն էլար խաց կ՛տանես,  
 Աղապ լաճուն աչքով կ՛անես,  
 Որ մօտանայ ախպէրս կ՛ասես,  
 Որ դատանայ աչքով կ՛անես:  
 Զաղցի դռնովն ընցայ ես,  
 Անձրեւն իրե թացվայ ես,

Չանց քեաֆուր վարդ բացվայ ես ,  
Չանց ըռքհան խոտով ես :  
Չաղցի տանիս կանանչ էր  
Աղջիկ լաճուն ճանաչ էր :  
Չաղցի դռներ խատխրտած ,  
Աղջկան ձեռքերն էր խինած :  
Չախցի առուն ջուր կուգայ  
Աղջիկ լաճուն տիւր կուկեայ :  
Մառի տրկի ծանտրմակ  
Իմ եար կապե թուր , դանակ ,  
Մառի տրկներն ճըլպըլտուն  
Իմ եար չանց քոն խըտվըտուն :  
Մեր տուն մօտիկ ձեր տուն մօտիկ  
էրթանք քեաղենք որթկան խոտիկ ,  
Իմ եարն քեանց քոն շատ խօրօտիկ :  
Դարի տրկէն մուխ կուգայ  
Ախպէր քիւրոջ խուր կուգայ ,  
Քիւրոջ աչիչ ջուր կուգայ :  
Բարձ վէրուցեմ խոտ կուգայ  
կարմիր խնձոր դիւրս կուգայ :  
Կծած էր , արծըթած էր ,  
Էն իմ եարոջ տըվածն էր :




ՅԱՆՈՐԻ ԽԱՉ

Անթառան նստե կով կ'կթի ,  
Ակորն իկե դուռ կ'տփի :  
Ակոր , էլի' փայլէն փախի ,  
Աղա փաշէն մարդ կ'կախի :  
Թաժա ցորէն թափե տարկեախ  
Ակոր փախե մտե փակեախ .  
Եէնտի խասե աղա փաշէն  
Խէրիք կախվես խոր փէշէն  
Յուդան կ'քակեն թիոյ նորաշէն :  
Արևն առե ալ նարնճի  
Խէրիք անես ծիկ զարնճի ,  
Արևն առե Ամկու փէշեր  
Արե' պաքեմ' կարմիր թշերդ :  
Խապար տարէք տէկէր'նկան ,  
Չեռք թող զարնի վէր իւր ծնկան  
Թո'ղ պըտղտուի ձեռաց մըջան :



Ա. Խ Պ Օ Ր Ե Ր Գ

Պուտկով փրլաւ եմ իմե  
Փրլաւն տրվե խավերուն ,  
Խավիկն ծի ձիւ ձիւմ խտու ,  
Չիւն տրվիցի տարայրնուն ,  
Տարային ծի դանակմ խտու ,  
Դանակ տուի խովքվուն ,  
Խովիւն ծի մաքիմ խտու ,  
Մաքին տուի Աստըծուն ,  
Աստըված ծի ախպէրմ խտու ,  
Իմ ախպէրս վիրև բերդին  
Ոսկի թուրն վէր իր մէջքին ,  
Գնա՛ց խաղա՛ց խետ լիւսնկին ,  
Լիւսնակն առեց մէջ իրիսին :  
Շոտ գնա՛ տարկէն արե՛  
Իմ ախպօր ծաղիկ բե :  
Ախպէր ախպէր ես քե շուն ,  
Աչք ու ընքվերդի նխշուն ,  
Ի՞նչ ես բարցեր քիոյ իշուն  
Խունկ , խինէն , արփըշուն :  
Ո՛ր կ'էրթաս պազազտուն :  
Պազազ կայներ էլերուն  
Բիւրթ կը կըզի դէլերուն :



ՀԱՐՍԻ ՄԱՀ

Էսօր ծիկ անչամ տըփիցին  
Ոսլայ ոսլայ պէյպըկիցին ,  
Իմ արուն բամպըկով քեաղիցին  
Ամթայ քեաղքէն արփըչում բերին ,  
Իմ ուսկուտանք շարիցին ,  
Արզըրում նաչս կապիցին ,  
Էարոջս դունէն ծիկ ընցուցին ,  
Իմ եար քընուց վեր խանին ,  
Իմ եար չէր լար , լացուցին :  
Աստըված սիրէ՛ք , իմ կութին  
Իմ ծոցէն խանէք ,  
Իմ աչքերս տեղեցէ՛ք ,  
Ծիկ մէկ խատ իրիշկէ՛ք :  
Ա՛յ իրիցներ՝ ծիկ ի՞նչխ  
Մէջ խողին տի թաղէք :

ՆՈՐ ՓԷՍԻ ՄԱՀ

Արտամտու սար քըռով էր ,  
Ավիտիս խետ մօր խառով էր .  
Զայիմ տալեր լաչին , գօտիկ  
Չուր որվարդան վաղի պէտպիկ :  
Սըվարդանայ գինին խըմեր եմ ,



Խուռ գոմու քեապապ կիրեր եմ,  
կուշտ վէր ծովուն քըներ եմ,  
Մըլայիմ քեամին քեաշեր եմ,  
Բարակ խուսն կիւթան կ'սաղէր,  
Աւիտիս վէր ծովուն կ'վաղէր,  
կիրաշէն շիներեն քեասայ  
Աւիտիսնի նորափէսայ,  
Աստղերն էլան արան շարան,  
Աւիտիսի նաշիկը տարան,  
Ոչխարն իրե վէր պէրին  
Աւիտիսն դրին մէջ հէրին . . . .

Չ Ա Ն Բ Ա Ն

Ոստանայ պալաք սարեր  
Չեմ կարնար չախրակ մաներ .  
Չախրկի ոտն ուռ էր  
Չախրակ մանօղ կէօ ծուռ էր  
Չախրկի ոտը պարտ էր  
Չխրակ մանօղ նամարտ էր,  
Չախրկի ոտը փուշ էր  
Չախրակ մանօղն պիւպիւշ էր,  
Չախրկի ոտը տանձի  
Չախրակ մանօղն կուտան ծի:  
Չախրկի ոտը նուշի  
Չախրակ մանօղն անուշի :

ՎՈՅՈՎԱԿԱՏՈՒՆ

Կէլնի մէկ տըմփրուան շուն

Կէրթայ կ'քէլի վէր պաղերուն :

Պաղն կ'կոտրի ոտը կէրթայ ինե ,

Կասի — ծօ' պաղ ,

Դու շա՞տ ոժովես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Արեգակն ծի չէր խալըցուցե :

Կէրթայ մօտ արեգակ .

Կասի — ծօ' արեգակ ,

Դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Ամպ իմ դէմ չէր բռնե :

Կէրթայ մօտ ամպն ,

Կասի — ծօ' ամպ ,

Դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Անձրև ձիզմէ չէր կաթե :

Կէրթայ մօտ անձրև ,

Կասի — ծօ' անձրև ,

Դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Խոտ ձեղմէ չէ բուսնե :

Կէրթայ մօտ խոտ ,

Կասի — ծօ՛ խոտ, դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Գառն ծի չէր ուտե :

Կէրթայ մօտ գառն ,

Կասի — ծօ՛ գառ, դու շա՞տ ոժով ես .

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Գայլ ծիը չէր ուտե :

Կէրթայ մօտ գայլ ,

Կասի — ծօ՛ գէլ, դու շա՞տ ոժով ես .

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Շուն ծիը չէր խելստե :

Կէրթայ մօտ շուն ,

Կասի — ծօ՛ շուն, դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի

Պառաւ չէր առնե անթըրոց

Լարե խելիս :

Կէրթայ մօտ պառաւ ,

Կասի — ծօ՛ պառաւ, դու շա՞տ ոժով ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

Մուկ իմ խաց չէր կտրէ :

Կէրթայ մօտ մուկ ,

Կասի — ծօ՛ մուկ , դու շատ ոժո՞վ ես :

Կասի — հո՛ւ , որ ես ոժո՞վ էլնի ,

կատուն ծիր չէր ուտե :  
Կէրթայ մօտ կատուն ,  
Կասի — ծօ՛ կատու, դու շա՞տ ոժովես  
Կասի — հո՛ւ , ես ոժո՞վ եմ,  
Որ ո՞ժով եմ :  
Ծէթ իկ մէթ իկ ատա՞մ ունեմ ,  
Սամուր քիւրքէ մուշտա՞կ ունեմ :  
Աղէքտեկաց մուշտակն եմ  
Խաթիւնտեկաց շուշտակն եմ :  
Ամառ , վէր կէօղվան կ'պառկեմ ,  
Զըմեռ , վէր թօրվան կը քընեմ :



Վ Ա Ն Ա Յ Կ Ա Տ Վ Ո Ւ Կ Է Օ Վ Ք

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր թիւփ ,  
Ուլնի կիրե մեր թուփ .

Ուլն էր թփան , թուփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն .

Խալալէր ճալալէր ,  
Ի՞նչ բարի տարեկմ իկե վէր մե :  
Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր ուլ ,  
Է՞ծն է կիրե մեր ուլ .

Էծն էր ուլուն , ուլն էր թփան ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն :  
Ն-է-ու-է , խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր էծ ,  
Գէլնի կիրե մեր էծ .

Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թփնու , թիւփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր գէլ ,  
Շուննի կիրե մեր գէլ .

Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
Էծն էր ուլուն , ուլն էր թքփուն ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն ,

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր շուն ,  
Արջն էր կիրե մեր շուն .

Շունն էր արջուն , արջն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թքփուն , թիւփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր արջ ,  
Խողն է կիրե մեր արջ .

Խողն էր արջուն , արջն էր մօլուն ,  
Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
Էծն էր ուլուն , ուլն էր թփուն ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն ,  
Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր խող ,  
Ֆիլն էր կիրե մեր խող :

Խողն էր ֆըլուն , ֆիլն էր արջուն ,  
Արջն էր մօլուն , շունն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թըփուն , թիւփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :  
Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր ֆիլ ,  
Չուկնի կիրե մեր ֆիլ :

Չուկն էր ֆըլուն , ֆիլն էր խողուն ,  
Խողն էր արջուն , արջն էր մօլուն ,  
Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
Էծն էր ուլուն , ուլն էր թըփուն ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն ,  
Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր ձիւկ ,  
Մարդն էր կիրե մեր ձիւկ :

Մարդն էր ձկուն , ձիւկն էր ֆըլուն ,  
Ֆիլն էր խողուն , խողն էր արջուն ,

Արջն էր մօլուն , շունն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թըփուն , թիւփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք աէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր մարդ ,  
Օձնի կիրե մեր մարդ .

Օձն էր մարդուն , մարդն էր ձըկան ,  
Ձուկն էր ֆըլուն , ֆիլն էր խողուն ,  
Խողն էր արջուն , արջն էր մօլուն ,  
Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
էծն էր ուլուն , ուլն էր թըփուն ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք աէսէ՛ք , ո՞րնի կիրե մեր օձ ,  
Խավքընի կիրե մեր օձ .

Խավքն էր օձուն , օձն էր մարդուն ,  
Մարդն էր ձկան , ձուկն էր ֆըլուն ,  
Ֆիլն էր խողուն , խողն էր արջուն ,  
Արջն էր մօլուն , շունն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թըփուն , թիւփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , որնի կիրե մեր խավք ,  
Թըվանքնի կիրե մեր խավք .

Թըվանքն խավքիւն , խավքն օձուն ,  
Օձն էր մարդուն , մարդն էր ձկան ,  
Չուկն էր ֆըլուն , ֆիլն էր խողուն ,  
Խողն էր արջուն , արջն էր մօլուն ,  
Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
Էծն էր ուլուն , ուլն էր թըփուն ,  
Թիւփն էր իկիւն , իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , որնի կիրե մեր թըվանք ,  
Ժանկնի կիրե մեր թըվանք .

Ժանկ էր թըվանքիւն , թըվանքն էր  
խավքիւն ,  
Խավքն էր օձուն , օձն էր մարդուն ,  
Մարդն էր ձկան , ձուկն էր ֆըլուն ,  
Ֆիլն էր խողուն , խողն էր արջուն ,  
Արջն էր մօլուն , շունն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թըփուն , թուփն էր իկիւն ,  
Իկն վարակիւն :

Խալալէր :

Էլէ՛ք տէսէ՛ք , որնի կիրե մեր ժանկ ,  
Մուկնի կիրե մեր ժանկ .



Մուկն էր ժանկին , ժանկ թըվանքին ,  
թըվանք խավքիւն , խավքն էր օձուն ,  
Օձն էր մարդուն , մարդն էր ձրկան ,  
Չուկն էր ֆըլուն , ֆիլն էր խոզուն ,  
խոզն էր արջուն , արջն էր մօլուն ,  
Շունն էր գէլուն , գէլն էր էծուն ,  
էծն էր ուլուն , ուլն էր թըփուն ,  
թիւփն էր իկիւն , իկն վարակիւն :

Խալալէր :

էլէ՛ք տէսէ՛ք , ս՞րնի կիրե մեր մուկ ,  
կատուննի կիրե մեր մուկ :

կատուն մկան , մուկն ժանկին ,  
ժանկն թըվանքին , թըվանքն խավքիւն ,  
խավքն էր օձուն , օձն էր մարդուն ,  
Մարդն էր ձկան , ձուկն էր ֆըլուն ,  
Ֆիլն էր խոզուն , խոզն էր արջուն ,  
Արջն էր մօլուն , շունն էր գէլուն ,  
Գէլն էր էծուն , էծն էր ուլուն ,  
Ուլն էր թըփուն , թիւփն էր իկիւն ,  
իկն վարակիւն :

Խալալէր ճէլալէր

ի՞նչ բարի տարեկմ

իկե վէր մե :

ԱՂՂՍՈՒ ԽՈՐՏԻԿ

Մե խաղմբ կէր վիզն էրկէն էր  
Ճետերն խտեղ տըսնըմէկ էր .  
Աղվէսն խովէն կը մէյըլկէր .  
Աղվէսն ասաց իմ տեղ նեղի ,  
Խաղու ճիտերը փորիս տեղի .  
Աղվէսն նստեր վէր տախտակին  
Պոչնի տնկե տեխ տանտըկին .  
Աղվէսն իրե տափիկ մամիիկ ,  
Չանց մեր կատուն կանափըտիկ  
Խաղու ճիտերն արաց խորտիկ




ԼԱՃ ՈՒ ԱՂՁԻՉ

Մի ծառ չինարի պիտէր  
Մէջ վանայ դաշտին բուսնէր .  
Ճողերը ճողէճող թալէր  
Թալէր որ Ոստան ծածկէր .  
Ոստան ծի ոսկի կուպայ  
Բանձրաչէն արեւնի վրայ .  
Քիոյ տուն լըցվալ արեւով,

Քիոյ սեղան կարմիր խնձորով :  
Էս տուն Ասաբժու շինած ,  
Ինոր քեարը կիւկեանից բիրված  
Ինոր խիճըն կուսանաց դրած :  
Էս ալաշ վերէն որ թալված  
Ադամոյ ձեռքովն քեաղված :  
Էրկու ծամաւոր խօրօտ աղջիկ  
Կուժը ձեռք ջրբու գնացին ,  
Էրկու թուխ թանաք ճըհէլք  
Ձին խէժան խտեմներ գնացին .  
Ասաց , ա՞ղջիկ , քիոյ խօր տան արև ,  
Էդ կըժի ջրիկ մէկ տո՛ւր խըմեմ :  
Ասաց , տօ՛ լած , քիոյ կէօղալ արև  
Էդ քիոյ մէջաց խնձոր տուր խոտ անեմ .  
Ասաց , էրկինք ամպշող էլաւ  
Իմ կըժի ջրիկ տաք խով էլաւ .  
Ասաց , քիոյ խօր տան արև ,  
Էրկինք ամպ շող արաւ  
Իմ մէջաց խնձոր թօռմաւ ,  
Չարկեցէ՛ք ոսկի ցըցեր ,  
Թամքեցէք կաքվէ ձիանք .  
Փռեցէք՝ արփըշմի վրան  
Էրթանք վեր Մըսրայ թալան ,  
Բերենք շատ խարս շատ փէսայ .

Շատ քիոր ունեմ՝ շատ ախբէր  
 Շատ կտրիճեն մեր լաճեր ,  
 Կաթնով ախրիւր անուշ տեղի  
 Չորս պիւլոր մանտակ , քեղի ,  
 Մեր լաճերաց ըսթատեղի  
 Աղջկնեկացս խիւզիւ տեղի :  
 Վէր ախբրին կայներես  
 Թուխ աչք թուխ տեղ դրերես ,  
 Ջրլիֆդ թել թել խաներես  
 Լաճերաց սիրտն արուններես :  
 Ասուրու տեղ տանիս շինեցիր  
 Խայուն տեղ մէջ ծրծրացդ ,  
 Ասուրուն խաց միս բէրէ՛ք ,  
 Խայերաց խավր խօրովէ՛ք :  
 Ասուրու ձիուն արթն ու դարի ,  
 Մեր խայերաց փունջ մանուշակ :  
 Ասուրու ձիուն ծընկնով փայէն ,  
 Մեր խայերաց մէջքով խինայ :  
 Էս գիշեր ես տիւրս էլայ  
 Էրկու պալաք պուրջ տէսայ  
 Ու մէկ սօնայ նոր փէսայ ,  
 Որ տուն մէկ վիժկի կուզէր :  
 Մշկըներն ժողվան գնացին  
 Կօտմ կորեկ ցանեցին ,

Խաւքեր զըմէն թեւաւորւան  
Գնացին ցանաճն հըմէն կէրան :  
Թըվան քվորներ ժողվան գացին  
Չարնեւլու խամար ,  
Աղջըկներ ժողվան գացին  
Փուրթ կէլու խամար ,  
Տանտըկներ ժողվան գացին  
Իփեւլու խամար ,  
Ըռէսներ ժողվան գնացին  
Ուտեւլու խամար ,  
Մշակներ ժողվան գացին  
Ուսկըռի խամար :



### ՀԱՐՍԱՆԵԱՅ ԵՐԳ

Թագվոր ի՞նչ բերեմ՝ քե նըման  
Քիոյ կանաչ արեւն քիոյ նըման .  
Մեր վարդենիան որ բացվէր ,  
Բացվէր քիոյ արեւ դիւ նըման :  
Թագվոր ի՞նչ բերեմ՝ քե նըման  
Քիոյ կանաչ արեւ քիոյ նըման :  
Սարի սուսուն որ բացվէր  
Բացվէր քիոյ արեւ դիւ նման :

Թագվոր քե ի՞նչ բերեմ քե նման  
Քիոյ կանաչ արե քիոյ նըման ,  
Ախբէրանց արուն որ բացվէր  
Բացվէր քիոյ արե դ-իւ նման :  
Թագվոր քե ի՞նչ բերեմ քե նման  
Քիոյ կանաչ արեուդ նըման ,  
Վարդ մանուշակ որ բացվէր  
Բացվէր քիոյ արեուդ նըման ,  
Թագվոր քե ի՞նչ բերեմ քե նման  
Քիոյ կանաչ արեդ աննըման  
Շուշան ծաղիկ որ բացվէր  
Բացվէր արեուդ նըման :  
Թագվոր քե ի՞նչ բերեմ քե նման  
Քիոյ կանաչ արեուդ նըման .  
Պալատան ծաղիկն որ բացվէր  
Բացվէր քիոյ արեդ աննման :  
Դէմ ազօթրան կայներես  
Կանաչ, կարմիր խակերես ,  
Բարով թագուհիդ վայլես :  
Ճուխտ վարագոյ դէմ կայներես  
Կանաչ, կարմիր կապերես ,  
Բարով թագուհիդ վայլես :  
Սուրբ Նշանայ դէմ կայներես  
Ալ, նարընճի կապերես

Բարով քիոյ թագուհին վայլես  
Աստված պախի քե պարզերես ,  
Դէմ Անապատայ կայներես  
Կանաչ, կարմիր խակերես  
Բարով թագուհիդ վայելես  
Աստված պախի քե պարզերես ,  
Դէմ Ազլթամարայ կայներես  
Քեանց լոս խրիշտակ զըվարթես  
Բարով քիոյ թագուհին վայելես  
Աստված պախի քե պարզիրես ,  
Թագվորի մէրն աստ պիտէր  
Որ էս թագի ճիւղմ քեաշէր .  
Թագվորի քեավոր աստ պիտէր  
Որ էս թագի տէօք քեաշէր ,  
Էս ժողովուրդ կայնամ պիտէր  
Էս ժողովուրդ նստամ պիտէր ,  
Որ թագվորիս սիտ խըմպրէր ,  
Էք բարև , հայ էք բարև  
Թագաւորին շատ արև .  
Թագվորի մէր տիւս արև  
Քե ինչ վինչ ինք բիրես .  
Թագվորի մէր տիւս արև  
Քե կէօլի կազ ինք բիրես ,  
Քե նուշ, ծաղիկ ենք բիրես ,

Վեր վարդ ուրհան ենք բիրեր ,  
Տախտ ավիւօղ ենք բիրեր ,  
Թոնէր վառօղ ինք բիրեր  
Խեռ ու խեռնակ ենք բիրեր  
Քեր գլոխ տըմիօղ ենք բիրեր :  
էք բարե , հայ , էք բարե  
Թագաւորին շատ արե :


---

Ա Ղ Օ Թ Ք

Ուսին ուսին սուրբ կուսին  
Յուսակատար Աստվածածին ,  
Խըրեղէն խաչն վէր թիւին ,  
էրեք պիպէռ կայ վէր էն խաչին :  
Մէկ , սիրտ սատանին  
Մէկ , գէլ ու գաղանին  
Մէկն , գող տըռալին ,  
Թաժա խաչի խոտ կուգայ  
էլէք տէսէք վո՞վ կուգայ ,  
էրկու խատ պէօղ պէօղ ձիւվոր  
Մէկնի Յիսուս , վաստուածածին :  
էլանք սարով շքու ջլանք ձորով  
Իմ տէրն էկաւ գէմըս փառօվ ,  
Ասի , տի՞որ կէրթաս խաղար բարով .



Ասաց, կէրթամ գուռ խիփնտին  
էրդիսըն ծընընդկանին .  
Բալնիս թալեմ վիրեվ բարձին ,  
Որ չը վախէնայ սիրտնի փորին :  
Կալած կէնայ, կապած կէնայ  
Չում գալուստ դատաստանին :  
Իմ տէրն էլաւ ամպըն խաղաց  
Չորեք կողմէն աշխար դողաց ,  
Իրե նստաւ աթոռ փառաց  
Ծէն իտուր աշակերտաց :  
Որն արդար էր խիստմ խնդաց ,  
Որն մեղաւոր, դառնիկմ իլաց :  
Դառն արտըսունք ծունկն լըվաց :  
Իմ Տէր, ես եմ քիոյ ըստեղծած,  
Ի քոյ խաչին եմ տէպած,  
Քիոյ ավազանն եմ մըկրտված,  
Ձիս մի՛ հաներ ի քոյ ձեռաց :



ԽՕՐՕՏ

Խօրօտ խօրօտ տարահի  
էրկնավիզ սուրահի ,  
Խօրօտ խօրօտնի քանի  
Խօրօտի ծոց կեխեանի :

Խօրօտն շէնէր ի՞նչ կէնէր .  
Խօրօտ սարեր ծըվարէր .  
Որ սև շիվար ծի շանէր ,  
Շահ եղան վաստակն էր ,  
Շամիրամ մօր բիրածն էր ,  
Ոսկի խնձոր բերանն էր :  
Ռըհան եմ ցանե խոտերով  
Էլեր կայներ կիւլ պատերով .  
Տակմ կտրեմ տակմ թողնեմ  
Էրթամ քեաղեմ շող մատներով :  
Սրբմայ ծամից մաղմը քաշեմ ,  
Ծաղիկ քեաղեմ տաստայ կապեմ ,  
Աղապ լաճու սէրն էօրէօխկեմ .  
Աղապ լաճու մէր Մոկացի  
Տասըմ տարի սիրով մնացի ,  
Սիպտակ ծոցին կարօտ կացի ,  
Ըռըտայ վէրայ վէրոյ  
Ձիմք տու խէճնեմ վըրայ ,  
Էրթամ աղջիկ ու տւնեմ  
Ինքը թուխ իր ծամը թուխ ,  
Իր ծամի կապանըն թուխ :  
Խորդեցէ՛ք ու ալիլեցէ՛ք ,  
Թաժա խըսիրն սլարղեցէ՛ք ,  
Պանակն առէ՛ք սիրտ ճղեցէ՛ք ,

Պամպրկով արունըն քաղեցէ՛ք ,  
ինքն սուրբ , իր արունըն սուրբ  
Ոսկի մասունքմը շինեցէ՛ք  
Հոս տաճարին մէջ դրէ՛ք ,  
Խաչ վապէտքան կարդացէ՛ք :



### ՕՀԱՆ

Օհան Օհան ոսկի բերան  
Կօչ մորթիցին դրին սեղան ,  
Հայկակն ու Սէր էկան կերան ,  
Կէրան կէրան կուշտ կշտացան ,  
Ուսկոռը զարկին պատն էլան ,  
Ուսկոռն էլաւ ճութ պարունակ  
Վէրէն կախուաւ սեն սիպտակ ,  
Ընտիր ընտիր քաղեցէ՛ք , քամեցէ՛ք ,  
Տարէ՛ք դրէ՛ք վերին վարագ  
Վէրէն արէք սուրբ Պատարագ :  
Խորդեցէ՛ք ու ավիլեցէ՛ք ,  
Վարդի ջրով սըսքնքեցէ՛ք ,  
Մէջքը կապէ՛ք ոսկի քեամար  
Աստուածամօր խաթրի խամար  
Վէրէն կաթի լուսոյ կամար :



Պ Ի Ի Պ Ի Ի Ե Է Մ

Չայթուկ տըփեմ չորանայ  
Տամ խամբս ուտի կըլամբսայ,  
Խավիկը ծի ձիւձիւմը տայ  
Տանեմ գնեմ խաչկանց տուն,  
Խաչ վավէտրան վէր գլխուն,  
Մեռնեմ իմ պիւպիւշ էծուն  
Աւլ մի բիրե շանց կատուն:  
Ախբէր ախբէր ջան ախբէր  
Ջանիկս քե կուրպան ախբէր,  
Ի՞նչես բարձեր քիոյ իշուն  
— Խունկ ու խինէն արփըշուն .  
Վի՞ր կ'տանես — տըղէզուն  
— Տղէզը փախե սարերուն,  
Մեռնեմ իմ պիւպիւշ էծուն  
Ուլ մի բիրե շանց կատուն:  
կուկուկուկուկու սանամէր  
Մե խավմը կէր տի՞ր գնաց .  
— Ծարաւ ախբիւր կուլ գնաց,  
Ի՞նչ կէր կտուց,  
— Չիր ու չամիչ,  
Վի՞ր կ'տանէր,

— Խարս ու փէսին :  
Խարս տիո՞րի նստե ,  
— Վէր ոսկի թախթին :  
Խարսն ի՞նչի իփե ,  
— Կուրկոտ :

Մէջն ի՞նչի թալե ,  
— Շան լսկոտ :

Վո՞վի կիրե ,  
— Չաչալ Ակոբ :

Վո՞վի աբրորե ,  
— Աղա սօլթան :

Տիո՞րի դրե ,  
— Ոսկի պատխան :

Վո՞վի կիրե ,  
— Կարայ փըշիկ :

Վա՛յ կարայ փըշիկ , վա՛յ կարայ փըշիկ  
Քիոյ մէրն ուտի քիոյ թըշիկ :



### Գ Ե Ղ Ա Յ Ի Ո Յ Տ Ն Ա Ջ

Էհանք Ստամպէօլ ,  
Բիրենք ոսկի պէօլ  
Առնենք ճուխտմ սօլ ,  
Խայնենք տէօրէտէօր ,  
Էհանք պըստի գեղ ,

Առնենք նուկիմ եղ,  
Անենք ձբվազերդ,  
Տանենք խովբվունն,  
Խովիւն խռովե,  
Ոչխար մալուլե,  
Կըթոց կըլորվե,  
Իմ եար խըռովե,  
Էհանք վանայ բերդ-  
Ոտքերս չիդայ խետ  
Կուզեմ դառնամ ետ  
Իմ եար չիդայ խետ:  
Ակլէ տիւկլէ տընաղայ  
Էծիկ մէծիկ մըրէղայ,  
Օֆ, տիւֆ, նաղարայ,  
Խարպասայ, խարխայ,  
Մաղթըկէ կօճակ,  
Պինտ պօղօճակ,  
Ճըթ, պըթ:

ՃԸՂՕՐԻ ԵՐԳ

Քիւ քիւ տարայ տարայ ,  
Ես էլայ բերդի վերայ .  
Կանչեցի տէր Զաքարայ ,  
Խունկ ու մոմ հազր արա՛  
Առաւտուն պաշտօմ արա՛ ,  
Իրիկուն խըթում արա՛ :

Քիոյ էնա պուճախ ,

Քիոյ էնա պուճախ ,

Մեր քիավորանց

Մեղրի պուճախ :

Ես պապածիկ , դու պապածիկ ,

Քեավորկինն ինկեաւ տիւճիկ .

Քեավորն էկաւ տիւս կ'խանէր

Ոտնէն 'ի վեր սև կ'խայնէր :

Եշ քեաչեցին թօրվան բէրան

Ոտկերն արին սուն ու գէրան ,

Գըլթի դրին փաշայ կէրան :

Ուսկունն արին կողվի մէրան :

Կաչին արին տիւֆ նաղարայ ,

Կըռպօն զարնի , խէպօն խաղայ :

Էրկու խոգի մէկ ձիավոր

Մէկ սանախէր մէկն քեավոր ,

Խափմներէն կախվե ճուխտմ պուխ  
Մէյնի սիպտակ մէկքն թուխ :  
Ես պապածիկ , դիւ պապածիկ ,  
Քեավորկինն ինկեաւ տիւճիկ .  
Քեավորն էկաւ տիւրս կ'խանէր  
Ոտնէն 'ի վեր սև կը խայնէր :

ՊՈՒԼԱՆԸՆԱՅ ԱՂՋԻԿ

Մըշոյ Պուլանըխ ի՞նչ անուշ տեղ էր ,  
Աղջիկ , քիոյ խապար իմ տարտին տեղէր .  
Յըծվերդ էր ուռե՛ հս ասի նուռ էր ,  
Արի՛ ձեռս պարզեմ , դու ասիր ժուռ էր ,  
Թէ ժուռ , թէ խասուն մօտ ծի կապիւլէր :  
Սրտովս եմ սիրե մարդ չարե զօռով  
Արե՛ պարիշենք մի՛ կէնար խըռով ,  
Վէր մե են ակխեր աշխար ալամով  
Մե կուտան բռնել աղա ամիրով :  
Տնէն էլեր խաղող կը քեաղես  
Շամամ՝ ծըծվերովդ շաքար կ'մաղես ,  
Ալմաստ խանչըլով սըրտիկ կ'տաղես :  
Արե՛ եար արե՛ , մի՛ կէնար խռով  
Սրտովս եմ սիրե մարդ չարե զօռով ,  
էրկինքնի ամպեր կուգար մարմար ձիւն




Կուգար կ'թափէր վէր մալուլ մարդուն,  
Ատըված ավիրէր կամաղ մարդու տուն  
Չիթող, որ իմ ետը մէկ օր կէր մեր տուն.  
Արե՛ ետը արե՛ մի՛ կէնար խըռով,  
Սրտովս եմ սիրե մարդ չարե զօռով,  
Միրաննի խասե խաղողն ալաճայ,  
Էրկու ետը ունեմ մէկ խին, մէկ թածայ.  
Մէկն կուտայ արաղ, մէկն կուտայ մաղայ,  
Էն արաղ տըվողն շիվար շափարզայ,  
Էն մաղայ տըվողն ծի կուտայ ճաղայ,  
Արե՛ ետը արե՛ մի՛ կէնար խռով  
Սրտովս եմ սիրե մարդ չարե զօռով.

ԿԱՆԱՆՅ ՊԱՇՏՕՆ

Էրկըշպաթ՝ խայ կը թխեմ,  
Իրեքըշպաթ՝ խայ կ'չքմոնեմ,  
Չորօքըշպաթ՝ լըվայ կանեմ,  
Խինկըշպաթ՝ կարկտան կանեմ,  
Ուրբաթ օր լաչի կ'ծալեմ,  
Շաբաթ օր ժամ կէրթամ,  
Կիրակի, խո՞րած խե՞տաըված,  
Վո՞վ բան արե, որ ես անեմ:

ՄԵՂԱՅ

Մեղայ մեղայ խարիր խաղար  
խոստովանեմ անտար խաղար,  
կաթնով ախպիւր, քեարով տաճար  
խետ Աստրծուն անեմ մաճար  
իմ տէր Ասարված իմ խիւղ իւն ճար:



ԵՂՈՒՆԿԷ ԵՐԳ

Էլայ տանիս թափ քէլիցի,  
կարմիր խնձորը կըլորիցի.  
իմ եար տուն չէր նստայ լացի,  
թօնէրն ընցաւ ցան չթալիցի,  
կաթը կը եռար չը մէրիցի,  
Տըղէն կուլէր չօրօրիցի,  
իմ եար տուն չէր նստայ լացի,  
իմ եար նշատե պայն իլըվաց,  
Սախէն կոտրաւ ջուրն գնաց,  
Աղապ լաճու շապիկըն մնաց,  
Եղունիկ խանին շուկէն բաղար  
Եղունիկ գին՝ էրկու խաղար.

Իմ եար կառնի աչիչ նազար ,  
 կուղես խարիր կուտամ խազար :  
 Էլերես կէրթաս շաղպաղի  
 Պըսկներդ շաքար կ'մաղի ,  
 Դու ու քոյ ճուխտակ տէկէրկին  
 Իմ աչքս ինկեաւ վէր էն մէկին ,  
 Էն եղունկանց պանցր էօրէօսբաց ,  
 կութնի տէօչակ Պուրսայի բարձ ,  
 Եղունիկ պառկե իրեննի բաց  
 Էրիկն տէսաւ խելքը դնաց ,  
 վարագայ սար բացվե լալա ,  
 Եղունիկ բիրե ճուխտմը պալայ .  
 Սալամ տաշին կուտան եասին ,  
 Եաղմէն կուտան պիւլիօր Ֆասին ,  
 Եղունիկ կառնեն մէջ կաֆասին :



### ԱՓՍՈՍ ՄԵՐ ԽՆՁՈՐ

Էրկնուց դռները բացվաւ ,  
 Գիտց տուն արևով լցվաւ .  
 Պախչի ուռերով ես ընցայ ,  
 Ծառ խազար ծաղկունք տէսայ .

Մէջ հըմէն ծառերաց, ես,  
Խնձորի ծառին խաւնեցայ,  
Խնձորի ծառն կուլէր կրզկրէր  
կասէր. խոզէ՛ Աստըլած ծիչտեղծէր,  
Ըտտեղծեց ծի պիւզիւ նշան արեց :  
Քիոյ սեղան Հայր Արրահամու սեղան.  
Էն խնձոր որ վէրէն դրած էր  
Դրախաէն էր իջեր .  
Խաղար ափսոս որ էն խնձոր  
Էն պիւզիւ ձեռքն էր ինկեր :



### ՄԱՍԻՍԻ ԵՒՐ

կարմիր, կանաչ, կարմիր ծարուն  
Ախրրանց արուն մէջ քարերուն,  
Էրթէր լըցվէր պարակ առուն :  
Հայրան ես պանցրիկ Մասիսն եմ,  
Ես մօրմօրիկ ձիւն խալեմ կաթեմ,  
Խալեմ կաթեմ քիոյ թեվերուն  
Խալեմ կաթեմ շամամ ծըծվերուն .  
Ծալ տամ, ծալը դընեմ  
Դիւ քէլի ես տօտիկ անեմ :  
Ծիկեալին պիտէր զղզղէր վէր խոտերաց  
կանաչ կարմիր փարտաներ կապած .

կանանչ էլ դնաց կարմիրն խափանց ,  
է՞հ , զըզըլէր էրթէր խառնէր ճըզըլէն  
Գեան , էրթէր լըցվէր կարմիր կըթեր ,  
Մէկ եար առնէր վէր թեվերուն  
Տանէր թալէր ծովու ավուն ,  
Մեր եարն ինկե տանիան իքուն  
Ծոցը բացե աստղուն քներուն ,  
Անուշ խոտն մարդ կըսպաննէ  
կամ ծիբ սիրի՞ , կամ տուր տէստուր .  
Նա կսիրեմ , նա կուտամ տէստուր ,  
Չու՞մ խալի քիոյ միս , թափի ուսկող :



### Ա.Ղ.ՁԿԱՆ ՍԻՐՅ

Ինչի՞ կուլաս կուց կուց արուն  
Թէ՞ կէօ իրե բարի գարուն .  
Վայ , պէպախա մէրիկ ,  
Ծիբ չըտըվիր սինամայ խավքիւն ,  
Ծիբ տըվիր կոր կոր բըվերուն ,  
Ծիբ չըտըվիր սինամայ խավքիւն ,  
Որ առնէր վէր թեվերուն ,  
Տանէր , դնէր պանցրիկ սարերուն ,  
Փիօնիկ դնէր վէր ծառերուն ,  
Որ դայր մութն իրիկուն

Ծիւր գրկէր շանց զըվարթուն ,  
Որ գայր լոսնի բարին ճըվճըվէր  
Զիս քընուց վեր խանէր ,  
Իմ գըլուխս լըվէր կեավու ջրերով ,  
Իմ ծամերն իստըկէր ոսկի պաղերով :  
Իմ պէպախա մէրիկ ,  
Ծիւր տըվիր կոր բըվերաց ,  
Տարաւ իթալ մէջ քեարերաց ,  
Պիոնիկն ետիր մէջ կեաղերաց :  
էս վո՞վի էս մթան , էս գիշերին  
Իմ էրդիս գալուն գընալուն .  
Թէ վարդ ես վեր գալու .  
Թէ՞ շուշան ծաղիկես գառնալու :  
Ասայ , ես նա վարդ իմ ,  
Նա վեր գալու ,  
Նա շուշան ծաղիկ եմ գառնալու  
Ես ինաֆըք ապըռնիկ պիտի  
Իմ պոնիկս քիոյ էրդիս դընի ,  
Առաւտըման ժամն որ զարնըվէր  
Ճըվճըվէր քե քնուց վեր խանէր :  
Ինչ բան կէր բանթող արիցի ,  
Զուրը դրի զըլիֆներս լըվացի .  
Առի գառն ու գինին գնացի ,  
Գնացի չիւմ կէս ճամխին ,

Իմ կանտչ, կարմիրն կապիցի,  
Ինչկանտար ծաղկունք կէր՝  
Իմ սուրաթս շարիցի:  
Գնացի խասայ չիւմ կէս դաշտին  
Չարկամն իմ դէմք դիպեցաւ:  
Ասաց բարեկամ դիւ տէր կէրթաս,  
Քիոյ եարնի մեռե . . .  
Ոտնիկս իւլորով ընցաւ . . .  
Գառն առեց գինին թափեցաւ .  
Էն գինոյ տեղ բիւր խազար  
Ծաղկունքը բուսեցաւ:  
Ծաղիկ պալատան ծաղիկ  
Վէր սև օձերաց կաշուն  
Բուսնէր ծաղիկ:  
Չարկամ, քե բան չեմ ասե,  
Քիոյ տնիկն՝ մէջ պէօպան դաշտին,  
Քիոյ դռնիկ՝ դէմ շար կըրօղին:  
Քիոյ էրդիսն՝ դէմ խարաֆ քեամուն  
Կըրօղը ելումուտ անէր՝,  
Քիոյ խարս քիոյ թախտէն տանէր,  
Քիոյ փէսէն էօթնիկ աթոռէն:

---

Բիւրթը կտրե ինկե դառներ :  
Գեղ կայնի կէրան կ'կոտորի :  
Գէլէն տամազլըխ չէլնե :  
Գէլն անօթու սար չը կարնար էլնե :  
Կասեն տէրամեռն ինչկանտարի կիրե,  
Գէլու դըլխուն ավէտորան կարդացին,  
ասաց , շոտ արէք նախիր գնաց :  
Գինու սիրուն շիրախանի պատ կ'լիղի :  
Գնա՛ բունի՛ քե խընամի՛ որ պոչքթիոյ  
պոչին կը՛նմանի :  
Գողն իւր մէնէն սըլի :  
Գողն որ տընէն էլնի եզն էրդիսէն  
կ'խանի :  
Գողն գողէն գողացաւ աստված վեր  
ղարմացաւ :  
Դրախտը որ իմն չի՞,  
Խլվանք թո՛ղ թավալեն ինե :  
Դու իմն գիտես ես քիւմուն տէր-  
տէրն մեր էրկըսուն :  
Դիւրս քեախանայ ներս սատանայ :  
Եզն որ իյնի դանակ կ'չատնայ :  
Եզը կ'տանես մօտ դանակ :  
Եզն դատի եզն ուտի աշխար կավիրի :  
Եէթըմուն խաց տըվող չկայ խրատ



տըլօղ շատ կայ :

Ես ջաղցէն , դիւ ջաղցաբնէ՞ն .

Ես կուգամ ժամուց դո՞ւ կասես օ  
ղօրմի Աստված :

Ջատանց սիրուն , մօտանց խիրուն :

Ջբմէն օր էծու խտեմն բացի մէկ օր  
էլ թող մաքիւն :

Էժան միսը պուտուկնի մաշե :

Էլի գիտնաւորին գէրի ,  
մէլներ անգէտին սիրելի ,

անգէտն քեամակս առիցի  
ասաց , դի՛ր գէտին ոտքս կ'ցավի :

Էծն ինչ էծի իւր տեղը կ'քերի վերջ  
կ'նստի :

Էկանք ալիւր , էհանք ի՞ւր :

Էն շուն էն շքնէն՝ էրկուս մէկ անէն :

Էն ինչ չես ուզե քիւրոջդ կը կամէ-  
նաս տալոջդ :

Էչ խեծներլ մէկ ամօթ էջներն էր-  
կու :

Էջն ինչ գիտի գէշն ի՞նչի , էջն ար-  
ժանի՞ առօտ խոտին , էջն՝ արժանի չոր  
չար փըշի :

Էչը կէրան պոչէն խոռովա :

Էջը կ'դադըեն դու գիտես թէ քեա-  
պա՞պ կիփեն :

Էջ խէճեր , է՞չն կ'փնտռես :

Էտ հալո՞վն ես որ էսայ շալոփես :

Էտ հալո՞վ պիտի էրթաս փթրի թալան :

Մեր կովը մեռավ կաթը ցամքաւ :

Իրիկմ՝ էլնի թող գէշ էլնի ,

ոտկերս թո՛ղ գէտնէն կտրի

թող էջը էլնի :

Ինչ չէր տիտե պատէն իկախ դարձաւ  
տէսաւ իտվէնիկախ :

Ինչկանտար որ ուղտն իյնի , իւր կա-  
շին իշում բեռ կէլնի :

Իյնի մալին տէր , կայնի վուրդու խէր :

Ինչ պըրտես իւրիչի քեասէն կուգայ  
կ'լըցվի քիոյ կտէլ :

Խաճաթ օրմ՝ լըվացփոխ տէօրմ :

Խափն ի՞նչ խավի ջուրը կ'խմի տեխ  
Աստըված կիրիշկի :

Խափն էրազն ինե իւր մէջ գարու  
արտին կ'տիսնայ :

Խարսնիս ծի պիտի , խաչօխնէն իմ  
խոր ու մօր :

Խաց ու բարին կէրթայ բանն առաջ  
չէրթար :

Խացը դրին խասաւ , բան դրին  
փախաւ :

Խացը խացթըխին տու մէկէլ ավիլի  
տու :

Խին խավերաց քըչայ քըչայ , նոր խա-  
վերաց ճուճուճու :

Խետ շինակնուն մէլնե շիրիկ  
քե կ'բիրի կալմը նըվիկ ,  
կուգայ կ'նստի շանց քիոյ իրիկ :

Խըլղի խարսը խօրօտ կէլնի :

Խըլղի աչքը սր ծի լոս տա՞յ , իմ  
աչքը կը խանեմ , կ'թալեմ ,

Խրատ խեղուն ըղրի սապոն սեուն :

Խունկը վէր կրակին տէրը կ'ճան-  
չընայ :

Խորթը կ'խանի մարդու մորթ :

Ծանտը նստիր կիտր գաս :

Ծըճունըկան աւերս , գնա՛ Պաղտատ  
խարցու :

Ծով կէրթաս , ծարա՞ւ կուգաս :

Կալէն ի՞նչ տէսայ , խըղիւլ քե բարի :

կասեն ծրծռնրկան անէծքն վէր մար-  
դու չէլնի :

կատուն տունը չի մըկները չալավանդ-  
կ'խաղան :

Կակըղնաս կուտես :

կատվու խոխուալն մկան խոզեխան-  
դիսանի :

կատվուն ասին աղվըտդ տեղի խոզն  
իտու վէրէն :

կարմիր կոմն իր կաթը կ'թափի :

կըրրէն իւր կօտից փա'խսի :

կըլորվե խուփ գընտե պուտուկ :

կռէթ նստե քեարի տարտ կուլայ :

կիրէնի շիներ մրրէն պէ կիրէն խող  
քեաշե վէրէն :

կիսուրս մեռաւ տեղս լէնացաւ :

կոմն տե կաթը քըռըստայ :

կուշտ նստանք , անօթի կայնանք :

Համբերութիւն կեանքի :

Հըմէն բան աղով , աղն էլ համով :

Հմէն խավուն խորոված , կոր անծը-  
ղա՞ն էլ քըճըճած :

Ձըվէն էլե , կոռճին չխամես :

Ջրվազեղի սիրուն՝ թավի կոթը  
կ'ըրկսթի :

Ձեռն զձեռք կը լըվայ :

էրկուքն իրես կը լըվան :

Ձիւն իկե՛ որ ոտս մըզմղտայ :

Ճըպուտ աչքդ կ'պագեմ՝ որ վէր  
խացիս կտրագ կըսես :

Ճիւղը ծուռ , պըստիկն ծուռ ուրու-  
րոցին՝ կասի , ես չանց հըմէնն ծուռ :

Ճըրագն իր տակ լոս չիտար :

Մախն ընկերոյ խարսնիսի :

Մկան շեռն վէր ծովուն կէրէվայ :

Մարդ՝ կրակն իւր բաղըջի տակ կուզի :

Մարդն մարդով , էրկուսն Ասարծով :

Մարդ՝ որ ախպրէմ ջուր խըմի ինոր  
ինե քեարը չը թալե :

Մարդ՝ մարդու քեախանայ , մարդ՝  
մարդու սատանայ :

Մարդ՝ մարդու տարաը չը գիտե կէս  
դ իշերին ժամը կը ծէնի :

Մարդու աչքն էլնի մարդու անունն  
չէլնի :

Մարդ՝ մարդու իկիմ՝ կուտայ մարդ՝  
մարդու ճիւթմ՝ խաղող չիտայ :

Մասման ախպիւրն էկաւ պըխտոր :  
Նա տիւ ինոր ասա՛ կաղ, նա էն քե կոր :  
Մէկ ձեռքը ծափը չը զարնե :  
Մէկ ձեռքով էրկու ձմերուկ շքըռ-  
նըվե :

Մեռել տաք տաք կը լվան :  
Մեր տուն կուտ կուտի, տրկըցի տուն  
ձիւ կածի :

Մէկ տուն էրկու տանտըկին էլնի ,  
տախտն անավել կ'մնայ :

Մէկ փոր՞ էրկու մունաթ :  
Մեռնեմ էն տաշտին , որ տաշտմ՝ էլ  
կայ խետ կշտին :

Մըտըրըպն իւր տիւֆը կ'գուլէ :  
Մուկն է՛լ օրօճ :  
Մուկն չէր մտնե պիոն՝ շախկեամ կա-  
պիցին պոչ :

Նա դիւ ինոր ասա տըօ , նա էն քե  
ասի պըլէօ :

Նա քիոյ մեղրն պիտի , նա քիոյ տը՛ղ :  
Նըման զնըմանին սատանէն իւր խը-  
նամին :

Նուկին տաս կեազ կ'խոսնե :  
Շաքարն ինկե շան բէրան :

Շան տէր , գէլուն աստըված :

Շան կ'զարնեն տիրոջ խաթըր կանեն :

Շան մօտէն քաղցր հոտ :

Շատ կարգացողն դասնի տաճկըցե :

Շեխն իրիցուն կասի , պախսակեր :

Շէն անուն վէր ավեր քեաղգին :

Շէն կէնէր մեր տընիկ , անուշ կէնէլ

մեր կընիկ :

Շէն տո՞ւն նախրախաց :

Շէն տան տղայ՝ թաժախացի կարօտ :

Շէն տան խարս՝ շուրվի թամարգիւ :

Շինականն՝ որ շըլիթի , չարուխ ոտը

կ'տիվտի :

Շինականն վէր ական :

Շուն խաչելով ապրերի , գառ՝ մըն-

ճելով մեռերի :

Շուն սալախանէն մանելով էլնելով

կասապ չէլնե :

Շան խետն ինե՞ս , շան խոտ կուկեայ :

Շուն ծովը լըկելով ծովը չխարամվե :

Շուն իզարկ սալախանից ոտքմը տա-

րաւ , ինչ արաց . իւր բխթըպարն կոտ-

րեց :

Շուն՝ խաչի , քեարվանն ընցընի :

Շուն կաղալով չը խատնե ։  
Շուն խաչելով չը տախանար ։  
Շուն յիշայ , փէտ դիր կըշտիդ ։  
Որ տեղ խաց կա՞յ , բէրան չկայ ։  
Որ տեղ բէրան կա՞յ , խաց չկայ ։  
Որ սոխը չես կիրե ինչի՞ կը կըծվըծաս ։  
Որ Աստված կըռկան ծէն լըսի՞ վար-  
դօյլըրին ձիւն կ'դնի ։  
Ուղտ՝ կըտէլէ՞օվ կ'ջրես ։  
Ոտքովն ուտենք անտաքն մեր ծառէնի ։  
Ուտողն չգիտե , բրտողն գիտէ ։  
Ուրաքն իւր կոթը շտաչե ։  
Չամիչը խատ խատ , մեղր մատ մատ ,  
տեղն պարապ զտտ չմնայ ։  
Չարոց ճարտար , բարոց տըխմար ։  
Չում դժոխք նշանց չիտաս , արքա-  
յութեան չը տիրանայ ։  
Չում շուշան զարդըրվի ժամերը կառ-  
ցիկվի ։  
Չում չիդայ իտին՝ չեն յիշայ առջին ։  
Պարնի դըլխուն խողը չեն ցանե ։  
Պըտարէ դըլէօխ էլնի խոց վաստըկօդ  
էլնի ։  
Պուտիլի եռը՝ տէկէրկընկան խեռ ։



Պուտուկ կասի տակս իլին ոսկիք ,  
շիրեփի կասի ես ի՞նչստ կուգամ :

Ջուրն իկե ջաղացնի տարե , դիւ  
ջախջախըն կը փընտուես :

Ջըրի ծէն զատանց անուշ կուգայ :

Ռէսի վէրէն լոսի կաթե , վո՞վի տիսե

— գըզիր :

Սատանի տունէն շակալ :

Սոխին անուշ չէ՛նե :

Սօկըրի սօլը խին կէ՛նի :

Վախէցի տիւց , որ չը վախէնայ Աս-  
տըծուց :

Վո՞վ կուզի իւր աչքը կոր է՛նի :

Տայմայ ժիւես , շէն տան տեռես :

Տարեկան որթիկ կէրթայ ախպիւր  
ջուր կը խըմի :

Տէլ չէր էլեր դաշո տըմիոց , շոս է-  
լաւ թորվան քըրթոց :

Տէլ չէլե խաւ՝ կ'թըռնի թառ :

Տէլ չէլե կը խուսի :

Տըզի պատճառ , մօր օրօճալ :

Տուն խախուտ մըհանայ կարկուտ :

Տունը մե , բալը խավերաց :

Տիւ աղայ, ես աղայ, մեր աղունք  
վ՞ով կաղայ :

Տըղին բան աիր խետն արա՛ :

Տեղ կայ սովի, տեղ կայ ծովի :

Տիողին տէ՞րես, տաքցոցին տէր չե՞ս :

Յըռան կովը նախրի անուն կավիրի :

Փառք քեզ փշրուկ որ էլար լամէզ  
կըպար պուտուկ :

Փուշը փուշի մարիֆաթը խօշի :

Քեարը քրռէն վէր քեարավանից,  
ինչ կուկէր վէր մահմըտանից :

Քայլ կարնայ իր գլխուն տեղ կանի :

Քեարն իւր տեղ ծանտըրի :

Քեանի կէր պատանք չըկէր, որ մե-  
ռաւ քիւմպէթ կապիցին :

Քիչ կէր ջաղացն իվեր, էն էլ իրե  
ջըրտունն իվեր :

Քիոյ միտքը չարի դիւ գիտես իմն :

Օձը վէր ջրին խարամ չանե :

Օրը կէրթայ ավուր շառք չէրթայ :



ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ  
ԿԱՄ ԱՌԵՂԾՈՒԱԾՆԵՐ

Մե ծառմ՝ կայ ճըճանի ,  
ճըճանի տակ՝ մէյտանի ,  
մէյտանի տակ՝ կալամի ,  
կալամի տակ՝ կըթխայի ,  
կըթխայի տակ՝ զուռնայի ,  
զուռնայի տակ՝ մարաքի ,  
մարաքն իլին ուրաքի :  
Էն ինչի (\*) .

Խէքեաթ խէքեաթ պապսի ,  
տաշտայ քիւռակ տակսի ,  
ինչ կայ շքրտին պարկսի ,  
սանտի կընտին հիւնթսի :

Մէկ մուշտակ՝ խազար խրիշտակ :

---

(\*) Ամեն հանելուկներաց վերջ կրկնելու է  
էն ինչին :

Սըլուըն էլաւ սարն իվեր  
սրբեց իբե տակն իվեր :

Մե կովմ՝ կայ հանի հանի ,  
իւր օլքտկներն ըսպահանի ,  
կաթը կուտայ , տուն չիգայ :

Անխոկի էչն՝ անխող տանտի վերէն :

Ամպըն էրէրաց , քեարվան ճէրէրաց ,  
ամպը՝ դու կայնի , քեարվան ես  
դարձի :

Մըսէ բերդ , էրկըթէ թարածայ :

Մե տունմը կայ տունմն էլ ինե  
դեղին Դաւիթ նըստե ինե :

Օյին օյին իտե խըլօյին :

Նեղ փօղան , էրկէն սօղան ,  
կուղմարակէն կէրթայ կուգայ :

Պըստիկ պըստիկ եկեղեցի  
դանկով զարկի դուռը բացի ,  
մտայ ներս լաամբուրեցի ,  
էլայ աիւրս , դուռը խըփիցի :

Էն ինչի, մե բանմբ կայ  
էօթ սար կընցէնի պոչը կէրէվայ :

Ալ եզնիկ, պալ եզնիկ,  
կայնած շիվարած եզնիկ :

Կարմիր կովը կէտին կբ պուայ :

Չբխչբխիկ նստե առուն  
խաղար ճեաթ կայ իտիվուն :

Աճամ խաթ, խաթ,  
շապիք, կաթ կաթ :

Էլը՝ վեր էլին՝ թագ աւոր վեր սէլին,  
թըվանքով զարկին պրինտար արին,  
արունն թագէթաղ ցըրուիցին,  
ուսկոռը մէջ տան խորիցին :

Մե խավմ՝ կայ իլանի  
կարմրակտուց սիլանի,  
կուտ կուտի էրկըրի,  
կէրթայ կ'թառի բերկրի :

Մըսէ թեւ, փէտէ գերան,  
շաշիաւը ձեռ կուտայ էրան :

Իմ մօր սալանմը կայ  
աշխար կ'ծածկի, ծովը չծածկե :

Իրիկու բեռմ' պըտըտուր թալիցի տանիս  
առաւտուն էլայ վեր զատ չկար :

Ջըրէ տուն, փէտէ պալնիք  
որսն ընցաւ, որսորդն խէխդըվաւ :

Չատմը կայ աշխար կ'տեսնայ  
Աստըված չը տխնայ :

Էն ի՞նչի, ինչ որ ասեն  
կէյնի ինե :

Տումը կայ տում' էլ ինե,  
կատղած շքներ կասուկ ինե :

Փէտը փէտին ախպէր,  
Ղուրը Ղրին խօրօխպէր,  
տարպին սիրելին  
քաղաք չի մըտներ :

Մե զատմ' կայ զարմանալի,  
սար կէլնի կեաղան կ'բերի :

Մութը տուն, տըմպլիկը քիւն :

Մարդմ' էկաւ հէրէն , փօստը վէրէն  
քեամին կէլնի կոթի ծէրէն :

Սև արապ սև չարփարայ ,  
ինքը կը զարնի ինքը կը խաղայ :

Ուղարը քէօչըցուցին , իտլէն փըչիցին ,  
Աղթամարայ ճըրագները կը պուցին :

Պարակ թաղի վէր պատին կը վազի :

Առնեմ ձեռքս կուլայ ,  
դընեմ դետին կ'դագրի :

ասլեմ կ'փախնի , առցըկեմ կը կայնի :

Ադամայ տարվընէն իբաց  
տախտակն ինկե ջուր՝ չ'փըտե :

Էս տեխը տար , էն տեխը տար  
մէջն անդատալ :

Տիզմը էս պատ , տիզմ' էն պատ ,  
չում չիգայ տիզմարակէն ,  
չի պըրծընե տիզն էն պատէն :

Ուլուլիկ , ճուլուլիկ  
մէջն իլին կարմիր ուլնիկ :

Իրեք ոտնէն , մէկ մուրուսէն  
կայնե կուտի քեոյ խօր քիսէն :

Չորս վէր շորսին , ծովն վէր ծընկան  
վ՞ովի նըստե տեխ քեոյ կըրընկան :

Մէյմը կուկէր Արարուց ,  
տէլ չէր իկե մէկ թըռուց :

Անծակ մարգրիտ , անուոր դերձան ,  
Աստված կը շարէ , մարդն կ'քակէ :

Խանէլիւկ , խանտակէլիւկ ,  
մէջն ուտէլու , տիւս թալէլիւ :

Սեղան սատըֆէ , ոտքերն արծըթէ  
արև կը բանայ , լուսին կը խըփէ :

Պըստիկ պըստիկ մասրաթիկ ,  
աշխար վէրէն խտսրաթիկ :

Մե խամմ' կայ ճըլպըլտունի ,  
ճետերն խտեվ տըսվէրկուի :

Ական ական չէ պատուական ,  
Թարղիւ կարած չէ մըկըտած :



Մե բանմ՝ կայ բանոցի ,  
թահնի դբլէօխ սըղոցի ,  
ձէն կ'խանի մեռելհարոցի :

Մե կովմ՝ կայ հանի հանի ,  
պըտկներն չանկեալ կ'նըմանի ,  
մարդ կուզեմ , որ դէմ կայնի :

Ըստիւց չիւմ վան , վանայ չիւմ Ոստան ,  
ոսկի կիւկիւմ մէջն իլիվան :

Կէրթայ կէրթայ ոտը չկայ ,  
կուգայ կընըստի ոռը չկայ :

Սև արասլ՝ պեղն էօլըրեց ,  
բիւր խազար մարդ կըրեց :

Չորս ոտը վէր խողին  
էրկուսն վէր կողին ,  
տուճապեօղ վէր քամկածողին :

Մըսե սուն նըռնէ գէրան ,  
թօփուզով կուտամ էրան :

Վիրին տախտակ տըխկ տըխկ ,  
ցածրի տախտակ՝ վըխկ վըխկ ,  
մէջնի տուտուղ տուտուտուղ ,  
տիկնի բէրան վըղ վըղ :

Մե տունմ' կայ տունի ,  
տան մէջն իլին ծովի ,  
ծովի բէրան ակունքի :

Քեար վէր քեարին քեար չի ,  
կը կըվկըվայ խաւ չի :

Աշխարհն ո՞վ է , բոլոր ծով է ,  
էն ի՞նչ եղ է , բերածն կով է :

Խանըմն նլստե խանըմանակ ,  
ճամբը թալեր կիւլքստանակ ,  
անկընունք տըղէնն ի գըրկին ,  
անձակ գինտըն ակընջին :

Կարմիր կովն տուն կ'պլռայ  
սև կովն տանիս կ'պլռայ :

Պօլատ կըտէլ ճըլըփ պատ :

Անբոյսն անձընին բարձին ,  
անգատարին երթօքն ընցուցին :

Սև սըկուաւ , արասլ ճըկուաւ :


Մարդմ' իկե էրէն , փօստ վէրէն  
մուխը կէլնի կսթի ծէրէն :

Մե տունմը կայ տունի ,  
տան մէջն իլին խըսիրի ,  
խըսրի տըկէն նալէն գնաց :

Խօրօխպէր Գաւիթ ծընե չծընե  
իսկի քաղաք չմըտե :

Կէրթայ կէրթայ ճամպախ չկայ  
ճամպախ կէրթայ թէօզը չկայ :

Քէար վէր քեարին քեար չի ,  
կը կըվկըվայ կաքեաւ չի ,  
ձիւ կածի խաւ չի :



### ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Նախընթաց նամակներ , երգեր , առած  
և հանելուկներն պիտի շարունակուին գրքիս  
երկրորդ և երրորդ հատորներովն :

# ԲԱՌԱՐԱՆ

	Ա.	Առակէլ, արագիլ:
Անտիոր, ընտանիք:		Առչկան, դերձան օւ-
Անկալատ, անաղարտ:		րօլ գործիք:
Անտար խազար, անդր		Առչապըլէօ, մտացա-
քան զհազար:		ծին հրէշ:
Անդան լար, աղեղան		Առցկել, արձակել:
լար:		Առկող, առապար:
Անթողկել, անդր քան		Առակ չառակ, սէգ,
զսահման նետել:		սնապարծ:
Անել, առնել:		Առուն թռած, տաճ-
Անկիւմանք, յանակըն-		կացած:
կալա:		Աստվոր, երկրաւոր:
Անանակ, ծիածան:		Ավորչէ, անկէց ետք:
Անսըվաղ, նօթի, ծա-		Ավիւլիւցք, Տճ. չէօր
րաւ:		չէօփ:
Աչք խիոց, ակնթարթ		Ավզնոց, աւաղուտ վայր
միջոց:		Արփչում, մետաքս:
Ապոնիկ, տեսակ մը		Արոր, ծովային թըռ-
ճնճուղ:		չուն մը:
Ապուռ, Տճ. քէլէփիր:		Արդար եղ, թէրէ եաղը
Ապուկել, օձիկ փակչել:		Ագապ, ամուրի:
Ապով, սլատճառաւ:		Աղուլի, կատաղի:
Աւփոտ, Տճ. եօնճայ:		Աթաչակ, վէրք:
Առատամ, խոփ բըռ-		Աժնամական, իրրև թէ
նօղ փայտ:		Ալուչայ, սալոր:
Առիք, առաստաղ:		Ախու, երկիւղէն:

Ախլլազդեզ, ուշագրաւ  
Ախտեց առեց, աչք  
առաւ :

Ախր, ապարէն:

Ակ—ական թորվան:

Ակուկեայ, թոնրի ա-  
կան բերանոց :

Ակուկեւ, բռնուիլ :

Ակնճկլայ, աւետիս :

Ակոսթածիկ, կոծոն  
կամ կաշառք :

Ակլակ, սլահ ղնել :

Ակուլ, աւետել :

Ահանչ, միջարկութիւն

Աղորթ, յիրաւի :

Աղոթրան, արևելք :

Աղուն, աղալի :

Աճրղճուել, խառնուել

Ամպխովանի, հովանոց :

Ամճկոթ, ամօթխած :

Ամիրաչխամ, խոտ մլ :

Ամանկվայ, աման լվա-  
ցող ջնջոց :

Աղջկուտակ, աշարջուկ

Ամպրնոց, համբարանոց

Ամանկոտարուկ, խոտ մլ :

Ալաճէպ, անճոռնի :

Այլնիկ, թշուառ, ո-  
ղորմելի :

Անչամ, այնքան կամ  
չատ :

Անկոտք, ազահ :

Անկին, անդունդ :

Անթրոց, կրակ խառ-  
նող ճող :

Արմաղան, շնայխարհիկ

Արունտարուստ, ա-  
րիւնաշաղախ :

Արախշի, գլխու կտակ :

Արունթըթախ, արիւ-  
նաթաթալ :

Արընխոած, կատաղած

Աւատալ, հաւատալ :

Այնի, ախունք որթա-  
տընկոց :

Այխախաւար, ցաւով  
խաւարած աչք :

Բ.

Բովանտար, բովանդակ

Բազղըվոր, բազղաւոր :

Գ.

Գեղավրայ, գեղջկօրէն

Դ.

Դրսիւց, արտաքուստ :

Դիւրս միցին, դուրս  
հանին :

Ե.

Եռկծալ, երերալ :

Եղունիկ, աղաւնի :

Եռանտ, յեռանդն :

Եի, երբ :

Զ.

Զախախորեւ, զարհու-  
րիլ :

Զարզանդ, սոսկում :

Զատ, իրմ :

Չատու, հեռուստ:	Էրէցայ, այրեցայ:
Չատանալ, հեռանալ:	Էհանք, երթանք:
Չարզավատէն, զար զապուռ:	Էչլու, սիրահար:
Չարնճի, քնահատ:	Էվար, երեկոյ:
Չմէն, ամէնն:	Էօրէօխկել, յուղարկել:
Չէօնար, կաշեայ դօտի:	Էօրիւմ, դոռ խառնու-
Չըղբիկ, խից:	Էթ, օգնութիւն:
Չղղուէն } Չլղուէն } ջրի ծածա-	Է՛
նուն ընթացք:	Էխթատեղ, ուխտա-
Չուլալ, վճիտ:	տեղ:
Չիւպարայ, օլամ:	Էհ, միջարկութիւն:
Չօղան, հովասուն վայր	Էղբի սաստն, ընտիր
Չօռով, բռնութեամբ	աճառ:
կամ ուժեղ:	Էնտես, այն դեհ:
Չօպուտայի, կոստա-	Էնցնել, անցանել, կամ
տարազ:	մարել:
Է՛	Էնքիւռ ընքիւռ, հորդ-
Էւմ, դարձեալ:	հորդ արտասուք:
Էլվէճ, ելեէջ:	Էռընտ, ժիր, կամ ա-
Էծուպտուկ, մեծապը-	ռողջ:
տուղ խաղող:	Էտկնայ, այդպէս:
Էրկնախլուէնճ, երկ-	Էսկունի, այնպէս է:
նամբարձ:	Էտեսի, այս կողմ:
Էջի դինի, ինքնաքամ	Էստիւս շիւմ, ասկէ
դինի:	մինչև:
Էրանիկ, երանի:	Էստըրիւս, այս անդամ
Էրան, Տճ. սալուրմադ	Էստեղ, այս տեղ:
Էրուն, երամք:	Էսկնայ, այսպէս:
Էն սատաղին, անոր	Է՛
համար:	Էտիթ, զանկապան:
Էկէստար, այդ եստան:	Էտլել, նետել:
	Էտիթրաւան, դահա-

ւորակի  
 Թապառուք, հազուա-  
 գիւտ:  
 Թամարգիւ, կարօտա-  
 կէզ:  
 Թաճիր, ցորնի ամբար:  
 Թահնայ, կաւակիր  
 գործիք:  
 Թառ, հանգստարան  
 հաւուց: լիծ:  
 Թանխուս, թթու խա-  
 Թանաք, մելան:  
 Թարկել, թողուլ:  
 Թարածայ, սանդուխ:  
 Թափթափայ, Տճ. փիտէ:  
 Թլֆել, շատ հոգնիլ:  
 Թըռսուկ, կոկորդառ:  
 Թեխս, դրդուել  
 Թեղել, ժողովել:  
 Թեռ, մեծ ջրվալ:  
 Թէպոիլ, յապուշ կըր-  
 թիլ:  
 Թէօլ, քէն և ոխ:  
 Թըյթընկեալ, կեղծ լաց  
 Թընթոց, ճաշահար  
 գործիք:  
 Թիօլ, թոյլ:  
 Թիթխոտ, զայրացիոտ:  
 Թըռվոալ, թռչտիլ:  
 Թո՛ւ, միջարկու թիւն:  
 Թ.  
 Թաժ ժեխ, խոխ:  
 Թաժիկ, Տճ. շէօքէլէք:

Թանտեռք, ժանիք:  
 Թճնել, խառնել:  
 Թիւմի՛, միջոցմ՛:  
 Թմտալ, ժպտել:  
 Թռռմուռ, ահաս տը-  
 հաս:  
 Թռռկուճոփ, կանաչ  
 կտրիճ մեռնել:  
 Ի.  
 Իղկուրուս, հետք ան-  
 նըշմար:  
 Իլիկ, Տճ. իլ:  
 Ինե, մէջ, հետ:  
 Ինչխ, ինչպէս:  
 Ինաւֆք, թռչուն:  
 Իրար, մէկզմէկ:  
 Իրիչկել, նայել:  
 Իւրիչ, այլ:  
 Իւչիկ, կամաց կամոց:  
 Իսուն, յիսուն:  
 Իսկի, բնաւ:  
 Ի՛շ արա՛ր, օրօր:  
 Լ.  
 Լախլախ, խախուտ:  
 Լակ, շան կերակուր:  
 Լամէզ, խիւտ:  
 Լաճ, մանչ զաւակ:  
 Լաչի, լաշակ:  
 Լապտրակ, նապաս-  
 տակ:  
 Լալօ՛, կոշական:  
 Լալու լալու, զանա-  
 զան անճոռնի ձայնք:

Լաքէօշ, բացարեբան :  
Լեխեւ, ջարդել :  
Լեղապատառ, սրտապատառ :  
Լեղիս պատուաւ, Տճ. էօտիւմ փաթլաաը :  
Լէլաւ, երեբալ :  
Լիպող, լպիրշ :  
Լըմկեւ, չարչարել :  
Լըմլմեւ, ուտել :  
Լըպղորել, մորթըքերթուիլ :  
Լըխէֆ, վերմակ :  
Լըպղտրաւ, սահիլ :  
Լըպ, ափ :  
Լըկօթեւ, լիզել :  
Լըղմոր կամ Լըղպոր, կակուղ տանձ :  
Լըծառ, պարանոց :  
Լըկեւ, հալիլ, լափել :  
Լինտ, ատամնապատմիա :  
Լուսաթըթախ, լուսաթաթաւ :  
Լոճուած, սրկրթուած :  
Լօշ, բացուած հաց :  
Լօպկեւ, մերկացնել :  
Լօղլօղընայ, ձրիարարի :  
Խաթիւնիկ, բիր ահան :  
Խաթմամայ, մեծ մայր :  
Խիւ Տճ. շէօի :  
Խալիոր, ծերուհի :

Խաճաթ, փոխ :  
Խամբայ, իշխան :  
Խամբուռ, խուսիբ կամ փունջ :  
Խամաւոր խարս, ամենագեղ հարս :  
Խայան, մանրուած կալ :  
Խանելուկ, առեղծուած :  
Խապլպեւ, խարխուրել :  
Խանկեւ, մեռնել կամ մարել :  
Խառնալուծի, խառնիխուռն :  
Խառճեկաթ, խաչերկաթ :  
Խաւրծիլ Տճ. ուշկուն :  
Խացթուխ, հացարար :  
Խղիւղ, կալի մնացորդ :  
Խեմ, տեսնամ :  
Խէրանց, հայրենեաց :  
Խէքեաթ, պատմութիւն :  
Խէրու, խէրղնամ. հէրուն և անցեալ :  
Խէշտրան, տախարակ :  
Խինութ, հինուց :  
Խունձկուլուլու, թըրջուած :  
Խուրուվու, նորովուած :  
Խորած, խեղիատուած, անիծանք :  
Խունտատ, խոտ մը :



Խտրաց, մէկտեղ.  
 Խօ՛, միջարկութիւն.  
 Խօրօխպէր, հօրեղբայր  
 Խօտ, կոտրած խեցեղէն

Մ.

Մազրեւ, ցնորել:  
 Մալի, գոցէ:  
 Մանտրմակ, օրօրան:  
 Մամ, վարս:  
 Մանծողած, խոֆած:  
 Մանծրված, մաշուած:  
 Մէթ, մանտր:  
 Մէթել, մանրել:  
 Մրընվել, տարածուիլ.  
 Մըծդկտալ, ցնծանալ:  
 Մըվիկ ծըվիկ, ձըվէնս  
 ձըվէնս:  
 Մըոծակ, ջրծակ:  
 Մըխրկտալ մխալ

Կ.

Կազալ, տերև:  
 Կատալիկ, հողէ աման:  
 Կալըրել, գալարիլ:  
 Կանտ կիւզ, մեծ ու  
 պզտիկ:  
 Կատայ, բաղարջ,  
 Կանկեառ, բանջար.  
 Կաթիկ, փորախտ կամ  
 տալաք:  
 Կառ, փուշ մը:  
 Կանճրակ, կաթնտու  
 հունտ մը:  
 Կանափատ, կանեփո

Կալտնել, սխալիլ:  
 Կեանկեալ, զրօսնուլ:  
 Կարար, քուրձ:  
 Կաթիւկ, հասած սլըտ-  
 շոց ծառէն ինկած:  
 Կալամ, տունկ, կամ  
 գրիչ:  
 Կալըրխնել, խիտ սլըր-  
 կել:  
 Կեռիկ փակուիլ, լե-  
 զուն կարկամիլ:  
 Կեապ, խալթըլի տակի  
 տերև.  
 Կեապ, կակուզ.  
 Կեազ, Տճ. կեապան.  
 Կեաղտիկ, գաղտուկ.  
 Կէօլէօնել, կուտել.  
 Կէօրէօվրել, գորովով  
 համողել:  
 Կէօնտ, պար.  
 Կէրնտի, գերանդի.  
 Կէժուիլ խեւիլ:  
 Կէկաճ, եռանկիւն.  
 Կէօղվէնք, ժողվէնք  
 անկողնոյ.  
 Կէլուկ, խոտ մը.  
 Կէօհան, ահա.  
 Կըլիւլ, սիսեռի սյլ տե-  
 սակ.  
 Կընքիկր՛, քիչմ՛ բուն.  
 Կըռեխ, շարաւ:  
 Կըղիր, Տճ. քէհեա:  
 Կըզվիլ, ծռվիլ: ↓

Կըռկթ, հողակոչտ:  
 Կըծվծալ, դառնանալ:  
 Կըլմայէօղ, ճակնդեղ:  
 Կըռիկ, ագռաւ:  
 Կըժվժալ, խառնաձայն  
 Կըլկլալ, դըղըչալ:  
 Կըմունի, քիւմք:  
 Կօսիօ, ահա:  
 Կթան, կաթնատու ա-  
 նասուն:  
 Կթոց, կաթի աման:  
 Կթխայ, գաւաթ:  
 Կժալ, ախանջի խժալ:  
 Կիբէն, ջանք:  
 Կիոխտ փըռոչտ, դա-  
 րուփոս:  
 Կիւհնոց, գողնոց:  
 Կծիք դրին, փախան:  
 Կօվու ճայտիկ, բանջար  
 մը:  
 Կուզլան, սապատող:  
 Կթթ, բռունցք:  
 Կուսի, կտաւատի  
 դիրտ:  
 Կթթխքիով, հուժկու,  
 ուժեղ:  
 Կուժ, սափոր:  
 Կիոսծի, ածուխ:  
 Կու, կենդանեաց աղբը:  
 Կուց կուց, ափ ափը:  
 Կճատ, կարճ:  
 Կպուցել, վառել:  
 Կպնել, փակչել:

Կսայ, պատմութիւն:  
 Կուռօ, քիւրտի տղայ:  
 Կոպունատ, կոչտ, կո-  
 սիտ:  
 Կողինձ, որիզ:  
 Կոռթ, ամրացած հող:  
 Կուռիկ, հողէ գաւաթ:  
 Կոնծել, խմել:  
 Կօռտիկ, կարճ վերար-  
 կու:  
 Կուտ, գանկ:  
 Զ:  
 Հայ հօ, միջարկութիւն  
 Հահանջ, միջարկութիւն.  
 Հմէն, զամէն:  
 Հլ, յրան, ՏՃ. հայրան:  
 Հլ, օնած, հնձօղներու  
 նախընթաց:  
 Հէր, այր:  
 Հընթել, առնուլ 'ի  
 հուլթ:  
 Զ:  
 Զիւ ծիւ, հաւկիթ:  
 Զ:  
 Զնճրկել, նեղել:  
 Զամուկ, երկւորեակ:  
 Զան, վէգ  
 Զաթլէխ, բզբոնեալ:  
 Զենճոտ, աղոտ:  
 Զենճոտալ, ճենճերել:  
 Զօլտել, գլխատել:  
 Զէօղ, սատ:

Ճրպարուն : խայտա-  
 ր լէտ .  
 Ճրգմութիւն . Տճ . էօր-  
 սէլէթմէք .  
 Ճրգվաւ . ճրգնչաւ .  
 Ճրվաւ . պօռաւ :  
 Ճրկիկ . դրան փականք .  
 Ճրվոնեկ . անզգամ .  
 Ճրկուել . ցցվիլ , կայնիլ  
 Ճրմքել . սեղմուիլ .  
 Ճրճան . վարսաւոր .  
 Ճրրճնել . ջուր ցանել .  
 Ճրլօր . փոքր պուտուկ .  
 Ճիժ . երախայ .  
 Ճիկ վիկ . բացխըփիկ .  
 Ճեոջ . մեծ .  
 Ճիորով . հաղիւ հաղ .  
 Ճխթել . սղմել .  
 Ճոսթել . պատուել .  
 Ճուճուղիկ , թճչնիկ .  
 Ճուխտ . Ֆրոթ . դարև  
 կոճատ .  
 Ճութ . ողկոյզ .  
 Ճուխտակ , զոյգ .  
 Ճոռ . մէջ փոս .  
 Ճուիել , անխնայ քաղել .  
 Ճպերտք . ցաւած աչքի  
 աղտ .  
 Ճոռօթան . Տճ . օլուք :  
 Ճօպան . հաստ չուան .  
 Ճօկել զատել .  
 Մ .  
 Մանել . ոլորել :

Մաճար , վէճ , դաշինք :  
 Մատնիկ , մատանի :  
 Մատուկ , խոտմ :  
 Մաշտէնք , արդեօք :  
 Մաղրշկայ , հացեփի  
 գործիք :  
 Մարաք , արթանոց :  
 Մալաղի }  
 Մալաշի } տանձ :  
 Մաշիալ . Տճ . եաղլը  
 փաշավրայ :  
 Մաղտայ , ախորժակ :  
 Մալուլ , տրտում :  
 Մառան , շտեմարան :  
 Մանկեար , միթէ :  
 Մկայ , հիմայ :  
 Մաղմտալ }  
 Մըղրկտալ } տխրիլ :  
 Մանճկալ , սաճալալ :  
 Մայլել , զմայլիլ :  
 Մաթ մաթ , ապուշ ա-  
 պուշ :  
 Մաֆար , կարողութիւն  
 Մեյնէ , մեղմէ :  
 Մէկէլօր , միւս օր :  
 Մէրել , մակարդել :  
 Մըզմզտալ , ցրտէն ա-  
 սեղնատիլ :  
 Մընճել , լուել :  
 Մըտրըպ , գնչու :  
 Մամառն , կծու :  
 Մտխողել , մատնախոյզ  
 առնել :

Մըժ, մառտիսուղ:  
 Մոնթ, անապատի ըն-  
 ծայացու:  
 Մոռնուղէզ, ՏՏ. սալէպ  
 Մորթեղ, զենուը  
 Մնձրեղ, տե'ս մըրկեղ  
 Մոն, գէշ:  
 Մունճ, լուռ:  
 Մուժպանայ, չոր ծի-  
 րանէ շինուած կարե:  
 Մաճիկ, բոյսմ':  
 Մոթեղ, արամիը  
 Մրրէն, մինարէն:  
 Մրտիեղ, խոր քուն քը-  
 ներ:  
 Մրկեղ, այրիը  
 Մորմորիկ, մարմարեայ  
 Մօլ, դամբա.

Ն.

Նակեաստան, յան-  
 կարծաղէպ:  
 Նանիկ, օրօր:  
 Նազ տուզ, ծանր ծա-  
 խեղ:  
 Նախիր, անդեայք:  
 Նէճիր, որս:  
 Նըմուշ, նման:  
 Նըռնիկ, տանձ:  
 Նըք, հեծիւն:

Շ.

Շապիկեղ, շրջապատեղ:  
 Շակալ, կորտուած սօր:  
 Շավիոր, կորտուած սօր:

Շարտազուկ, դեղձ:  
 Շարան շարան, կարգ-  
 կարգ:  
 Շարմեղած, վայելագեղ:  
 Շըմոնեղ, ծալեղ:  
 Շըշկուեղ, շիթեղ:  
 Շլպիկեղ, իրարու վրայ  
 տալ:  
 Շիվար — շափարղայ .  
 տարակուսեալ:  
 Շիրախանայ, հնձան:  
 Շիւշտեմ, անշուշտեմ:  
 Շիրայ, նոր գինի:  
 Շիրեփ, մեծ գրկալ:  
 Շիկեղ, շալակեղ:  
 Շիւռայ, ժողովք, խոր-  
 հուրդ:  
 Շուշտակ, կանանց գըլ-  
 խու զարդ:  
 Շուռմուռ, ծածանում:  
 Շուրվայ, ՏՏ. թիրիթ:  
 Ո.  
 Ոժղը կախտի՞, ուժղ-  
 կ'հասնի':  
 Ուանկեազի, պարա-  
 պորդ:  
 Ողեայ, փորձանք:  
 Ուլնիկ, ուլունք:  
 Ուրուր, թռչուն:  
 Ուրուրոց, օրօրան:  
 Ումար, կեանք:  
 Ուշի, ուշը:  
 Օւնք, յօնք:

